

ՄԵՑ ԵՂԵՌՆ ՎԵՐԱԳՐԱԾԵՆԵՐԸ

Ի. Է. Սգապան

Ծննդապայրիցս դեպի
Տեր Զոր

Քաջունի Դարագյոզյանի հիշողությունները

ՀՏԴ 941(479.25):891.981-94
ՊՄԴ 63.3(2h)+84Դ-4
Ա 770

*Տպագրության է երաշխավորված Գյումրու
«Կումայրի» արգելոց-թանգարանի կողմից:*

*Գլխավոր խմբագիր Չայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի տնօրեն,
պատմական գիտությունների դոկտոր
Լավրենտի Բարսեղյան*

Ա 770 Ավագյան Ինգա. Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր:
(Քաջունի Ղարազյոզյանի հուշերը)
Գյումրի: Էլդորադո, 2004, 96էջ

*Աշխատությունը ներկայացնում է Մեծ եղեռնից հրաշքով փրկված փոքրաթիվ
այն հայերին, ովքեր դեզերեցին օտար ճամփաներով, սփռվեցին
աշխարհով մեկ դրսևորելով ապրելու ու հայ մնալու զարմանալի կամք:
Թուրքական յաթաղանից մազապուրծ հայերից մեկն է Ք.Թ. Ղարազյոզյանը,
որի հուշերն ու կենսագրությունն էլ ներկայացնում ենք:
Աշխատությանը կցված են ռուսերեն և անգլերեն ամփոփումներ:
Գիրքը նախատեսվում է պատմաբանների, աղբյուրագետների,
բանասերների, ազգագրագետների և ժողովրդագիտությանը
հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների, ինչպես նաև ուսուցիչների,
ուսանողների և դպրոցական բարձր տարիքի սովորողների համար:*

Ա $\frac{0503020913}{0127(01)2004}$ 2004թ.

ՊՄԴ 63.3(2Գ)+
84Դ-4

ISBN 99930-903-9-5

© Ի. Է. Ավագյան 2004

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2002թ.-ի դեկտեմբերին «Կումայրի» արգելոց-թանգարանի /ԿԱԹ/
արտոնությամբ նախածեռնեցինք Շիրակի մարզի, հատկապես Գյումրու
բնակչության մեջ, Մեծ եղեռնի ականատեսների թողած զրավոր և
իրեղեն աղբյուրների բացահայտման հետ կապված որոնողական
գիտարշավը: Այս գիտարշավը լի էր անակնկալներով, երբ պարզվեց,
որ կան արժեքավոր նյութեր, որ դեռ անծանոթ են հանրությանը:
Հատկապես ուշագրավ են Քաջունի Գարակեօզեանի /Ղարազյոզյան,
Կարազյոզյան/ «Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր» վերնագրով
հիշողությունները և այն եզակի լուսանկարները, որոնք ունեն շուրջ
հարյուրամյա պատմություն և գալիս են փաստագրելու և լրացնելու
Մեծ եղեռնի ականատեսի հիշողությունները: Պահպանված են
հիշողությունների երկու օրինակներ. առաջինը «Ծննդավայրիցս դեպի
Տեր Ջոր», շուրջ քառասուն մեքենագիր էջից բաղկացած և անավարտ
աշխատություն է, որը այս պահին գտնվում է Լեհաստանում և, մեզ է
հասել ինտերնետի միջոցով, ինչի համար մեր խորին շնորհակալություն
ենք հայտնում Քաջունի Ղարազյոզյանի թոռնուհի Գոհար Մանուկյանին:
Գոհարը և ամուսինը դասախոսում են Կրակովի գյուղակաղնիայում:
Հենց նա էլ աշխատությունը տարել է իր հետ Լեհաստան, ինտերնետի
միջոցով հանրությանը ծանոթացնելու համար /տես Մեծ եղեռն, Քաջունի
Կարազյոզյանի հիշողությունները, albom-girk, www.ARMENIA.PL կամ
HTTP// ARMMUSIK.FREE.FR/: Երկրորդ հուշագրությունը, որ
Ք. Ղարազյոզյանը գրել է 1968-ին, բաղկացած է ընդամենը յոթ
մեքենագիր էջից և կրում է «Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին
/հուշեր Մեծ եղեռնի օրերից/» խորագիրը: Նշենք, որ երկու
հուշագրությունների միջև այուժեի հիմնական նմանություններից բացի,
կան նաև տարբերություններ: Մեր խնդիրն ենք համարում
հուշագրություններից առաջին տարբերակի խմբագրումը և լրացումը
երկրորդ տարբերակի օգնությամբ: Աշխատությունը ներկայացվում է
մասնակի ոճական միջամտություններով, հիմնականում այնպես,
ինչպես գրել է հեղինակը, անկախ ձեռագիր հատվածների վերծանման
հետ կապված դժվարություններից: Մեր խոսքը՝ մեջբերումներ,
լրացումներ, մեկնաբանություններ, բերված են տողատակերում:
Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում Ք. Ղարազյոզյանի որդուն՝
Հակոբ Ղարազյոզյանին, և նրա քույրերին՝ Ջենֆիրային, Քարմիլեին և
Ժաննային լուսանկարները, հուշերի սեղմ տարբերակը, պահպանված
ձեռագիր հատվածները, Քաջունու 1978-ի փետրվարի 16-ին գրած
ինքնակենսագրությունը, Քաջունուն ուղարկված Շահնազար
Քեօբահեանի, Համեստուհի Սահակյանի և Աղրինե /Ֆարիե/ Տալիի
նամակները տրամադրելու համար: Այս և մեր կողմից գրի առնված

Քաջունու՝ իր երեխաներին պատմած տեղեկություններով մենք կփորձենք «Սեբաստիայի որբանոցից՝ մայր Հայաստան, ավագ քրոջ որոնումն ու հայտնաբերումը» վերնագրի տակ ի մի բերել և ամփոփել Բ. Ղարազյոզյանի անցած կյանքի ողբերգական ճանապարհը՝ այս կերպ իր տրամաբանական ավարտին մոտեցնելով «Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր» վերնագիրը կրող անավարտ մնացած հիշողությունները: Մեր աշխատությունում մենք կփորձենք վեր հանել Մեծ եղեռն վերապրած մեր հերոսների ներաշխարհը, հոգեկան ապրումները, որոնք տասնամյակներ շարունակ հետապնդել են նրանց և արտացոլվել են իրենց միմյանց գրված նամակներում: Տողատակերում ամփոփված այլ հեղինակների հուշագրություններից բերված հատվածները արժեքավորում են մեր աշխատության թե՛ գեղարվեստական, թե՛ վավերագրական կողմը, իսկ գիտական գրականությունից վերցված մեջբերումները մեկ անգամ ևս փաստագրում և ընդհանրացնում են հայոց ցեղասպանության ողբերգական էջերը: Ի նկատի ունենալով այս՝ մեր աշխատությունը կարելի է դասել փաստավավերագրական բնույթի աշխատությունների շարքին: Մեր կողմից օգտագործված գրականության մեջ առանձնահատուկ նշենք Շահնազար Քեօբախեանի «Յուշեր ու նիշեր» աշխատությունը, որտեղ հատուկ հիշատակվում է «Գարակեօզեան Քաջունու պատումը», և Բ. Ղարազյոզյանի հիշողությունների համառոտ ակնարկը՝ «Վերածնունդ» վերնագրով գրի առնված Լենա Ղուկասյանի կողմից ու հրատարակված «Բանվոր»* թերթում:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «ԱրմենՏելի» Շիրակի մարզի գլխավոր ճարտարագետ Էդուարդ Ավագյանին՝ գրքի հրատարակությանը սատարելու համար նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն՝ պատմական գիտությունների դոկտոր Լ.Բարսեղյանին, «Կումայրի» արգելոց-թանգարանի տնօրեն Պ.Զաքարյանին և գլխավոր ֆոնդապահ Ս.Տեր-Մարգարյանին՝ աջակցություն ցուցաբերելու համար: Հուսով ենք, որ միայն այս աշխատության հրատարակությամբ չէ, որ սահմանափակվելու ենք, քանի որ Գյումրիում կան շատ ու շատ այլ ուշագրավ նյութեր, որոնք գալու են լրացնելու հայոց պատմության այդ եղբերական էջերը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք համարում գիրքը լույս ընծայել «Մեծ եղեռն վերապրածները» մատենաշարով: Մեր ցանկությունն է, մեկ անգամ ևս հանրության ուշադրությունը սևեռել քսաներորդ դարի սկզբի մեծագույն ոճրագործություններից մեկի վրա:

Նվիրում ենք Մեծ եղեռնի 90-ամյակին:

Ինգա Էդուարդի Ավագյան

Հիշողություններ Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր

...Հունիսի երկուսին՝ երկուշաբթի վաղ առավոտյան, հայրս՝ գնաց քաղաք՝ իր ամենօրյա աշխատանքին: Մայրս այդ օրը շատ տխուր ու անհանգիստ էր, մի գործի վրա երկար նստել չէր կարողանում, անվերջ ներս ու դուրս էր անում: Մայրիկին մենք միշտ ուրախ, ժպտերես էինք տեսել, այդ իսկ պատճառով նրա՝ այդ օրվա մեզ անսովոր վիճակը շատ տարօրինակ էր թվում. ինքը մեզ ոչինչ չէր ասում, և մենք՝ փոքրերս, համարձակություն ունեի՞նք նման բաների մասին մեծերին հարցնելու. ավելի ճիշտ, մենք նման բաներից շատ չէինք էլ հասկանում: Երեկոյան նա եկավ բակ ու հիշեցրեց. «Տղա՛ս, ժամանակին կգնաս հայրիկին դիմավորելու, տես, խաղով չտարվես ու մոռանաս»:

Ամեն օր՝ երեկոյան, գնալ քաղաքի որոշ ճանապարհ և հայրիկիս դիմավորելը ինձ համար հաճելի սովորույթ էր դարձել:

Մեր թաղը շուկային անմիջապես կից էր, որտեղից անցնում էր քաղաք տանող ճանապարհը, հետո, շուկայի վերջավորությունից, մեր թաղի ծայրամասից թեքվում, անցնում էր հայկական գերեզմանատան պատի կողքով, կրկին թեքվում, անցնում մրգատու պարտեզների ու բարդիներով շրջապատված որոշ տարածություն. այդ մասը ողջ ճանապարհի ամենագեղեցիկ շրջանն էր, և մենք՝ երեխաներս, ամառվա օրերի մեծ մասն անց էինք կացնում ճանապարհի այդ շրջանում: Այստեղից ճանապարհը դուրս էր գալիս բաց տարածություն, որտեղ կար մի բարձունք. բարձունքից ներքև երևում էր ոլորապտույտ ճանապարհի որոշ մասը³: Հենց որ հայրիկս էլի հետ միասին երևում էր, ես, բարձունքից ուրախ-ուրախ թռչկոտելով, իջնում էի ներքև ու միանում նրան. իմ մանկական կյանքի ամենահաճելի պահերից էր այդ հանդիպումը: Զգում էի նաև հայրիկիս հոգեկան հրճվանքը. և այսպես, որքան հիշում եմ, ամեն օր միասին տուն էինք վերադառնում:

Այդ օրվա մայրիկիս անսովոր վիճակը, բակ գալը և հայրիկին դիմավորելու հիշեցումը, որը առաջին անգամ էր, իմ մեջ հետաքրքրություն առաջացրեց և, չգիտեմ ինչու, հայրիկիս շուտ տեսնելու փափագ զգացի: Խաղը արագ դադարեցրի և ինձ հասակակից հորեղբորս տղայի՝ Կարապետի հետ այդ օրը ժամանակից շուտ հոգեցնեք հայրիկիս դիմավորելու: Հասանք մինչև բարձունք. երկար սպասելուց հետո ոչ միայն հայրիկը չերևաց, քաղաքից եկող ոչ մի ճանապարհորդ չերևաց: Քանի որ ուշ էր արդեն, տխուր ու հիասթափված վերադարձանք ետ: Հեռվից թաղի եզրին, նկատեցինք իրար սեղմված

*Լ. Ղուկասյան, «Վերածնունդ», Բանվոր, Լենինական, թիվ 270 (17.554), 21 նոյեմբեր 1987, էջ 3-4:

և գլխահակ կանգնած երկու քույրերիս, որոնք մեր վերադարձին էին սպասում: Երբ մոտեցանք, նրանք եկան մեզ ընդառաջ, լալով փարվեցին մեզ ու ասացին, որ հայրիկը այլևս չի գալու. մինչ այդ լուր էր ստացվել, որ քաղաքում այդ օրը կեսօրից հետո, ոստիկանները և սվինավոր զինվորները պաշարել են հայոց ազգապատկան հին ու նոր երկու տաշխանները⁴, դռների առջև պահակներ կանգնեցրել ու շենքերի ելքն ու մուտքը արգելել:

Երեք հարյուր հայ վաճառականներ խանութներ ունեին այդ շենքերի մեջ⁵. Նրանք բոլորն էլ բարեկեցիկ, հարգված մարդիկ էին: Մի քանի ժամվա խուզարկությունից հետո բոլորին շարք էին կանգնեցրել և տարել բանտ. նրանց մեջ էր և հայրս...

Մեր հայկական փողոցներով անցնելիս ոչ ոքի չտեսանք. լսելով քաղաքում հայերի մասսայական ձերբակալության լուրը՝ բոլորը փակվել էին իրենց տներում⁶: Երբ տուն մտանք, այնտեղ բազմաթիվ մարդիկ էին հավաքված. հորեղբորս ամբողջ ընտանիքը, որոնք մեզ հետ ապրում էին նույն բակի մեջ, հարևան շատ կանանց հետ միասին շրջապատել էին մորս և մխիթարում էին մեզ: Վերջում եկավ հեռավոր թաղում ապրող մեծ հորաքույրս: Նրանք բոլորը եկել էին մեր վիշտը կիսելու: Մայրս լաց լինելով պատմում էր. «Երազս իրականացավ, սիրտս վկայում էր, որ մեր տանը վատ բան պիտի լինի, և ահա, երազս իրականացավ»: Հետո մայրիկը պատմեց, թե վերջին ժամանակներս, հայրիկը քաղաքից տուն վերադառնալիս խիստ մտահոգված էր լինում. երեկոյան մենակ մնալիս նա պատմելիս է եղել թուրքերի բացարձակ սանձարձակությունների մասին հայերի նկատմամբ. հայ ընտանիքների գիշերային խուզարկություններ, կրկին ձերբակալություններ: Ասել է նաև, որ մի շարք ազգային գործիչներ արդեն հրապարակից քաշված, հանրության մեջ չեն երևում⁷, իսկ ոմանց խանութները փակված են մնում: Թուրքերը արդեն բացարձակ թշնամու աչքերով են նայում հայերին և վախ կա, որ հայերի նկատմամբ ինչ-որ վատ բան է ծրագրվում, իսկ թե երբ և ինչ չափի, հայտնի չէ: Երկու օր առաջ հայրս ասել է, թե վարդապետին⁸ բռնել տարել են և այլևս բաց չեն թողել:

Այս բոլորը լսելով մայրս մտահոգված քնել է և վատ երազ տեսնելով՝ առավոտյան համարձակվել է հորս զգուշացնել, որ քաղաք չգնա, մնա տանը և իր տան գործերով զբաղվի: Կանանցից մեկը հարցրեց, թե ի՞նչ է պատասխանել հայրս մորս խնդրանքին: Մայրս ասաց. «Դուք չգիտեք Թորոսին, նա իր գործի տեր, սնտոխա-պաշտությունից հեռու մարդ է. «Եիշտ ես ասում, կմիկ, բայց քաղաք գնալով և չգնալով ինչ կփոխվի, ավելի վատ, եթե տեսնեն խանութս փակ է, իմ հանդեպ նույնպես կասկած կունենան, և վերջապես ինչ որ պիտի լինի, կլինի, այստեղ թե այնտեղ, նշանակություն չունի», - այս ասելով նա ճանապարհ ընկավ», - լալով շարունակեց իր պատմությունը մայրս:

Հետո մայրս դարձյալ ողբալով ավելացրեց, որ նրա ետևից թաքուն գնացել է մինչև թաղի ծայրը, կանգնած նայել մինչև գերեզմանատան պատի տակով թեքվելը և զուշակել, որ այլևս երբեք չի տեսնելու իր ամուսնուն:

Կանայք մայրիկիս ու մեզ հորդորում էին շատ չանհանգստանալ. «Երեխաները մեղք են, քույրիկ, ձեզ են նայում, նրանք էլ են լաց լինում, բան չկա, պատերազմ է, կառավարությունը փողի, միջոցների շատ կարիք ունի, հարուստ հայերին հավաքել են, որպեսզի նրանցից ավելի փող, հագուստեղեն, կոշիկեղեն առնեն, կուտան և բաց կթողնեն», - ասում էին նրանք: Կային մեծահասակ կանայք, որոնք 1896 թ. դեպքերը⁹ իրենց մորթու վրա զգացել էին, թուրքերի խժոժություններն ու ներկա դեպքերի ծանրությունը լրիվ հասկանում էին, գլուխները տրտմորեն օրորում և այս բոլորի մեջ տեսնում էին վատ բաներ: Ժամանակը ուշ լինելու՝ պատճառով մեզ փոքրերիս, հանգստացրին և առաջնորդեցին քնելու: Առավոտյան, երբ գարթնեցի, մայրս արդեն ոտքի վրա էր. պատրաստվում էր քաղաք գնալ հայրիկին բանտում տեսնելու: Ինձ էլ իր հետ վերցրեց, և մենք երկուսով դուրս եկանք տանից, բռնեցինք քաղաք տանող ճանապարհը: Մոտ կես ժամվա ոլորապտույտ այդ ճանապարհը անցում էր լեռնանցքի միջով, և այդ պատճառով քաղաքը հեռվից չէր երևում մինչև ընդհուպ նրան մոտենալը: Կես ճանապարհը հագիվ էինք հասել, երբ մեր դեմ դուրս եկան քաղաքից շտապ-շտապ եկող ճանփորդներ, որոնք մեր կողքով անցնելիս զգուշացրին, որ քաղաք չգնանք. «Այնտեղ հայերին մորթում են» /երմենիլերին քեսիեորլար/: Թուրքերեն այդ երկու բառից բաղկացած նախադասությունը առաջին անգամ լսեցի, որն այդ օրվանից ընդմիշտ մնաց իմ հիշողության մեջ: Այս սարսափելի լուրը լսելուց մենք մնացինք տեղում քարացած, չգիտեինք ինչ անել, քաղաք գնալ, թե՞ ետ դառնալ: Մի պահ մոռանալով հայրիկի բանտարկված լինելը՝ կանգնած մտածեցինք. ողջ հայությանը սպառնացող վտանգը մեր աչքի առաջ ունեցանք ու չգիտեինք ինչ անել: Եթե իրոք քաղաքում արդեն սկսվել է հայության մասսայական կոտորածը, ապա այն չի սահմանափակվի քաղաքով, այն կգործադրվի քաղաքից դուրս, ամեն տեղ, զուցե արդեն մեզ մոտ Թամզարայում էլ սկսվել է այդ ոճիրը: Եվ ահա, մայրս այդ մտավախությամբ մի պահ մնաց լուռ և անելք վիճակում ու հանկարծ ինչ-որ մի բան մտաբերելով՝ արագ ձեռքս բռնեց. «Քալե, տղաս, շուտ տուն հասնինք, այնտեղ չոջուխները /փոքրիկ երեխաները/ մեղք են, մինակ են, ինչ որ պիտի լինի, թող միասին լինենք»: Մեծ արագությամբ հասանք տուն. քույրերս ու եղբայրներս լալով մեզ ընդառաջ վազեցին ու փարվեցին մայրիկիս: Նրանք ուրախ էին, որ մենք ապահով տուն էինք վերադարձել, քանի որ լսել էին քաղաքում տեղի ունեցող դեպքերի մասին: Դրսում ոչ մի հայ չէր երևում, նրանք բոլորը քաշվել էին իրենց տները, թաղամասում միայն երևում էին երեխաներ, որոնք ծնողների

պատվերով դուրս էին գալիս՝ հարևաններից մի բան իմանալու առաջադրանքով: Մեր տանից ես ու Կարապետն էինք դուրս գալիս մի բան իմանալու համար. մենք ավելի համարձակ էինք, գնում կանգնում էինք շուկայի անկյունում, որպեսզի տեսնենք, թե այնտեղ, ոստիկանատանը ինչ է տեղի ունենում: Ոչ մի բան նկատելի չէր, միայն դիմացի ոստիկանատան ելքն ու մուտքը հիմա ավելի շատ էր. մարդիկ արագ-արագ գալիս ու գնում էին, ինչ-որ անսովոր բաներ էին տեղի ունենում. մեզ հայտնի չէր, թե ինչ է տեղի ունենում: Եվ այսպես, օրվա մեջ մի քանի անգամ մենք դուրս ու ներս էինք անում մի բան իմանալու և մեր կասկածները փարատելու համար: Արտաքուստ ոչ մի վատ բան չէր նկատվում, միայն հայերը քաշվել էին իրենց տները, և նրանց խանութները փակ էին: Առաջին օրն անցավ առանց որևէ միջադեպի: Երեկոյան, երբ մթնեց, մեր կասկածները սաստկացան, և վախը շատացավ: Բոլորս հավաքվեցինք սենյակներից մեկում՝ վառելիք փոքրիկ ճրագը: Եթե լույսի այդ փոքրիկ պատառիկն էլ չլիներ, որով հազիվ էինք իրար տեսնում, ապա վախը մեզ վերջնականապես կսարսափեցներ: Աչքներս ու ականջներս լարած նայում էինք պատուհանից դուրս՝ որևէ շուկ կամ շարժում տեսնելու և լսելու համար: Մեզ թվում էր, թե որտեղ որ է թուրքերը՝ զինված ամեն տեսակ գործիքներով, հարայ-հրոցով պիտի ներխուժեն հայերի տները և վերջ տան ամեն ինչին: Օրհասական այդ պահերին մեր տան վիճակը ավելի սարսափելի էր, քանի որ մեր տանը տղամարդ չկար: Ընդամենը երեսունվեց տարեկան, վեց երեխաների տեր մայրիկն էր, որ պիտի դիմագրավեր սպասվող ամեն տեսակ փորձությունների, որոնցով մենք արդեն շրջապատված էինք. մենք բոլորս նրան էինք ապավինել: Առաջին «ապահովական» միջոցները, որ ձեռնարկեցինք, այն էր, որ տան եղած առավել արժեք ունեցող ապրանքները սկսեցինք պահել ավելի աննկատ տեղեր. մայրս նկատի ուներ անցյալում թուրքերի հաճախակի խժոժությունները, թալանը: Նա կարծում էր, որ կկարողանա զոնե թալանից գերծ պահել որոշ արժեքավոր բաներ: Այդ միջոցին, չգիտենք որտեղից որտեղ նա դուրս բերեց մեկ հրացան և մեկ ատրճանակ¹⁰, որոնց գոյության մասին մենք փոքրերս, ոչինչ չգիտեինք: Ձենքը հայերը շատ դժվարին ճանապարհով ձեռք էին բերել ինքնապաշտպանության համար ելնելով անցյալի փորձից, երբ թուրքերը հանկարծակի հարձակվում էին անգն հայերի վրա, թալանում, սպանում առանց դիմադրության: Դիմա, երբ կրկին մեզ, թուրքերի կողմից վտանգ սպառնող այս պահին, ինքնապաշտպանության համար այդ զենքերը գործածողը հայրս չկար, ապա նրանց գոյությունը առավել վտանգավոր համարելով տան մեջ, մայրս դրանք շատ մեծ զգուշությամբ գցեց զուգարանը, որից հետո մենք թեթևացած շունչ քաշեցինք. այդ գիշերը նույնպես անվտանգ անցավ: Առավոտյան կրկին դուրս եկանք մի բան իմանալու: Մենք շուկայի անկյունում կանգնած էինք, հանկարծ հեռվից

երևացին իրար կապված մի խումբ մարդիկ ոստիկանների ուղեկցությամբ: Ոստիկանատանը ինչ-որ հրամաններ ստանալով՝ կապված հայերին /ուր հոգի/, որոնց մասին մենք ոչինչ չգիտեինք, շուկայի միջով տարան, կանգնեցրին հայկական գերեզմանատան պարտեզի պատի դիմաց և զնդակահարեցին մեզանից հիսուն մետր հեռավորության վրա, որտեղից մենք կանգնած դիտում էինք: Ես առաջին անգամ տեսա մարդկանց զնդակահարում, առաջին անգամ, թե մարդը մարդուն ինչպես է սպանում: Նրանք միանգամից օրորվեցին և թափվեցին իրար վրա: Դետո հանելով նրանց շորերը՝ լցրին գերեզմանատանը նախօրոք փորված փոսի մեջ: Նրանցից մեկը, ըստ երևույթին մահացած չլիներ, զգալով, որ հող պետք է լցնեն վրան, ելավ ու արագ փախավ պարտեզների միջով. հանկարծ ստացած վերքի՞ց, թե՛ իրեն հետապնդողների զնդակից ընկավ գետնին:

Մարդիկ կույ էին եկել, կանայք լաց էին լինում այդ սարսափելի տեսարանից, ոմանք բարձրաձայն մտածում էին. «Ի՞նչ հանցանքի համար նրանց հետ վարվեցին այդպես, մեղք չէ՞ին, աստուծո՛ւմ չէ՞ին վախճար», - հայ քրիստոնյա էին, ահա նրանց հանցանքը, ինչու մեր աչքերի առաջ, այսքան մոտ, զոնե մի քիչ հեռու տանեին, մենք էլ չտեսնեինք, առանց դրան էլ արդեն այս քանի օր էլ ինչ վիճակի ենք:

Դանկարծ մորս ծայրը լսեցի, որը ողորկված էր լացով. «Դապա մերոնք ինչպե՞ս դիմացան: Երեք օր առաջ երեք հարյուր հայեր ձերբակալեցին քաղաքում, բանտ նետեցին և նույն գիշերը կացիններով սպանեցին¹¹: Սպանել-սպանել էր, զոնե ասոնց պես դուրս տանեին, զնդակահարեին: Ի՞նչ էր մեղքերնին. վախ-վախ», հետո լռեց: Մի պահ մոռացել էր, որ ես կողքին էի գտնվում: Մեզանից գաղտնի էր պահում հորս ողբերգական մահը, որը լսել էր ձերբակալության հաջորդ օրը: Ջգալով իմ վիճակը՝ գլուխս սեղմեց կրծքին. «Քալե, տղաս, տուն երթանք, պզտիկները մեղք են, լաց կլինեն»: Բոլորը ցրվեցին իրենց տները:

Այդ օրը գրեթե ոչ ոք չհամարձակվեց տանից դուրս գալ: Օրը և գիշերն անցավ առանց որևէ միջադեպի: Առավոտյան կրկին դուրս եկանք օրվա կացության մասին մի բան իմանալու: Շուկայի մոտ նկատեցինք, որ թուրքերը մեծ աղմուկով, զայրացած իրար հետ խոսում էին ինչ-որ դեպքի մասին: Մենք՝ փոքրերս, թուրքերեն չիմանալու պատճառով, այս խոսակցությունից ոչինչ չհասկացանք: Այնքանը մեզ հայտնի դարձավ, որ խոսակցությունը հայերի մասին էր: Վազեցինք տուն՝ եղելության մասին մեծերին տեղյակ պահելու: Մինչ այդ, հայտնի էր դարձել, որ քաղաքի հայերը նույն գիշեր բարձրացել են հինավուրց բերդը և այնտեղից ինքնապաշտպանական կռվի են անցել թուրքերի դեմ: Մեզ համար ուրախալի էր այն, որ զոնե այդ ձևով հայերը իրենց կյանքը կարող են պաշտպանել: Դժբախտաբար մենք Թամզարայի հայերս, այդ ամել չեինք կարող. ավելացավ նաև վախը, որ դրանից թուրքերը ավելի կկատարեն, և քաղաքի հայերի վրեժը կլուծեն մեզանից¹²: Եվ ահա այդ

մտախոսության մեջ էինք, երբ հայկական թաղերը ներխուժեցին ոստիկանական ջոկատներ: Նրանք մտան բոլոր տները և ձերբակալեցին տասնհինգ տարեկանից բարձր տղամարդկանց¹³, տարան ոստիկանատուն: Կանայք լալով դուրս եկան, լցվեցին փողոցները՝ տեսնելու, թե ուր են տանելու և ինչ են անելու իրենց հարազատներին: Մենք փոքրերս, շուկայի անկյունում կանգնած, ավելի մոտիկից էինք տեսնում դիմացի ոստիկանատունը: Երբ բոլորին ներս տարան, դրսում կանգնած սվինավոր ոստիկանը կարգադրություն ստացավ ներսից և բարձր ծայրով պահանջեց դիմացի թուրք խանութպանից մի քանի կապոց պարան ուղարկել: Մենք հասկացանք, որ պարաններով պետք է կապեն ձերբակալվածներին: Եվ, իրոք, ներսից հերթով դուրս բերեցին նրանց չորս-չորս իրար կապված: Շուրջ երեք հարյուր հոգի կլինեին: Շարքով, հրացանավոր ոստիկանների ուղեկցությամբ, շուկայի միջով, գլխահակ, դանդաղ քայլելով, անծայն անցան մեր բոլորի աչքերի առջևով¹⁴: Նրանցից շատերը սիրտ չէին անում բարձրացնելու գլուխները և վերջին անգամ նայելու իրենց հարազատներին: Մենք հայացքով նրանց ուղեկցեցինք մինչև պարտեզներով ու բարդիներով շրջապատված քաղաք տանող ճանապարհը, որտեղից նրանք մեզ այլևս տեսանելի չէին: Բոլորս մնացինք կանգնած մեր տեղերում՝ հուսալով իմանալ, թե ուր տարան մեր հարազատներին. իրականությունն այն է, որ Թամզարայի 280 հայ ընտանիք¹⁵ մնացին առանց տղամարդու: Հայերը մնացին անգլուխ: Հիմա՝ այդ ծանր պահին, չկար մեկը, որ մխիթարական մի խոսք ասեր, առանց բացառության, բոլորը կորուստ ունեին, և այդ ծանր վշտի պահին, ոչ ոք բարձր ծայրով չէր համարձակվում լաց լինել: Հիմա դա նույնպես հանցանք էր համարվում: Երկար սպասումից հետո տեսանք ուղեկցող ոստիկանների վերադարձը: Վերջապես թուրք ակնատեսներից իմացանք, որ նրանց քաղաքի ճանապարհի վրա ամենամոտ ձորի մեջ, ամեն տեսակ գործիքներով տանջամահ են արել նախօրոք այնտեղ ուղարկված ոճրագործների ձեռքով: Ճշմարտությունն իմանալով բոլոր հայերս քաշվեցինք մեր տները: Այդ գիշերը մեր ամենավերջին ու ամենատագնապալի գիշերը եղավ հայրական տների մեջ:

Առավոտյան դարձյալ դուրս եկանք օրվա կացության մասին մի բան իմանալու: Մի խումբ ոստիկաններ մուսնտիկի ուղեկցությամբ մտան հայկական թաղերը՝ ազդարարելով. «Բոլոր հայերը, առանց բացառության, փակեն իրենց տները և գան եկեղեցի կամ ամենամոտ գտնվող վանքը¹⁶. ում որտեղ հարմար է»: Չիմանալով ինչի համար են մեզ տանում եկեղեցի կամ վանք և տանից ոչ մի բան չվերցնելով, բոլորս անխոս ենթարկվեցինք: Բարձր պարիսպներով շրջապատված եկեղեցու մուտքի մոտ կանգնած ոստիկանը բոլորին ստուգում էր. տղամարդ էր որոնում: Մայրերից ոմանք իրենց մեծ տղաներին կանացի շորեր էին հագցրել. այդպիսիներից մի քանիսին իայտնաբերեցին և պահեցին

իրենց մոտ¹⁷: Այդպես մենք ամբողջ օրը մնացինք եկեղեցու բակում առանց իմանալու, թե ինչ է լինելու մեր վերջը, կամ ինչ են անելու մեզ հետ: Աշխատող, մեզ կերակրող տղամարդիկ այլևս չկային, նրանց անխտիր կոտորեցին հայ լինելու պատճառով. մենք նույնպես հայ էինք, ուրեմն ինչու՞ մեզ պետք է խնայեն. պարզ է, որ մեզ նույնպես պետք է կոտորեն, բայց ե՞րբ, ինչպե՞ս. այդ էր մեզ մտահոգող հարցը: Երեկոյան ոստիկանները եկան, մեզ լցրին եկեղեցի ու դուռը փակեցին: Թե այնտեղ ինչպիսի վիճակ ստեղծվեց, նկարագրել հնարավոր չէ...

Մթության մեջ ամեն ընտանիք իրար չկորցնելու համար սեղմված կուչ եկավ՝ մահվան սարսափով բռնված: Ներսում գտնվող սրբապատկերները, անսովոր առարկաները ևս ու դող էին առաջացնում. բոլորս մտածում էինք, որ ասիա այստեղ՝ աստծու տան մեջ, բոլորիս կկոտորեն մորթելով կամ վերկից քարեյուղ լցնելով կայրեն՝ վերջ տալով Թամզարայի հայությանը: Ողբերգական այդ պահին մեր միակ հույսը Աստվածն էր, որի համար այնքան ջերմեռանդ աղոթում էինք բոլորս՝ մեծ թե փոքր, ամենքը իր տեղում:

-Տեր Աստված, փրկի՛ր մեզ այս փորձությունից:

-Սուրբ Կարապետ, օգնության հասի՛ր, ամուսինդ մեռնեն, գուցե ես երբևէ մեղք եմ գործել, խնայի՛ր այս անմեղ երեխային:

-Աղոթի՛ր, զավակս, դու անմեղ ես, Աստված քո ծայրը ավելի շուտ կկսի, կխղճա:

-Սուրբ Մայր Աստվածածին, դու մայր ես, երեխայիդ գրկած մեզ ես նայում, չե՞ս տեսնում մեր վիճակը, մեր երեխաները քոնը չե՞ն:

-Վա՛յ, երեխաս մահացավ, հասեք, օգնեք, ջուր բերեք: Չե՞ք տեսնում վիճակս, հայ քրիստոնյա չե՞ք:

Ինչպես օգնեինք, երբ մութ էր, և ջուր չկար: Մի ծեր կին աղոթք անելիս հանկարծ գլորվեց գետին և այլևս չբարձրացավ. սիրտը պայթել էր: Այսպես լացով ու աղոթքով անցավ սարսափելի գիշերը: Լուսաբացին ոստիկանները եկեղեցու դուռը բաց արեցին և մեզ արտոնեցին բակ դուրս գալ: Պարկերով հաց /սոմին/ բերեցին, բաժանեցին մեզ: Այդ երևույթը մասամբ հանգստացրեց մեզ. եթե մեզ հաց են տալիս, ուրեմն մենք պետք է ապրենք: Այսպես ամեն օր մեզ երեկոյան փակում էին եկեղեցում, առավոտյան դուրս հանում ու հաց բաժանում: Մինչև երբ դա պետք է շարունակվեր, մենք չգիտեինք:

Մի օր մայրս մոտեցավ դռանը կանգնած ոստիկանին, որը մեզ ծանոթ էր, խնդրեց թույլ տալ ինձ ու հորեղբորս տղային՝ Կարապետին, տուն գնալ հաց և ուտելիք բերելու: Թույլատրեց: Ամայացած փողոցներով հասանք տուն, շրջեցինք բոլոր սենյակները. ամեն ինչ տեղում էր, միայն կենդանություն չկար: Ուտելիք վերցնելուց հետո՝ դուրս գալուց առաջ, մտանք հայրիկիս աշխատասենյակը, այստեղ նույնպես ամեն ինչ տեղում էր՝ ներկի ամաններ, ներկված, չներկված, օսլայած թելեր¹⁸: Այս բոլորի հետ նա գործ էր ունեցել մինչև ուշ գիշեր: Այստեղից էր ինձ բարձր

ծայնով կանչում, աշխատանք հանձնարարում, կողքին էր պահում, գրուցում հետս: Մեծ հույսեր էր կապում ինձ հետ, որպես ապագա իր օգնականի, փոխարինողի, շատ էր սիրում ինձ, երես էր տվել: Մտաբերելով այս բոլորը ես նոր զգացի, որ կորցրել եմ հորս ընդմիջտ, սիրտս լցվեց, և ես լաց եղա: Այնուհետև վերցրինք մի քիչ պանիր, յուղ, չորացած լավաշ, ինչպես նաև մի քիչ մանր դրամ, մայրիկի բացատրած տեղից¹⁹: Բակից դուրս գալուց վերջին հայացքով ընդգրկեցինք մեր հայրական տունը, որտեղ անցել էր մեր ուրախ ու երջանիկ մանկությունը: Լուռ ու թաց աչքերով անցանք մեզ այնքան հարազատ թաղի ամայացած փողոցներով ու հասանք եկեղեցի: Չեմ հիշում, մեր բերած ուտելիքներից որ մեկին ինչ չափով բաժին հասավ:

Քսաներեքերորդ օր էր, որ գտնվում էինք եկեղեցում: Հյուսիսում ու հոգնել էինք այդ ոչ մարդկային վիճակից, ինչպես նաև կամա-ակամա հաշտվել այդ անորոշ կացության հետ: Մեզանից շատերը, հատկապես ծերերն ու երեխաները, արդեն հիվանդ վիճակում էին, ամբողջ օրը մնում էին պառկած, ի վիճակի չէին վեր կենալ և բակ դուրս գալ:

Այդ գիշեր դրսից մեզ անսովոր աղմուկ լսվեց, որը մեզ բոլորիս ոտքի հանեց: Հրաձգության ծայրերը, աղմուկ-աղաղակը մեզ այնքան մոտ էին լսվում, որ թվում էր՝ ահա ուր որ է ներս կմտնեն²⁰: Մենք մտածեցինք, որ դա ամեն տեսակ գործիքներով զինված խուժանն է, որը Թամզարայի տները թալանելով եկել հասել է եկեղեցի՝ մեզ հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու: Այս միտքը այնպես ամուր մտավ մեր գլուխը, որ հավանական մահը մենք շատ մոտ զգացինք: Բոլորս իրար փարված լաց էինք լինում, սրբերի առաջ կրկին ու կրկին աղոթում ու աղերսում: Լուսադեմին աղմուկն ու հրաձգության ծայրերը քիչ-քիչ մարեցին ու դադարեցին: Նորից տիրեց մեռելային լռություն, կարծես ոչինչ տեղի չէր ունեցել: Ապրելու հույսը կրկին մտավ մեր մեջ. այն վերագրեցինք աստծու օգնությանը: Եկեղեցում ապրած օրերի ամենասարսափելի գիշերը այդ գիշերն էր: Դա եղավ մեր այնքան սիրելի ծննդավայր Թամզարայում ապրած վերջին գիշերը²¹:

Լուսաբացին ոստիկանները բացեցին եկեղեցու դուռը և մեզ բոլորիս անխտիր դուրս հանեցին: Եկեղեցու բակից անցանք շուկայի միջով: Թուրք բնակչությունը շարվել էր շուկայի երկայնքով, նրանք եկել էին մեր վիճակը տեսնելու, մեզ ճանապարհ դնելու:

Թուրք մեծահարուստ Մուստաֆա էֆենդիի խանութի առջևից անցնելիս նրա կինը մոտեցավ մեզ և կես թուրքերեն ու կես հայերեն դիմեց մորս. «Բաջի, ես չգիտեմ, թե ձեզ ուր են տանում /նա լավ գիտեր, թե մեզ ուր են տանում. ամուսինը կառավարության անդամ էր/: Լավ կլինի այդ երկու ջահել աղջիկներիդ /խոսքը երկու մեծ քույրերիս մասին էր/ թողնես մեզ մոտ, երբ վերադառնաք, կրկին ձեզ կհանձնենք»²²: Մայրս կտրականապես մերժեց՝ ասելով, թե ուր որ մեզ են տանում, թող իրենք էլ մեզ հետ լինեն. «Քանի ես կամ, իմ զավակներիցս չեմ կարող բաժանվել»:

Անցանք մեր սիրելի ծննդավայրի թաղերով, հայրական տան կողքով, դուրս եկանք քաղաք տանող բաց ճանապարհ: Երբ մեզ հաց բաժանեցին, շատերը հացը վերցրին ու բղավեցին. «Ի՞նչ հոգատար եք մեր նկատմամբ, մի կտոր հացով մեր սիրտն եք շահում, մեր այր մարդկանց տարաք սպանեցիք, մեզ մեր տուն տեղից հանեցիք, ունեցվածքից զրկեցիք, մուրացկանի վիճակի հասցրիք, իմա մի կտոր հացով մեր տանջալից կյանքն եք երկարում: Ինչ է, ծաղրու՞մ եք մեզ»: Ձեռքերի հացերը շարտեցին ոստիկանների առաջ. նրանց կողմից ոչ մի պատասխան խոսք չլսվեց:

Մենք գիտեինք, թե մեզ քաղաք են տանում: Հետո ինչ էր լինելու, մեզ հայտնի չէր: Ճանապարհի որոշ հատվածը գնալուց հետո մեզ ճանապարհից դուրս հանեցին. կրկին կասկածն ու վախը մտավ մեր սրտերը: Դանդաղեցնելով քայլերը՝ մենք ի վերջո կանգ առանք: Ոստիկաններից մեկը, որը հայերեն գիտեր և հայերի հետ լավ հարաբերության մեջ էր, հորդորելով բարձրածայն հայտարարեց. «Ձեզ ոչ մի վտանգ չի սպառնում, կառավարության որոշմամբ Թուրքիայի բոլոր հայերին պետք է տանենք Թուրքիայի պետական սահմանը՝ Տեր Ջոր՝²³: Այնուհետև բոլոր հայերը միայն այնտեղ պիտի ապրեն»:

Տեր Ջորը որտեղ է, աշխարհի որ ծայրում, մեզնից ոչ ոք չգիտեր: Միայն զգացինք, որ շատ հեռու վայր է և ոտքով չպիտի կարողանանք հասնել: Կամա-ակամա հաշտվեցինք մեզ սահմանված այդ վիճակի հետ, շարունակեցինք մեր ճանապարհը: Այդ օրը փոքրիկ մի գետ անցնելուց, երմոն անունով մի կին, որը քաղաքից հյուր էր եկել Թամզարա, իր բարեկամների մոտ, ընկավ ջուրը և մնաց այնտեղ. ոչ ոք նրանով չհետաքրքրվեց: Նա եղավ առաջին օրվա առաջին գոհը: Երեկոյան, ճանապարհից դուրս, ծառերի տակ, վախը սրտներումս, հոգնած ու ուժասպառ քնեցինք: Առավոտյան լուսաբացին, ստիպեցին շարունակել ճանապարհը. օրը և գիշերը անցավ անփորձանք: Երրորդ օրվա կեսին հասանք Աղվանիս²⁴ կոչվող հայաշատ գյուղը, որտեղի հայերին արդեն տեղահանվել էին: Գիշերելու համար մեզ լցրին իրար կից մի քանի գոմերի մեջ. հազիվ էինք տեղավորվել, երբ տղամարդկանց մի ունակ ներխուժեց և սկսեց հարսներ ու աղջիկներ առևանգել: Մայրս նկատելով այդ արագ կերպով երկու քույրերիս պառկեցրեց գետնին, և մենք, բոլորս թեթև կերպով նստեցինք նրանց վրա: Այսպիսով երկու քույրերս այդ օրվա հափշտակումից ազատվեցին, բայց շատերի հետ տարան և հորեղբորս մեծ աղջկան՝ զեղանի Մանուշակին /Արամանուշ/: Այս անսպասելի առևանգումները առևանգվածների մայրերին ու հարազատներին լաց ու ողբի մեջ թողեցին:

Առավոտյան, երբ հազիվ էինք հեռացել գյուղից, կրկին խուժանը հարձակվեց մեզ վրա: Մտան մեր մեջ, ջրկեցին ու տարան հարսներ ու աղջիկներ: Մնացյալս ողբալով շարունակեցինք ճանապարհը: Օրվա կեսին մեզ դուրս հանեցին ճանապարհից, բաց դաշտի մեջ նստեցրին

հանգստանալու: Նրանցից մեկը գրպանից հանեց մի թուղթ, որտեղ նշված էր առավել ունևոր, հարուստ մի քանի ընտանիքների անուններ: Առաջինը մայրիկիս կանչեցին: Նա գնաց, կանգնեց նրանց առաջ: Փող պահանջեցին. մայրս բացատրեց, որ մենք իրոք շատ փող ունենք, բայց այն մնաց թամազարայում, մեր տանը, որ մենք բացի մեր վրայի շորերից ուրիշ ոչինչ չունենք: Չհավատացին. մեկը հրացանը ուղղեց մայրիկիս: Նա վախից ընկավ գետնին: Մեծ քույրս, այդ նկատելով, գրկի փոքրիկ քրոջս մեջքից արագ բանդեց, հանեց շորով փաթաթած մանր դրամի փոքրիկ կապոցը և շարտեց ոստիկանների առաջ, հետո գրկեց վախեցած մորս ու բերեց մեզ մոտ: Մայրս խիստ վախեցել էր և դրանից հետո բոլորովին փոխվեց, կորցրեց նախկին կորովը: Այն չնչին դրամը, որը ես մորս պատվերով տանից բերեցի եկեղեցի, դարձյալ թուրքերին բաժին եղավ: Այդ օրվանից մենք չունեինք մեկ դուրուշ /կոպեկ/ անգամ: Այսպես օրերը օրերի ետևից անցնում էին, և մեզ հայտնի չէր, թե քանի օր է անցել այն օրից, երբ մենք ոտք դրեցինք այս դառը ճանապարհը, ճանապարհ, որի վերջը չէր երևում. արդեն հավել ու մաշվել էինք, այլևս քայլել չէինք կարողանում: Ուժասպառ եղած օրվա ընթացքում ավելի շատ նստում էինք հանգստանալու, քան քայլում առաջ, դեպի Տեր Ջոր կոչված մեր վերջնական նշանատեղը՝ «հանգստյան» վայրը: Օրը մեզ համար դառնում էր տարի: Բնակավայրերով շատ քիչ էինք անցնում. այդ իսկ պատճառով մեզ վրա հարձակումներ քիչ էին լինում: Այդ պատճառով մասամբ մեզ հանգիստ էինք զգում, բայց սոված էինք: Ամսարդաբնակ վայրերով անցնելիս ուտելու ոչինչ չէինք գտնում: Մեզ առավել թուլացնում էր կիզիչ արևը, ջուր չկար, հատկապես փոքրիկները չէին դիմանում: Ճանապարհին ինչ որ գտնում էինք, այն էլ ուտում էինք. զանազան խոտեր, վայրի մրգեր, հատկապես երբ անցնում էինք փոքրիկ անտառների միջով: Մի բնակավայրի մոտից անցնելուց մեզ խաշած ցորեն տվեցին: Այն, ինչ ձեռքերս էր ընկնում, շատ խնայողաբար էինք ուտում, պահում ավելի «նեղ» օրերի համար: Մեզանից առաջ այդ ճանապարհով անցել էին տարբեր վայրերից մեզ նման տեղահանված հայերի խմբեր, որոնք ճանապարհի երկայնքով, ամեն տեղ թողել էին իրենց հետքերը. մենք էլ մեր հետքերն էինք թողնում: Ամեն տեղ հանդիպում էինք հոշոտված ու նեխած կանանց ու երեխաների մերկ դիակների: Այդպես, մի տեղ հանդիպեցինք խղճալի մի տեսարանի. մայրը և փոքրիկ երեխան մահացած էին, ավելի մեծը մոր կրծքին ընկած, դեռ կենդանի գալարվում, նվաղած ծայրով լաց էր լինում:

Այո, որքան խղճալի, սարսռեցնող պատկերներ էին դրանք, որոնց սակայն հանդիպելիս, անտարբեր անցնում էինք. մեզանից ամեն մեկը համոզված էր, որ մի օր էլ մեզ է վիճակվելու նույն բանը: Մայրը՝ տան մեծը, անկարող էր լինում այլևս քայլել, առաջ գնալ, խմբից դուրս էր գալիս, նստում գետնին և այլևս չէր կարողանում վեր կենալ, և եթե այդ ընտանիքի մեջ այլևս մեծ չկար, որը կարողանար փոքրերին հսկել, տեղ

դառնալ, շարունակել ճանապարհը, ապա փոքրերը նույնպես խմբից անջատվում էին և հանձնվում բախտի քմահաճույքին: Մեծահասակ կանայք և երեխաներ, չդիմանալով դժվարություններին, սովին ու ծարավին, ճանապարհին մահանում էին: Թամազարայից տեղահանվածների առաջին խումբը²⁵, որը բաղկացած էր հինգ հարյուր հոգուց, կորուստների և առևանգումների հետևանքով քիչ-քիչ նվազեց: Ամենասարսափելին փոքր երեխաներ ունեցողների վիճակն էր: Խեղճ մայրերը, իրենք իսկ քայլել չկարողանալով, ստիպված էին գրկել քայլել դժվարացող երեխաներին: Կային մայրեր, որ մի ձեռքով գրկում էին մի երեխային, մյուսին կապում շալակին, իսկ մյուս ձեռքով բռնում երրորդ բալիկի ձեռքը և քայլում ամբողջ օրը²⁶:

Մեր ընտանիքը բաղկացած էր ութ հոգուց՝ երեքը փոքր, քայլելու անկարող, որոնց հերթով գրկում, շալակում էին մայրս, մեծ քույրս և հարաքույրս: Մի օր, ամբողջ օրը քայլեցինք ծանծաղ, ցրված գետի ջրի, ավազի, քարերի միջով: Շոգ էր, դժվար էր քայլել: Թեթև քայլելու համար հանել էի տաբատս ու վերնաշապիկս, զցել ուսերիս. նույնն էին արել և ուրիշները, և ահա դարձյալ խուժանը հարձակվեց մեզ վրա: Թալանեցին, խլեցին մեր վրայի շորերը, ինչ որ կարող էին առան ու տարան: Այդ օրվանից ես մնացի շապիկ-վարտիքով. լավ էր այս անգամ հարսներ ու աղջիկներ չտարան: Մեզ ուղեկցող ոստիկանները նման արարքներին արգելք չէին լինում: Գետի եզրին՝ ավազի վրա, մեզ նստեցրին հանգստանալու. նստած ավազի հետ մատներով խաղում էի, մատներս դեմ առան կոշտ բանի, դուրս քաշեցի և ինչ զարմանք, շատ ծանր, մեծ, ոսկյա ապարանջան, որը ով գիտե, մեզանից առաջ բշված հայերից ո՞վ ի՞նչ հանգամանքներում թողել էր այստեղ: Մայրս այն պահեց ծոցում ասելով, որ մի օր պետք կգա: Մեծ գումար էր, որի արժեքով կարելի էր երկար ժամանակ ապրել, փրկվել սովից, բայց այդ անապատում ի՞նչ արժեք ուներ այն. եթե կարելի լիներ, մի կտոր հացով կփոխանակեինք:

Մի օր մենք հանդիպեցինք մի մեծ գետի. այն դեռ շատ հեռվից երևում էր: Ժայռերի նեղ արանքից փրփրալով, մեծ աղմուկով դուրս էր ժայթքում, տարածվում ընդարձակ հարթ տարածության վրա, մի տեսք ընդունած, հետո նորից խճկվում դիմացի ձորի միջով իր նեղ հունի մեջ: Քանի մոտենում էինք ջրի այդ ահավոր զանգվածին, այն ավելի սարսափազդու էր թվում: Գետ հասկացությունը ինձ մոտ ձևավորվել էր մեր Թամազարայի փոքրիկ, ջինջ գետի պատկերով, որի մեջ ամբողջ ամառը անվախ խաղում, լողանում էինք: Եվ ահա մեզ վիճակվեց ակնատես լինել անհամեմատ ավելի մեծ գետի: Կամաց-կամաց մոտեցանք նրա ափին ու դեմ դիմաց կանգնեցինք: Մեզ ուղեկցողներից մեկը բարձր ծայրով ազդարարեց. «Բու էֆրատ ըրմաղը տըն»/ Սա Եփրատ գետն է/: «Եփրատ, Եփրատ գետը»,- աղաղակեցին ամեն կողմից: Դայերի ծանոթ գետն էր այն. հայկական պատմության մեջ մտած գետ: Այն ավելի մեծ ճանաչում գտավ 1909 թ. Ադանայի²⁷ ջարդերից

հետո. նրա մասին երգեր են հորինված, որոնք երգվում էին ու երգվում, որից մի քանի տող մնացել է հիշողությանս մեջ.

Աղանայի կույս աղջիկներ

Չեռք-ծեռք բռնած,

Իրենք զիրենք ողջ-ողջ

Եփրատ գետը նետեցին,

Ու խեղճ մայրերին էլ

Անմխիթար թողեցին:

Ահա Եփրատ գետը. մենք եկել կանգնել էինք նրա ափին, թվում էր, թե այլևս տեղ չկար գնալու: Մենք վախից սարսափած սեղմվեցինք իրար, կծկվեցինք: Գետի աջ կողմում կար ժայռ, մեջը՝ քարայր, նրանից ներքև քարերը արյունով էին ներկված: Մինչև ներքև արյուն էր կուտակված ու լերդացած: Մեզանից առաջ այստեղից անցնող հայերի արյունն էր հոսել²⁶: Հիմա մենք էինք եկել, հասել այստեղ, ուրեմն մեր արյունը պիտի թափվեր ու խառնվեր նրանց արյունին: Կրկին վախից ու սարսափից սեղմվեցինք իրար, կծկվեցինք: Հանկարծ որտեղից որտեղ քարայրում երևացին երեք տարօրինակ մարդիկ՝ թևերը քշտած, ձեռքներին թուր: Այդ նույն պահին մեր շուրջը հայտնվեցին նույնպիսի մարդիկ, որոնք մեզ շրջապատեցին ու ստիպեցին քարայր տանող ճանապարհով բարձրանալ դեպի վեր: Ոչ ոք չչարժվեց, ավելի սեղմվեցինք իրար, կրկին մենք մեզ զգացինք իրական մահվան առաջ: Ընդհանուր լաց ու կոծ բարձրացավ, մեր ձայնը հասնում էր մինչև երկինք: Կանայք, ձեռքները վերև բարձրացրած, դարձյալ փրկությունը վերևից՝ աստծուց էին սպասում: Մենք մահվան երկու ձևի առաջ էինք կանգնած. կամ կամավոր պիտի նետվեինք գետը, կամ դահիճների ձեռքով մորթվեինք: Պետք էր ընտրություն կատարել. մեզանից մեկը նախահարձակ լիներ, օրինակ ցույց տար: Մի ընտանիք, որը ավելի մոտ էր կանգնած ափին, մեզ օրինակ ցույց տվեց իրար սեղմված՝ շարժվեցինք դեպի գետը, մայրը ձեռքերը վերև բարձրացրեց, խաչ հանեց, աղոթեց և բարձր ձայնով գոչեց. «Աստված, դու մեզ չօգնեցիր մինչև այստեղ, ահա մենք ինքներս ենք գալիս քեզ մոտ, մենք անմեղ ենք»: Մահվան հեշտ ձևն ընտրված էր²⁷: Դժվար, բայց դանդաղ բոլորը հետևեցին նրա օրինակին: Ասում են ընդհանուր մահը մահ չէ: Մենք մայրիկին գրկած դողում էինք, նա մեզ խրախուսում էր, սիրտ տալիս. «Չավակներս մի՛ վախենաք: Ինձ ամուր փարվեցեք, ես ձեզ հետ եմ, ինձանից մի անջատվեք, ջրից մի վախճաք, ջուրը մեզ պիտի փրկե այս տանջանքից, գնում ենք դրախտ հանգստանալու...»: Ուղեներս արդեն ջրի մեջ էր, վախենում էինք առաջ գնալ, մայրիկը կանգ առավ... Հանկարծ բարձր ձայնով լսվեցին աղաղակներ. «Յասախ-յասախ» / արգելվում է, արգելվում/ և այլ խոսքեր: Բոլորս դեպի քարայրի կողմը նայեցինք, հիմա այնտեղ ոչ ոք չկար, չկար նաև մահվան վտանգը, դարձյալ ապրելու ցանկություն առաջացավ. ետ եկանք: Մինչ այդ ոմանք կուլ գնացին ալիքներին: Մեզ դարձյալ հանեցին

3398

ճանապարհ, շոր փռեցին և պահանջեցին փող գցել և նոր անցնել: Ունեցողը մի բան գցեց, անցավ. անցավ և չունեցողը: Կրկին դուրս եկանք մեր տանջալից ճանապարհը: Գետի վրա գցված էր կամուրջ, երկու կողմից դռներով. անցումը փողով էր: Փող ունեցող այլևս չկար, դժվար կացություն էր: Այդ անել պահին մայրս եկավ օգնության, ծոցից հանեց ոսկյա մպարանջանը, բարձր բռնեց վերև. բոլորը գարմանքից նայեցին մորս ձեռքին փայլող առարկային: Ոչ ոք չէր սպասում, որ մեզանից որևէ մեկի մոտ, մինչև այդտեղ հասնելը կարող էր պահված լինել այդպիսի արժեքավոր մի բան: Բոլորս կամուրջը անցանք: Մայրս հետո բոլորին պատմեց ապարանջանի պատմությունը: Հոգնած ու հյուծված նստեցինք գետի մյուս ափին հանգստանալու: Մեզ ուղեկցող ոստիկանները հայտնեցին, որ այդ օրը այլևս ճանապարհը չենք շարունակելու: Նստած ոմանք ողբում էին գետի ալիքներին կուլ գնացած հարազատներին, իսկ ոմանք երանի էին տալիս, որ գնացին, ազատվեցին այս տանջալի կյանքից: Մեզ նեղում էր սովը: Հիմա ջուր շատ կար: Շատերը ոտքի ելան՝ գետի երկայնքով փարթած խոտերի մեջ ուտելիք գտնելու հույսով: Մայրս մեզ իր շուրջը հավաքած, հազիվ շնչող փոքրիկ քույրիկիս գրկած, ուտելու մի բան գտնելու ելք էր որոնում: Հանկարծ գրկի երեխան մեծ քրոջս հանձնելով նա ոտքի կանգնեց, իմ և հորեղբորս տղայի ձեռքը բռնեց և ուղղվեց մեզ ուղղեկցող ոստիկանների կողմը, որոնք մեզանից քիչ հեռու նստած հաց էին ուտում: Մայրս հարցրեց, թե այստեղ, մոտերքում որևէ բնակավայր կամ գյուղ կա՞: Մեկը ասաց, թե ծառերից այն կողմ մի գյուղ կա: Նրանց թույլտվությամբ մայրս ինձ ու հորեղբորս տղային ուղարկեց գյուղ ուտելու որևէ բան բերելու /մուրալու/: Ոչ մայրս և ոչ էլ մենք այլևս չէինք վախենում որևէ փորձանքից. կարևորն ուտելու բան ճարելն ու սովից փրկվելն էր: Իրոք, ծառերի վերջավորությունից այն կողմ մի գյուղ նկատեցինք՝ հողաշեն ու գետնափոր տներով. ուրախացանք, առաջին իսկ պատահած տան քարե պարսպի առաջ կանգնեցինք: Բակում կապած շունը մեզ տեսնելով հաչեց. նրա հաչոցից բաց դռնից դուրս եկավ կռացած մի պառավ կին: Շունը ձայնը կտրեց, նա եկավ մեր դեմ կանգնեց: Ձեռքերով մի կերպ հասկացրինք, թե սոված ենք, հաց ենք ուզում: Կինը հասկացավ, մեզ բակ տարավ, նստեցրեց քարե աթոռների վրա, քարե սեղանի առաջ: Ներս գնաց, քիչ հետո եկավ. բռնած հողե երկու աման մածուն, մեջը փայտե զղալներով և երկու գարու հաց /թոքոն/: Ինչ ուրախություն, երկնքից իջած հրաշք, մածուն ու հաց: Մենք որոշեցինք մածունը ուտել, իսկ հացերը տանել հետներս: Կինը, որ ուշադիր հետևում էր մեզ, զգաց որ հացը չենք ուտում և հասկացավ, որ ուզում ենք մեզ հետ տանել: Նորից ներս գնաց, բերեց ավելի մեծ երկու հաց և հասկացրեց, որ մածունը ուտենք հացով, իսկ վերջին երկուսը տանենք հետներս: Ոտքի ելանք, հացը ձեռքներին բռնած, գլուխներս խոնարհեցինք մինչև գետին ի նշան շնորհակալության: Հետո հացերը

դրեցինք ծոցներս, որպեսզի ոչ ոք չտեսնի. այդպես էր պահանջում ժամանակը, բոլորն էլ ուտել էին ուզում: Ինչ բարի կին էր, որին հանդիպեցինք. այո, բոլոր ազգերի մեջ էլ կան բարի ու չար մարդիկ: Երբ վերադարձանք, բոլորը, հացը տեսնելով, անասելի ուրախացան: Մայրս հավասարապես բաժանեց այն, մնաց մի փոքր կտոր, կարծեցինք դա էլ իրեն բաժինն է: Նա մի փոքրիկ կտոր դրեց բերանը, թրջեց, տրորեց ու մատներով դրեց գրկի փոքրիկ բերանը. այսպես մինչև վերջին փշրանքը: Ով կհավատա, սոված մարդը հաց դնի բերանը, համը առնի և առանց կուլ տալու նորից բերանից հանի դուրս: Մայրական սերը ամեն ինչից ուժեղ է, այն կդիմանա ամեն փորձության՝ հանուն զավակի: Հաջորդ առավոտյան մենք ճանապարհ ելանք շարունակելու մեր անվերջանալի, տանջալից ուղին: Այդ օրվանից եփրատ գետը եղավ մեր ուղեկիցը: Մեր ճանապարհը գնում էր նրա կողքով, նույն ուղղությամբ՝ երբեմն հեռանալով, երբեմն էլ մոտենալով մեզ: Հետագայում այն եղավ մեր ուրախությունը, տխրությունը, բարեկամը, թշնամին: Մեզ համար նա այլևս սարսափելի չէր, ջրի նեղություն չէինք քաշում, նրա ափի ողջ երկայնքով փարթամ բուսականություն կար, որտեղից էլ հավաքում էինք ուտելիքը՝ դադձ, ավելուկ, սիմձ և այլն: Մեր պատահ-պատահ եղած շորերը հագիվհագ ծածկում էին մեր մերկ մարմինը: Քայլել անկարող հիվանդ ընտանիքները, որ նստել էին նրա ափին, այլևս վեր չէին կենում, հոժարակամ մնալով նրա գովաշունչ ափին: Լինում էին դեպքեր, երբ մեծահասակ կանայք, չափահաս աղջիկներն ու հարսները, թուրքերի ծեռքն ընկնելու մտավախությունից, դենքները խաչակնքելով նետվում էին գետը՝ հանգստանալով նրա ալիքների մեջ: Քիչ չէին այն ընտանիքները, որոնք այլևս չկային, քիչ չէին նաև այն ընտանիքները, որոնք ունեին մեկ և ավելի կորուստներ: Մեր ութ անձից բաղկացած ընտանիքը առայժմ լրիվ էր: Մայրս մեծ ջանքեր էր գործադրում մեզ ամեն տեսակ վտանգներից, փորձություններից պաշտպանելու համար:

Նա երիտասարդ էր, ընդամենը երեսունվեց տարեկան³⁰ և, ամենազխտավորը, առողջ, գործարար, տոկուն կազմվածքով, որքան հիշում եմ, նա երբեք չէր հիվանդացել, մենք նույնպես առողջ էինք: Մենք նյութական բարեկեցիկ վիճակի մեջ էինք ապրել և լավ էինք սովել: Մեր առողջությանը նպաստում էր նաև գեղեցիկ բնությունը, օդն ու ջուրը, իզուր չէ, որ մեր ծննդավայրին կոչում էին ջրառատ, ծառաշատ, դրախտավայր Թամգարա: Եվ ահա այդպիսի բարեկեցիկ պայմաններից հետո մեզ քչեցին բազմաթիվ տանջանքներով լի, անվերջանալի, մարդկային ուժերից վեր այս անապատային ճանապարհը³¹: Ճիշտ է, մենք դեռ կայինք, դիմանում էինք ինչ-որ չափով, բայց մինչև երբ, մինչև ու՞ր. չէ՞ որ մենք նույնպես մարդ էինք. ավելին՝ կանայք ու երեխաներ: Մենք գրեթե անկարող էինք քայլել, հյուծված, ֆիզիկապես քայքայված, արդեն զգում էինք, որ գնում ենք դեպի անխուսափելի մահ, մահ, որը

նախօրոք ծրագրված էր թուրքերի կորմից՝ ողջ հայությանը վերջնականապես բնաջնջելու: Հավվում էր ողջ հայությունը: Մինչ մեր տեղահանությունը, մենք մտածում էինք, թե մեզ հետ ինչպես պետք է վարվեն, ինչ պիտի անեն մեզ: Անգամ հույս ունեինք ապրելու, իսկ հիմա բոլորս էլ քաջ գիտակցում էինք, որ մեզ էլ մահ է սպասում, այսօր կամ վաղը, միևնույն է: Մահը հեշտացել էր, եփրատ գետը մեր կողքին էր. խաչ էին հանում, աղոթում ու հանձնվում ալիքներից՝ ժամ առաջ այս տանջանքներից ազատվելու համար: Այսպիսին էր մեր վիճակը: Շրջապատի լռության մեջ եփրատի ալիքների ծայրը մեզ համար մխթարություն էր, նա մեր ընկերն էր, մեր գերեզմանը:

Մի օր մենք նրանից բաժանվեցինք. նա գնում էր իր ընթացքով, իսկ մեզ թեքեցին դեպի ձախ՝ գառնիվեր: Դժվար էր բարձունքով քայլել, գետնի տաքացած շեկ հողը, փշերն ու չորացած բույսերը ավելի էին դժվարացնում քայլելը: Վրկի կիզիչ ճառագայթները նույնպես մեզ նեղում էին. ջուր չկար: Վերջապես բարձունքին հասանք: Մեր առաջ բացվեց մի գեղեցիկ տեսարան. ներքևում թեք լանջի վրա, փռված էր այգիներով ու ծառերով շրջապատված քաղաքը: Մեր ողջ ճանապարհի ընթացքում առաջին անգամն էր, որ հանդիպեցինք քաղաքի: Դա Ակն³² քաղաքն էր, մեզ ծանոթ հայաշատ քաղաքը, անվանի բանաստեղծ Սիամանթոյի /Ատոն Յարճանյան/ ծննդավայրը³³: Ուրախացանք, ուժ առանք, այնտեղ մի կտոր հաց, ուտելու մի բան գտնելու հույս ծագեց, անգամ մուրալու ճանապարհով. այն այլևս մեզ համար ամոթ չէր, կարևորը մի բան գտնելն ու սովի ճիրաններից գեթ մեկ օրով ազատվելն էր: Ներքևում կրկին երևաց գետը. այն հոսում էր քաղաքի տակով, նրա ողջ երկայնքով: Գետի վրայի կամուրջով անցանք դիմացի ափը: Մեզ մտցրին այգիների մեջ՝ հանգստանալու: Այգիների մեջ տեղ-տեղ կային դատարկ մենատներ. դրանք մեզանից առաջ դեպի անապատները քշված հայերի տներն էին:

Հագիվ էինք ծառերի տակ տեղավորվել հանգստանալու, երբ մեզ մոտ եկան քաղաքացիական շորերով մարդիկ և ոստիկաններ: Նրանք շրջեցին և փնտրեցին մեր մեջ վարակիչ հիվանդների: Նրանց մտահոգում էր թուրք բնակչությանը վարակիչ հիվանդություններից զերծ պահելը, և ոչ թե մեզ օգնելն ու բուժելը: Մեզ հայտնեցին, որ մի քանի օր մնալու ենք այդտեղ՝ կազդուրվելու և հանգստանալու համար, սակայն հետո պարզվեց, որ մեզանից առաջ քշված հայերի դանդաղ գնալու պատճառով մենք պիտի մնանք այդտեղ. ուրախացանք, որ գոնե մի քանի օր ուտելու բան կճարենք, վերջապես քաղաք է, մարդկանց մեջ ենք: Սնունդ հայթայթելու հույսով շրջում էինք ծառերի մեջ, սակայն շատ բան չկար, քանի որ մեզանից առաջ եկած ու գնացածները, իրենց բաժինները վերցնելով, գրեթե բան չէին թողել: Մի տեղ թթենիների հանդիպեցինք. թուրք թափվել էր գետնին ու չորացել, չամիչ էր դարձել: Մեր ողջ ճանապարհին առաջին անգամ հանդիպեցինք այդքան համեղ

ուտելիքի. բոլորս վրա թափվեցինք, անսահման կերանք, լցրինք մեր դատարկ ստամոքսները առանց մտածելու հետևանքների մասին: Կերանք քաղցր թուփն ու վրայից առատորեն ջուր խմեցինք: Շատերը հիվանդացան փորհարկներով, պառկեցին գետնին, ի վիճակի չեղան վեր կենալու և մահացան: Մեր ընտանիքից երկու փոքր եղբայրներս հիվանդացան:

Մեր ծննդավայր թամզարան մրգատու վայր էր, թուրք նույնպես շատ տարածված միրգ էր: Դրանից շատ բաներ էինք պատրաստում³⁴: Ակնի թուրք ավելի ընտիր ու անուր հանած էր: Նրանց չորացրած չամիչը, պատրաստած զանազան քաղցրավենիքները վաճառքի էին հանում երկրի տարբեր քաղաքներ:

Յետագայում ուտելու բաներ ճարեցինք. մտանք հայերի դատարկ տները, գտանք չորացած հացի և այլ ուտելիքների մնացորդներ, դուրս եկանք շուկա, վզներս ծռած, ձեռքներս երկարած, կանգնում էինք խանութների առաջ. ոմանք մի բան տալիս էին, ոմանք զայրացած վռնդում էին: Ո՞ր մեկին տային, փողոցներում բազմաթիվ որբացած տղաներ ու աղջիկներ էին թափառում: Ոստիկանները այդպիսիներին որոնում, բռնում տանում էին որբանոց ու թրքացնում, իսկ տկարակազմներին կամուրջի վրայից գետն էին գցում³⁵: Յետագայում ծնողներն այդ նկատելով, այլևս փողբիկներին չէին հեռացնում իրենցից:

Ակնում եղած օրերին այսպես թե այնպես, մենք ուտելու մի բան գտնում էինք, սոված վիճակում չէինք, սակայն թուրք իր անբուժելի հետևանքը թողեց. ամեն օր մի քանի մահացողներ էին լինում: Կային հատուկ մարդիկ, որոնք ամեն օր, առավոտները երկար ձողերը ձեռքներին, երկաթե կեռ ծայրերը մտցնում էին մահացածների շորերի մեջ՝ քաշելով տանում, գցում գետը: Մենք ականատես էինք լինում, գիտակցում, որ մի օր էլ մեր ընտանիքից կորուստներ պիտի ունենանք: Երկու եղբայրներս հիվանդ պառկած էին գետնին, իսկ մենք անգոր էինք մի բան անելու:

Մայրս նստում էր նրանց գլխավերևը, ձեռքերը տրորում էր, գլուխը տրտմորեն օրորում. հիմա արդեն ոչինչ անել չէր կարող, ինքը նույնպես լավ վիճակում չէր, նկատելի նիհարած էր, գունատված, շատ քիչ էր խոսում: Մենք զգում էինք, որ նրա ներսում ինչ-որ անսովոր բան է տեղի ունենում: Նա մեզ ոչինչ չէր ասում, աշխատում էր թաքցնել իրականությունը. մենք էլ մեր հերթին ոչինչ չէինք հարցնում, վախենում էինք ճշմարտությունն իմանալուց: Ահա այդ օրերին էր, որ թամզարայի երկրորդ խումբը, որը տեղավորված էր վանքում, եկավ մեզ հասավ: Երկու կողմերի հարազատներ, բարեկամներ իրար գտան, տեսան իրար քայքայված վիճակում, լացին-լացին ու տխրեցին կորուստների համար: Նրանց հետ էր մեծ հորաքույրս: Նա եկավ և մեզ գտավ: Ֆիզիկապես և հոգեպես նա այնպես էր քայքայվել, որ մենք նրան հազիվ ճանաչեցինք: Նա ավելի շատ վիշտ էր տեսել վերջին շրջանում. միանգամից կորցրեց

երկու եղբայրներին և երկու չափահաս տղաներին: Մնացել էր միայնակ, հիմա էլ լուրը իր եղբոր երկու աղջիկների առևանգման, տղայի՝ Կարապետի մահվան մասին, որի գերեզմանը եղավ Եփրատ գետը, և բոլորիս անհուսալի ու քայքայված տեսնելով, բոլորովին իրեն կորցրեց. տխրեց, հուզվեց, կուրծքը ծեծում, մազերը քաշում, լաց էր լինում և անվերջ խոսում. «Քոռնամ ես, այս ի՞նչ բան է, եկա ձեզ այս վիճակում տեսա, չէ այս զուլում բան է, երանի չգայի, չտեսնեի, հերիք չեղավ իմ տեսած, քաշածս, ալ չեմ դիմանար, ալ ինչպես դիմանամ, ինձի սիրտ մնաց, որ դիմանամ»:

Քսան տարի առաջ, 1895թ. հոկտեմբեր ամսին, քաղաքի թուրքերը հարձակում գործեցին հայերի վրա³⁶: Նրանք հայերի կողմից հանդիպելով դիմադրության, զայրացած ու կատաղած, ուղղություն են վերցնում դեպի շրջանի ամենամոտ հայաշատ բարեկեցիկ թամզարա: Տեղի թուրքերի հետ միացած, հարձակում են գործում տեղի հայերի խանութների, տների վրա: Անխնա կոտորում իրենց դեմ դուրս եկած թե մեծերին, և թե փոքրերին: Այդ ժամանակ էլ թուրքերի սրին գոհ են գնում նրա ծնողները /պապս և տատս/: Դրանից հետո նրանք՝ երկու քույր և երկու եղբայր, մնում են առանց ծնողի: Մեծ հորաքույրս ամուսնացած, երկու երեխաների մայր, թալանից, ջարդից պաշտպանվելու համար, ամուսնու հետ երեխաներին զրկած կանգնում են տան շենի վրա, կարծելով, որ թուրքերը, երեխաներին այդ վիճակով տեսնելով, կխղճան և անվնաս կհեռանան: Բայց այդպես չի լինում, հարձակվողներից մեկը ճանապարհի հարթելով մերս է մտնում, դանակով զարկում ամուսնու սրտին, որը երեխայի հետ մեկտեղ գլորվում է գետին, ինքը տեղում մահանում է, իսկ երեխայի երկու ոտքերը ջարդվում են: Այդ օրվանից հետո նա մեծանում է ոտքերից զրկված: Մի քանի ժամ տևող այդ չարիքն ու թալանը հրամանով դադարեցվում է:

Այսպիսով՝ թամզարայի բարեկեցիկ հայությունը աղքատանում է³⁷, երեխաներից շատերը՝ որբանում: Այս դեպքից հետո է, որ թամզարայի ընտանիքների մի մասը, հետագայում թուրքերի սիստեմատիկ խժժություններից խուսափելու համար, թողնում և հեռանում են ծննդավայրից՝ այնտեղ թողնելով տունը և ունեցվածքը: Մեկնում են ուրիշ քրիստոնյա երկրներ՝ Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա և այլ ապահով տեղեր: Այդ պատճառով թամզարայի հայության թիվը զգալի չափով պակասում է, վերջին շրջանում այնտեղ ապրում էին 250 հայ ընտանիքներ³⁸: Այդ դեպքերը պատմելու ընթացքում նա հաճախ կրկնում էր. «Այս փառք էր, հիմիկվանի հետ, մեռնողը մեռավ, կորածը կորավ, մնացողներս գեշ-աղեկ ապրեցինք մեր տուններում, մեր տեղերում: Եղածը անցավ գնաց, գեշ-աղեկ երեխաները մեծացան, եղբայրներս տուն տեղի, չղջուխների տեր եղան, որ հիմա այս անապատների ճանապարհին սովից տանջվին... Վախ-վախ, աս ինչ զուլում եկավ ողջ հայության գլխին, ալ մեր, ողջ հայության վերջն է»: Յետո նա կրկին

շարունակեց իր պատմությունը ներկայի դեպքերի մասին: Պատմեց, թե ինչպես տղամարդկանց հավաքելու ընթացքում մտնում են իրենց տուն, փոքր քսաներկու տարեկան տղային տանում են ոստիկանատուն, իսկ մեծին, որ ոտքերից գրկված նստած էր գետնին, հենց տան մեջ մոր աչքի առաջ, գնդակահարում են ու հեռանում: Մայրը ընկնում է սպանված որդու վրա և երկու օր մնում այդ վիճակում: Երբ զգում է, որ այդ վիճակում պահել հնարավոր չէ, դուրս է ելնում հարևանների օգնության կանչելու: Դրսում նա ոչ ոքի չի գտնում. բոլորը վանքում և եկեղեցում էին ինքը այդ մասին անտեղյակ է լինում: Գարահատյալ նա տանը փոս է փորում և որդուն քաղում, դուռը փակում գնում է վանք, միանում յուրայիններին: Մեզանից եկու օր հետո նրանց նույնպես դուրս են հանում վանքից, նույն տանջալից ճանապարհը անցնելուց հետո, այստեղ՝ Ակնում, եկան մեզ միացան: Ծանապարհի հանելուց նրանց ուղղակի ասել են, որ բոլոր հայերին տեղափոխում են այլ տեղ, այսուհետև բոլոր հայերը միասին պիտի ապրին, թե դուք կգնաք, ճանապարհին ձեր հարազատներին կգտնեք ու միասին կլինեք: Այս իմանալով բոլորը, ինչպես և հորաքույրս, հավատում են, որ կգնան, մի օր մի տեղ կհասնեն իրենց հարազատներին ու մշանակված մի տեղ միասին կապրեն: Հորաքույրս մեզ գտնելու և մեզ հետ ապրելու հույսով ուժ է առնում, թե ամեն ինչ կորցրի, մենակ պուպու մնալու չեմ, կգնամ մերոնց կհասնիմ, եղբայրներին ընտանիքները մեզը են: Հարսներս ջահել, չոջուխները շատ փոքր, կօզնեմ, կմեծանան, գործի կլինեն հայրերի տեղը կբռնեն. «Բայց ահա եկա, ինչ տեսա, այլ հույս չիկա, հորաքույրը գլուխը որ քարին տա», - այս ասելով ոտքի ելավ, գնաց ու քիչ հետո վերադարձավ ձեռքին շորե մի կապոց, մեջը մի բուռ ալյուր, շորի մեջ շաղվեց, այն խուս արեց, մատը թաթախելով, հերթով պառկած եղբայրներիս բերանն էր մտցնում, այսպես մի քանի անգամ, մինչև այն լրիվ վերջացավ. նրանք մի քիչ աշխուժացան: Հակոբը ելնելով տեղից նայեց շուրջը, բերանը բաց ու խուփ արեց, ուզում էր նորից ուտել, բայց որտեղի՞ց: Հորաքույրս նորից նեղվեց, ընկավ մտքերի մեջ, թեքվեց, գրկեց մեկին, մյուսին համբուրեց, տվեց անունները, ապա թեքվելով Հակոբիկի կողմը գրկեց նրան ու ասաց. «Իմ աղվորիկ Հակոբիկս, Նորայրս, բախկներս, ահա հորաքույրը եկել է, ձեր քովն է, ինձի չե՞ք ճանչնա, հորաքույրը մեռնի ձեր ջանին, դե խոսեք»: Հետո նա մայրիկիս գրկից վերցրեց փոքրիկ քրոջս, որը թուլացած հազիվ էր շնչում, սեղմեց կրծքին, համբուրեց, գլուխը օրորեց, հազիվ լսելի մի բան շնչեց. հետո երեխային ցած դրեց, ձեռքով իր աչքերը փակեց, առանց խոսելու վեր կացավ ու գնաց: Մեզ թվաց, թե գնաց ուտելու. բան բերելու, բայց նա այլևս ետ չեկավ: Հորաքրոջս տեսել էին գետափի իջնելիս... Քանի որ նա շատ վիշտ ու գրկանք էր տեսել, մեր անելանելի վիճակը տեսնելով այլևս չդիմացավ:

Վերջին խմբի հետ կար քաղաքից մայրիկիս ծանոթ մի ընտանիք, որը եղել էր բերդում ինքնապաշտպանության ժամանակ, հենց նա էլ պատմեց բերդում կռվողների վախճանի մասին³⁹: Քսանյոթ օր կռվելուց հետո, երբ սպառվում է ուտելիքն ու զինամթերքը և պակասում կռվողների թիվը, նրանք իջնում են բերդից, ճեղքելով թուրքական պաշարողական շղթան՝ անցնում Թամզարայի դիմացի լեռը ըստ պայմանավորվածության վանքի շրջանում իրար միանալու համար: Հենց այդտեղ էլ կռվի են բռնվում իրենց հետապնդող թուրք զինվորների հետ: Նույն առավոտյան բերդում մնացածները անձնատուր են լինում, թուրքերը բերդ են բարձրանում, սպանում տղամարդկանց, թալանում, որից հետո կանանց ու երեխաներին հանում են նույն աքսորի ճանապարհը:

Ակնում, մեր մնալու մի քանի օրերի ընթացքում, մեր խմբի ընտանիքները ավելի շատ մարդկային կորուստներ ունեցան, քան անցած ողջ ճանապարհի ընթացքում. կային ընտանիքներ, որոնք լրիվ չկային այլևս, կային նաև այնպիսի ընտանիքներ, որոնց մայրը կամ ավագը չկար, և երեխաները հանձնվել էին բախտի քմահաճույքին: Քանի ոտքի վրա էին, թափառում էին այս-այն կողմերում ուտելիք գտնելու, գոյությունը պաշտպանելու համար: Ես չգիտեմ, թե Ակնում մենք քանի օր մնացինք. օրերից մեկում, ոստիկաններ եկան, մեզ ոտքի հանեցին դարձյալ մեր դառը ճանապարհը շարունակելու. դժվարությամբ ոտքի ելանք, երեք անկարող փոքրիկներին մեծերը շալկեցին, դանդաղ քայլերով իջանք գետեզեքը, որի երկայնքով ձգված էր ճանապարհը: Հազիվ մի քանի քայլ էինք անցել, մայրս կանգ առավ: Մենք հավաքվեցինք նրա շուրջը. Նա հազիվ շնչեց. «Ձավակներս, ես այլևս անկարող եմ քայլել»: Խմբից ետ մնացինք ու աննկատ մտանք ճամփեզրի քփերի, ծառերի մեջ, մնացինք այնքան, մինչև խուսը բոլորովին հեռացավ: Դանդաղ քայլերով կրկին բարձրացանք մեր նախկին տեղը: Այնտեղ, բացի մեզանից կային հատ ու կենտ մնացող ընտանիքներ, նրանք բոլորն էլ կամ լաց էին լինում, կամ տնքում, նրանցից մի քանիսը մահամերձ վիճակում էին: Այստեղ ու այլուր ողջ հայությունն էր մեռնում:

Մայրս արդեն չէր թաքցնում իր հիվանդ լինելը. «Ձավակներս, ահա ինչպես տեսնում եք, ես արդեն շատ վատ եմ, մինչև հիմա աշխատում էի ձեզանից թաքցնել, բայց այլևս չեմ կարող: Մինչև այստեղ աշխատեցի ձեզ անվնաս հասցնել, քանի դեռ նստած էի կամ պառկած, ոչինչ, կարծես լավ էի, բայց երբ սկսեցինք քայլել, զգացի, որ ուժ չունեմ»: Հետո շուկով խոսեց քույրերիս հետ ու լռեց: Երկար ժամանակ մտախոզված լռում էր: Հանկարծ թեքվեց մեծ քրոջս կողմը, ականջին մի բան ասաց ու միասին ելան ոտքի, իրենց հետ վերցնելով նաև փոքրիկ քույրիկիս Արշալույսին: Ձգուշացրին մեզ, որ տեղներիցս չչարժվեք: Նրանք շատ շուտով վերադարձան, բայց... առանց երեխայի... Փոքրիկ քույրիկիս նրանք

հանձնել էին եփրատին. դա նրան տանջանքից փրկելու միակ միջոցն էր: Այսպիսով թուրքերի ձեռքով սպանվել էր տան մեծը, իսկ հարազատների ձեռքով ամենափոքրը: Քանի որ նման երևույթներ շատ էինք տեսել, ուստի և մեր հարազատ քույրիկի կորստի հանդեպ էլ մնացինք լուռ ու անտարբեր: Մինչև հիմա էլ ինձ համար գաղտնիք է, թե երեխան ու՞մ ձեռքով հանձնվեց գետի ալիքներին մո՞ր, թե՞ քոջ: Մի բան պարզ էր սակայն. որոշումը կայացրել էր մայրս...

Երբ վերադարձան, մայրս անծայն պառկեց ու այլևս երբեք ոտքի չկանգնեց⁴⁰: Աչքերը փակ, ֆիզիկապես թուլացած այլևս չէր խոսում: Օրը անցավ: Հաջորդ օրը մեզ մոտ եկան երկու հայ կին և մի թուրք պաշտոնյա: Ուշադիր մեզ դիտելուց հետո, երբ իմացան, որ հիվանդ պառկածը մեր մայրն է, կանանցից մեկը նստեց մայրիկիս կողքին, բռնեց նրա ձեռքը և թեքվելով նրան բարձր ծայրով խոսեց. «Քույրիկ, լուռ՞ես ինձ: Կառավարությունը այստեղ որբանոց⁴¹ է բացել, երեխաներին հավաքում, խնամում ենք: Եթե կհամաձայնվես, այս երկու երեխաներիդ կտանենք մեզ մոտ»: Մայրս աչքերը թեթև բացեց, նայեց շուրջը, հայացքը ուղղեց դեպի անձամոթ կնոջը և հագիվ լսելի ասաց. «Հա, լավ կլինի: Փոքրիկիս Հակոբիկիս, տարեք քանի ավելի չի վատացել, մեղք է, թող լավանա, ապրի: Իսկ մեծիս՝ Քաջունիիս, մի՛ տարեք, ճիշտ է, նա էլ է փոքր, բայց վերջապես տղա է, տոկուն է, կդիմանա, թող մնա քույրերի մոտ»: Կինը հավաստիացրեց, որ ամեն ինչ լավ կլինի, քանի որ խնամողներն էլ հայ են, ունեն շատ կորուստներ, հարազատի պես կնայեն երեխաներին, իրենց հարազատների կարոտը նրանցից աննշելով: Այս ասելով կինը վեր կացավ, բռնեց եղբորս ձեռքից և սկսեց համոզել. «Վեր կաց, տղա՛ս, ես քեզ աղվոր տեղ պիտի տանեմ, այնտեղ ճաշ, ուտելիք կա, տունին մեջ հանգիստ կլինես և կլավանաս: Քեզի պես հայ երեխաներ շատ կան, ձերոնք միշտ կուզան քեզ տեսնելու»: Եղբայրս անծայն վեր կացավ, ինձ էլ իրենց հետ վերցրին տարան, որպեսզի տեղը սովորեմ: Մեկնելուց առաջ մայրս ինձ իր մոտ կանչեց. «Տղա՛ս, ճանապարհին եղբորդ կրկնել տուր այն, ինչ սովորեցրել եմ, թող միշտ հիշի իր անունը, ազգանունը, ազգությունը և ծնողներին»: Մայրս ի նկատի ուներ այն, որ մենք մի օր իրարից կբաժանվենք, կընկնենք թուրքերի ձեռքը, կկորչենք: Որբանոց կոչված տեղը մեզ շատ մոտ էր գտնվում: Երկհարկանի, լքված հայի տուն էր, այնտեղ արդեն բավականին երեխաներ էին հավաքված: Կինը մեզ տարավ խոհանոց ու կերակրեց, բայց շատ քիչ, նկատի ունենալով, որ երկար ժամանակ տաք ճաշի անսովոր մեր ստամոքսը կարող է վնասվել: Վերջում մի կտոր հաց տվեց մերոնց տանելու: Հետագա մի քանի օրերին մայրս գնալով ավելի ու ավելի էր վատանում: Ուտելուց բացարձակ հրաժարվեց. չէր խոսում, միայն թեթև շնչում էր: Քույրերս ամեն կերպ ուզում էին նրան խոսեցնել, տրամադրությունը բարձրացնել. «Մայրիկ, ինչու՞ չես խոսում, մեզանից խռովե՞լ ես, մեզ չե՞ս ուզում տեսնել: Ահա մենք քովդ նստած

ենք»: Նա լուռ էր: Մեծ քույրս մի այլ փորձ արեց, սրտին մոտ. «Մայրիկ, կառավարությունից հրաման կա, բոլոր հայերը նորից իրենց տեղերը պիտի վերադառնան, արդեն բոլորը պատրաստվում են Թամզարա գնալու, շուտ լավացիր, որ մենք էլ նրանց հետ գնանք: Լուր կա, որ բանտարկված բոլոր հայերը նույնպես ողջ են, հայրիկն էլ ողջ է, մեզ է սպասում, կամ էլ ինքը կուզա մեզ տանելու»: Նա դարձյալ լուռ էր ու անտարբեր, միայն շրթունքները թեթև շարժվեցին, երեսին ժպիտ երևաց, բայց ոչինչ չկարողացավ ասել:

Լուսադեմին զարթնեցի, աշնանային պաղ քամին մեղմ փչում էր, ծառերի տերևները օրորվում էին: Նրանց արանքից լուսնի շողերը մերթ ընդ մերթ մեզ լուսավորում էին: Վեր կացա, նստեցի, մայրիկը անշարժ պառկած էր: Լուսնի շողերը մի պահ նրա դեմքը լուսավորեցին. դեմքի գույնը փոխված էր: Երկու քույրերս գլխահակ, ձեռքները խաչած, լուռ նստած էին նրա գլխավերևում: «Ինչպես է մայրիկը», - հարցրի: Քույրերս պատասխանի փոխարեն լաց եղան⁴²: Փոքր քույրս թեքվեց ինձ վրա, գլուխը սեղմած կրծքիս, հեկեկում էր... Մայրս այլևս չկար... Մենք մնացինք անձոնող և այդ պահից կոչվեցինք որբ: Հորաքույրս լուռ նստած ձեռքերն էր տրորում, փոքր եղբայրս իրեն տանջող ցավերից ծանր տնքում էր և չհասկացավ, որ ինքը մնաց առանց մայրիկի... Առավոտյան քույրերս մայրիկի վրայի շորերը կարգի բերեցին, մազերը մատնեցին հարդարեցին, գլխաշորը պատշաճ կերպով կապեցին: Եկան մեռել հավաքողները՝ երկար ձողերը ուներին դրած: Նրանցից մեկը ձողի ծայրի կեռ երկաթը զարկեց մայրիկի մարմնի մեջ և քաշելով տարավ ներքև դեպի գետափ: Մեզանից ոչ մեկը չգնաց նրա ետևից, ներկա չեղավ մայրիկին գետ-գերեզմանին հանձնելու արարողությանը...

Երկու օր էր, ինչ չէի տեսել որբանոց տեղավորված Հակոբ եղբորս: Ծանր վշտի այդ պահին նրան տեսնելու մեծ փափագ զգացի: Սիրտս վշտացած, հոգիս ընկճված, արդեն լրիվ որբացած, գնացի որբանոց, որք եղբորս տեսնելու: Գնալուց առաջ քույրերս պատվիրեցին, որ մայրիկի մահը թաքցնեմ նրանից: Երբ մտա որբանոց, նկատեցի, որ երեխաները շատացել են: Բոլորը դեռ իրենց ցնցոտիներով էին: Ոչ ոք իրար դեռ չէր ճանաչում: Այնտեղ արդեն կար թուրք աշխատող կին: Խոսակցություն կար, որ որք երեխաներին թրջացնելու են⁴³: Մտա երեխաների մեջ, փնտրեցի եղբորս, անունով կանչեցի: չկար ու չկար: Բարձրացա վերև, նայեցի նրա պառկած տեղը, այնտեղ էլ չկար: Այդ պահին ներս մտավ աշխատող կանանցից մեկը, նրան հարցրի. «Մորաքույր, եղբորս եմ նայում, չեմ գտնում, ահա այստեղ պատի տակ»: Կինը մոտեցավ ինձ. «Տղաս, այնտեղ պառկողը քու եղբա՞յրդ էր, կլոր երեսներով...»: Նա ընդիուպ մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս, գլուխը կախեց, մի պահ լուռ մնալուց հետո ասաց. «Ուրեմն դու նրա եղբայրն ես հա՞, խեղճ տղան այն գիշերը մահացավ, տարան գետը գցեցին»: Ուտքերս թուլացան, գլուխս պտտվեց, սեղմվեցի մորաքրոջ կրծքին ու

բարձր ծայրով լաց եղա: Մորաքույրը ձեռքերով գլուխս շոյում ու հորդորում էր ինձ.«Մի լար, տղաս, հանգստացիր, հիմա ի՞նչ պիտի անենք, մենք բոլորս էլ հարազատների կորուստ ունենք, վշտի մեջ ենք, հերիք է լաս»,-մխիթարում էր նա ինձ: «Հապա ինչպես չլամ, այս գիշեր մայրիկս մահացավ, առավոտյան տարան գետը զցեցին, եկա այստեղ եղբորս տեսնելու, հիմա նա էլ չկա: Փոքր եղբայրս ծանր հիվանդ, գետնին պառկած է, նա էլ երևի չապրի, ապա ես ինչպես դիմանամ, ասա, մորաքույր»: «Իսկ ե՞ս ինչպես դիմանամ, ես մայր չե՞մ,-ասաց մորաքույրը,- մինչև այստեղ հասնելը երեք զավակներս սովից մահացան, մեկին անթաղ թողցի ճանապարհին, երկուսին գետը նետեցինք, հիմա ողջ հայությունն է մեռնում, մենք բոլորս լաց ենք լինում, թուրքերը այսպես կամեցան մեզ հայերիս, ի՞նչ հանցանքի համար, հայ քրիստոնյա լինելու՞ս համար: Աստված նրանց բելա՞ տա: Քալե տղաս, ես քեզ մինչև ձերոնց մոտը կտանեմ», -այսպես հորդորելով ձեռքս բռնեց, երկուսով իջանք ցած, այնտեղից մի կտոր հաց բերեց, տեղավորեց ծոցս, և մենք ճանապարհի ընկանք մինչև մերոնց մոտ: Ճանապարհին մորաքույրը ինձ հարցուփորձ արեց մեր ընտանիքի մասին՝ որտեղացի՞ ենք, երբ իմացավ, որ Շապին-Գարահիսարի Թամզարայից ենք, ուրախացավ, ինձ ամուր գրկեց ու համբուրեց.«Տղաս, ուրեմն մենք հայրենակիցներ ենք եղել, մենք էլ սուշեհիրցի ենք, ձեզի շատ մոտիկ»: ԵՎ նա պատմեց, որ Շապին-Գարահիսարում բարեկամներ են ունեցել և քանի-քանի անգամ եղել են բարեկամների մոտ: Մի անգամ էլ Թամզարայի վանքը բարեկամների հետ ուխտի են գնացել: Նա շատ էր հավանել ծառաշատ, ջրառատ դրախտավայր Թամզարան: Նա գովեց նաև իրենց Սուշեհիրը⁴⁵, այգեշատ, ջրառատ քաղաքը, որի պատճառով էլ այն անվանել են սուշեհիր /ջրի քաղաք⁴⁶/: Հետո պատմեց, թե ինչպես ամուսնուն և երկու եղբայրներին բոլորի հետ տարան, սպանեցին, իսկ իրենց հանեցին ու քչեցին:

Երբ հասանք մերոնց, լալով հայտնեցի եղբորս մահը. քույրերս, հորաքույրս լաց եղան, մորաքույրը նստեց քույրերիս մոտ, նայեց շուրջը, հարազատի պես ցավեց և մխիթարական խոսքերով մեզ հանգստացրեց: Երբ վեր կացավ գնալու, թեքվեց հիվանդ եղբորս վրա, համբուրեց, հետո ինձ համբուրեց. «Տղաս, ես քեզ շատ սիրեցի, կուզենայի քեզ հետս տանեի, տղայիս պես քեզ նայեի, քեզնով մխիթարվեի, բայց չէ, դու պետք է մնաս քույրերիդ մոտ՝ որպես պաշտպան, վերջապես դու տղա ես, նրանց պետք ես, առանց քեզի նրանց վիճակը ի՞նչ կլինի»: Նա մեզ պատվիրեց հաճախ այցելել իրեն: Այսպես անժամոք կլինը դարձավ մեզ համար հարազատ մորաքույր. նա մեզ սիրեց, մենք էլ նրան: Մահվան ճանապարհին, որը վիճակված էր մեզ անցնել, մեր ընտանիքը նույնպես քայքայվում էր. մայրիկի մահը մեզ համար շատ ծանր վիշտ էր: Ե՛րիշտ է, մեզ հետ էր հորաքույրս, բայց նա իր բնավորությամբ երեխայի նման էր, նա նույնպես կարիքս ուներ մեկի հսկողության, այնպես, որ նա չէր

կարող փոխարինել մայրիկին: Քանի դեռ այստեղ էինք, այնքան էլ սոված չէինք մնում: Այսպես, թե այնպես ուտելիք ճարում էինք, բայց վախենում էինք, որ կարող է մեզ գտնեն և խառնեն մեկ ուրիշ խմբի հետ, ստիպեն դարձյալ քայլել դաժան ճանապարհներով: Մեզ մոտ երևացին երեք թուրք պաշտոնյաներ, որոնցից մեկը բժիշկ էր, շրջեցին ամեն տեղ, դիտեցին բոլորին, արդեն շատ քչերն էին մնացել: Եկան, մեր գլխին կանգնեցին, երկար նայեցին քույրերիս, իրար հետ խոսեցին: Բժիշկը թեքվեց եղբորս կողմը, բռնեց նրա ձեռքը. եղբայրս զառանցում էր: Հետո մենք իմացանք, որ նրանք ուզում են քույրերիս տանել իրենց հետ: Մենք այդ չէինք սպասում: Մայրս, բոլոր դժվարությունները հաղթահարելով, մեզ հասցրեց այստեղ, որպեսզի գոնե իրար հետ լինենք, իսկ հիմա նրանք ուզում են քույրերիս տանել. այդ ինչպե՞ս կլինի: Պարզվեց նաև, որ մեզ ուզում են շուտով հավաքել և ճանապարհ հանել: Բժիշկը ասաց, որ ինքը թույլ չի տա, որ իրենց քաղաքը մնա այս աղտեղության ու վարակի մեջ: Քույրերս չէին ուզում մեզմից բաժանվել, լաց էին լինում: Նրանք համոզում էին. «Ինչու՞ եք լաց լինում, մենք ձեզ ազատում ենք այս և հետագա տանջանքներից, ձեզ վատ բան չենք անում, մեր տանը գործ կանեք, մեզ հետ կապրեք»: Քույրերս կամա-ակամա մեզանից բաժանվելու փաստի առաջ կանգ առան: Մայրս շատ էր մտահոգվում, որ նրանք թուրքերի ձեռքը չընկնեն, իսկ իրենք չէին ուզում մեզ թողնել այս անել կացության մեջ մենակ: Այսպես, թե այնպես, բաժանումը նրանց համար, հիմա արդեն հետագա տանջանքներից ազատվելու միակ միջոցն էր: Ո՞վ էր հարցնում մեր ուզել-չուզելը: Հորաքույրս իբրև մեծ իր խոսքը ասաց. «Գնացեք, աղջիկներ, քանի դուք նույնպես չեք հիվանդացել. գոնե դուք փրկվեք այս անտանելի տանջանքներից, ահա տեսնում եք չոջուխը ինչպես է տանջվում: Մեր մասին մի մտածեք, աստված ողորմած է: Գուցե խոսեք էֆենդիներին մեծ եղբայրնուղ համար ալ ճար մը ընե, իմ մասին էլ մի մտածեք, իմ ապրելս արդեն ավելորդ է, եթե այսքան բանը տեսա և դչինջ չեղավ. ուրեմն կդիմանամ»: Երկու էֆենդիները քույրերիս առան, տարան, ինձ էլ իրենց հետ վերցրին քույրերիս տեղը իմանալու: Էֆենդիները ապրում էին իրար մոտ: Սկզբում փոքր քույրս բաժանվեց⁴⁷: Ես գնացի մեծ քրոջս հետ. նրանք ինձ էլ ներս տարան, կերակրեցին, ուտելիք տվեցին: Հետո ես վերադարձա մեր տեղը:

Հետագա մի քանի օրերի ընթացքում հիվանդ եղբորս վիճակի ավելի վատացավ. նա այլևս բացարձակ բան չէր ուտում, իսկ երբ փորձում էր ուտել, գալարվում էր ստամոքսի ցավերից: Գիշերները նույնիսկ լաց չէր կարողանում լինել: Անտանելի ցավերից ձեռքերով գետնին էր ճանկռոտում, ոտքերը գետին զարկում: Անզորությունից հորաքույրս ձեռքերն էր տրորում, գլխին ու կրծքին էր խփում. «Ի՞նչ անեմ, յավրուս, Նորայրս, հորաքույրը ինչ անե, գլուխը որ քարին զարնե, երանի չլինեի, այս տանջանքը չտեսնեի: Աստված, դուն հասիր այս անմեղ

չոջուխին...»: Եվ այսպես մինչև առավոտ... Առավոտյան մեր կողքին պառկած հիվանդ կանանցից մեկը, խոսքը ուղղելով հորաքրոջս, ասաց. «Քա, քույրիկ, դուն խի՞ղճ չունիս, ինչու՞ ես չոջուխին ավելորդ տեղը տանջում, մեղք չէ՞: Չե՞ս տեսնում շուրջդ ինչ է կատարվում. ներքևը գետն է, տար գցե գետը, թող ժամ մը առաջ ազատվե այս անտանելի ցավերից»: Հորաքույրս լսեց այդ «խորհուրդը»: Թեքվեց, ուզեց գրկել, վերցնել, չկարողացավ, ուժ չունեի, ուժասպառ էր եղել: Եղբորս գլուխը առավ երկու ասփերի մեջ, ոտքերն ու մարմինը գետին քսելով, քաշելով տարավ մինչև գետափ, ես էլ լալով հետևեցի նրան: Հորաքույրս Նորայրին դրեց ավազի վրա, ծնկի եկավ, կռացավ, գրկեց, ջերմազին համբուրեց: Հետո երկու ձեռքերը երկարեց վերև և աղոթք մըմնջաց, երեսը խաչակնքելով, մի պահ լուռ մնաց: Ինչ-որ բան մտածելուց հետո ձեռքերով եղբայրիկիս ավազի վրայից դանդաղորեն հրեց դեպի ջուրը: Ջուրն զգալով մարմինը շարժվեց, ազատվելու փորձ արեց, չկարողացավ: Ջրի մի մեծ ալիք եղբորս մարմինը պարուրեց և ասից հեռացրեց: Երևում էր միայն մի ձեռքը, որը վերև էր բարձրացրել: Ամենավերջում ես տեսա նրա երկու փոքրիկ մատիկները. նա այլևս չկար⁴⁸... Աչքերս փակեցի ու գրկեցի հորաքրոջս: Մենք այլևս նույն տեղը չվերադարձանք, այն համարելով մեր ընտանիքի դժբախտության վայր: Ճանապարհի հորաքույրս ասաց, որ լավ կլինի դիմենք որբանոցի մորաքրոջը, գուցե նա օգնի ինձ որբանոց վերցնելու: Ես կտրականապես մերժեցի, ասելով, որ իրեն երբեք մենակ չեմ թողնի: Հորաքրոջս անձնական կյանքը չէր դասավորվել: Փոքր հասակում ծաղիկ հիվանդությունը դեմքի վրա հետքեր էր թողել, այդ իսկ պատճառով էլ չէր ամուսնացել: Նա մեզնով էր ուրախանում և տխրում. մեր կյանքը նրա կյանքն էր: Բարության ու հոգատարության մարմնացում էր, դրա համար էլ ինձ համար ծանր էր նրան մենակ թողնելը: Սակայն նա ինձ համոզեց, և մենք գնացինք որբանոց: Դռան առաջ նստած թուրք ծերունին մեզ արգելեց ներս մտնել. «Յասախ /արգելված է/, - ներսում հիվանդություն կա, բոլոր երեխաները հերթով մեռնում են, նրանց էլ տանում, գետն են գցում: Հուսահատված հեռացանք և քույրերիս ավելի մոտ, պարտեզների մեջ՝ մի պատի տակ, մեզ համար կացարան ընտրեցինք: Հետագա մի քանի օրերի ընթացքում երկուսով մնացինք այդտեղ: Տերեկները, երբ ես գնում էի ուտելիք գտնելու, հորաքույրս զգուշացնում էր. «Տղա, շատ հեռու չերթաս, մայն, որ գլուխդ մի փորձանք չգա, շուտ կուգաս, ինձի երկար ժամանակ միմեկ չթողնես»: Մի անգամ գնացի փոքր քրոջս տեսնելու: Դուռը թակեցի, բաց արեց տան տիկինը՝ խանումը: Հենց այդ միջոցին քույրս ներսից նկատեց ինձ և վազելով ու լալով մոտեցավ: Հագիվ էինք մի քանի բառ փոխանակել, երբ խանումը քրոջս վրա բարկացավ ու բղավեց. «Գնա այստեղից, ես քեզ քանի անգամ եմ ասել, որ այդ գյավուրի լեզվով այլևս չխոսես: Իսկ դու, - նա դարձավ ինձ, - չքվիր այստեղից և մոռացիր, որ այստեղ քույր

ունես»: Դուռը ամուր փակվեց երեսիս: Տխուր ու հուսահատված մտածում էի, որ հարազատներիցս շատերից զրկվեցի, իսկ ողջ մնացած հարազատներիս թույլ չէին տալիս տեսնել. ո՞ր մեղքիս համար: Մեծ քրոջս մոտ այդպես չէր. ինձ ներս էին տանում, կերակրում, ուտելիքով ճանապարհ դնում:

Մի օր, պարտեզում շրջելիս, իմ դեմ դուրս եկան մի խումբ երեխաներ՝ երեք ոստիկանների ուղեկցությամբ: Ինձ էլ խառնեցին նրանց հետ ու տարան, լցրին մի դատարկ տան մեջ, փակեցին դուռը և գնացին: Մենք մնացինք բանտարկված: Մի տղա մոտեցավ ինձ և ականջիս շնջալով ասաց, որ նկուղում մի ջարդված պատուհան կա, կարող ենք փախչել: Մենք փախանք դեպի մոտակա թփուտները և ահը սրտներումս թաքնվեցինք: Թաքստոցից տեսնում էինք, թե ինչ է կատարվում շուրջը: Ոստիկանները դարձյալ երևացին երեխաների հետ: Նախկին բերածնեիին տանից հանեցին, մի քանի փոքրիկ երեխաների առանձնացրին ու մի ոստիկանի հետ ուղարկեցին մի այլ ուղղությամբ: Մնացածներին իջեցրին ներքև, հանեցին կամուրջի վրա և բոլորին թափեցին գետը: Տեսնելով այս բոլորը՝ վախից դողում էինք: Սպասեցինք, մինչև մութն ընկավ: Երբ համոզվեցինք, որ մեզ այլևս վտանգ չի սպառնում, դուրս եկանք մեր թաքստոցից. տղան գնաց մի ուղղությամբ, իսկ ես վերադարձա մեր կացարանը: Հորաքույրս տեղում չէր, շրջեցի ողջ շրջապատը, ծայն տվեցի, բայց նա չկար ու չկար: Երկար ժամանակ սպասում էի, չէի հեռանում, հույս ունեի, որ նա կգա, ինձ կգտնի: Մտածում էի, թե միգուցե նրան գտել են ու տարել խառնել մեկ ուրիշ խմբի հետ, կամ նա, ինքն է գնացել ինձ որոնելու, քանի որ ես շատ ուշացա, կամ հիմա տանջվում է, որ իրեն տարել են, իսկ ես սպասում եմ. հազար ու մի բան էի մտածում: Հավատս չէր գալիս, որ կորցրեցի անուշիկ ու բարի հորաքույրիս, վերջին հարազատիս... Երբ բոլորովին մթնեց, ես սկսեցի վախենալ ու վախից անընդհատ հորաքրոջս էի կանչում, բայց, ավա՞ղ, նա չկար: Միակ հույսը, որ ծագեց իմ սրտում, դա քրոջս մոտ գնալն էր: Մթության մեջ, վախը սրտումս, մեծ դժվարությամբ գտա տունը: Դուռը թակեցի, բաց արեց քույրս: Ես լալով փարվեցի նրան, պատմեցի եղելությունը: Նույն պահին եկավ տան էֆենդին, ինձ ներս հրավիրեց և կարգադրեց, որ այսուհետև ոչ մի տեղ չգնամ, այլ մնամ իրենց մոտ. այդ պահից ինձ կոչեց նոր, թուրքերեն Սուլեյման անունով: Քույրս իր կողքին, երկրորդական մի տեղ, անկողին գցեց: Չորս ամիս հետո առաջին անգամ ես պառկեցի տան հարկի տակ, վրաս վերմակ, տակս շոր ունենալով: Առավոտյան, երբ քույրս վրայիցս շորերս հանեց, զարմանքով նկատեց, որ այն բոլորովին պատված է ոջիլներով: Վրագորեն հավաքեց, տարավ բակ, ավելով ավել, ինձ լողացրեց, նոր շորեր հարմարեցրեց ինձ վրա, ես մարդկային կերպարանք առա: Մի քանի օր մնալու ընթացքում նկատեցի, որ քույրս խիստ մտահոգված է, նա հաճախ ինձ փաթաթվում ու լաց էր լինում: Ես

փոքր էի և կային բաներ, որ չէի կարող հասկանալ: Բուրբուս ապրելու պայքար էինք մղում, իսկ չափահաս ու գրավիչ աղջիկները, ինչպիսին քույրս էր, ունեին իրենց սեփական հոգսը: Դա ես հասկացա տարիներ անց: Մի օր, երբ տանտերերը նստած էին ճաշի, քույրս ահաբեկված ձեռքիցս բռնեց ու կարգադրեց լուռ հետևել իրեն: Մենք աննկատ բացեցինք դուռը, փողոց դուրս եկանք ու արագորեն հեռացանք այդ շրջանից: Մենք էլ չգիտեինք, թե ուր ենք գնում: Գնացինք այն վայրերը, որտեղ հայերը եղել էին. հույս ունեինք գոնե մի հայ ընտանիք գտնել մենակ չմնալու համար: Եղանք այն վայրում, որտեղ վերջին անգամ կորցրել էի հորաքրոջս, նա չկար ու չկար: Մինչև հիմա էլ մեզ համար անհայտ է, թե ինչ եղավ մեր բարի հորաքույրը: Ծանապարհիմ մեր դեմ ելավ մի հայ կին: Նա հետաքրքրվեց մեզնով, մենք էլ իրենով: Խոսելով նա մեզ տարավ դեպի մոտակա տունը, որտեղ ժամանակավորապես ապրում էին հինգ հոգի: Նրանք Կիրասոն քաղաքից էին: Կիրասոնը մեր շրջանի Սև ծովի նավահանգիստն էր: Այդ քաղաքի վրայով էր առևտուրն ու ճամփորդությունը կատարվում դեպի Եվրոպա և այլուր: Կիրասոնը սերտ կապերի մեջ էր գտնվում մեր շրջանի մեծագույն քաղաք Շապին-Գարահիսարի հետ, որի ճանապարհը անցնում էր Թամզարայի վրայով⁴⁹: Նրա հայ բնակչության մեծ մասը ամռան արձակուրդները անց էր կացնում Թամզարայի գեղեցիկ բնության մեջ: Հիշում եմ, որ հայրիկիս աշխատանքի համար անհրաժեշտ բանքակե թելերը նույնպես բերվում էր ջորիներով Կիրասոնի վրայով: Կիրասոնցի կանայք, երբ իմացան, որ մենք թամզարացի ենք, շատ ուրախացան. մեզ համարեցին իրենց հայրենակիցը: Պարզվեց, որ իրենց կառավարության պահանջով, որպես լավ արհեստավորների, կարգադրված է նորից տեղափոխել Կիրասոն: Նրանք մեզ էլ առաջարկեցին իրենց հետ գնալ: Մեզ նման թափառաշրջիկների համար դա անասելի մեծ ուրախություն էր: Շուտով նրանց պիտի փոխադրական միջոցներ տրամադրեին: Մենք ձեռնամուխ եղանք փոքր քրոջս թրքի տնից ազատելուն: Երկու օր գնալ-զալուց հետո դա մեզ չհաջողվեց, քրոջս բանտարկել էին: Մնացել էինք երկու քարի արանքում: Կիրասոնցիները չէին կարող սպասել, իսկ մենք առանց քույրիկի չէինք կարող նրանց հետ գնալ: Նշանակված օրը՝ առավոտյան, բերեցին երկու ջորի և մեկ էշ: Մենք յոթ հոգով ճանապարհ ընկանք, անցանք այն վայրերով, որտեղ մենք մնացինք մինչև մեր ընտանիքի լրիվ քայքայվելը: Ծանապարհիմ այլևս ոչ ոք չկար, քաղաքը մաքրված էր «աղտեղությունից»: Իջանք գետափ, ելանք կամուրջի վրա, որտեղից դեռ ոչ շատ առաջ մեր ութ հոգուց բաղկացած ընտանիքը լրիվ կազմով անցել էր: Հիմա, ետդարձի ճանապարհին նույն ընտանիքից երկուսս էինք, գնում էինք մեր սիրասուն քույրիկի կարոտը սրտներումս, կարոտ, որը ուղեկցեց մեզ ամբողջ կյանքում: Գնում էինք՝ մեզ հետ տանելով մեր բոլոր սիրեցյալների սերն ու կարոտը: Զարմանալի է մարդկային մտածողությունը: Անցնելով այդ ճանապարհով՝ ես հիշում էի անցած-

գնացած դառը օրերը, որոնք դժվար է մեկնաբանել, սակայն զգում էի նաև երանություն, այդ, թեկուզ դաժան էին այդ օրերը, բայց մենք բոլորս միասին էինք, ուրեմն երանելի էին այդ օրերը: Այդ ժամանակ մտքովս անգամ չէր անցնում, որ շատ կարճ ժամանակում ես կկորցնեմ այդքան շատ «հարստություն»... Վերադարձի մեր ճանապարհը մեծ մասամբ անցնում էր այլ ուղղությամբ. այն շատ տեղերում անցնում էր գյուղերի ու բնակավայրերի միջով, հենց այդպիսի տեղերում էլ մենք գիշերում էինք: Մի տեղ մեզ համարեցին ոչ արտոնված ուղևորներ և ցանկացան մեզ հետ պահել խմբից, սակայն ուղեկիցների խնդրանքների շնորհիվ այդ փորձանքից էլ ազատվեցինք: Ես չգիտեմ, թե քանի օր տևեց մեր վերադարձը, սակայն անհամեմատ այն ավելի կարճ էր, քան գնալիս: Վերջապես մի օր՝ կեսօրին, Շապին-Գարահիսարի⁵⁰ բերդի տակով մտանք քաղաք, անցանք բերդի տակի հայկական թաղի կողքով, տեսանք այրված, ամայացած տները, եկեղեցին, առևտրական երկու տաշխանները, որոնցից մեկի մեջ հայրիկիս խանութն էր գտնվում, հիմա նրանք դատարկ, անօգտագործելի վիճակում էին: Հիշում եմ, դեռ մի քանի ամիս առաջ, այդ շրջանը բազմաթիվ մարդկանցով աշխույժ եռուզեռի մեջ էր: Շուկայի այդ մասում էր գտնվում «Կազինո» կոչվող շինությունը, որը ծառայում էր իբրև հյուրանոց: Մի քանի ամիս առաջ, ձերբակալված հայերի մի մասը լցրել էին այդտեղ և նույն գիշերը բոլորին սպանել. հենց այդտեղ մենք գիշերեցինք: Առավոտյան, երբ ելանք, տեսանք գետինը բարակ ձյունով ծածկված էր, ահա այդ ձյունի վրայով կիսաբոքիկ ոտքերով, դուրս եկանք դեպի Թամզարա տանող ճանապարհը: Թամզարա տանող այդ ճանապարհի վրա, մանկական անցյալի որքան սրտամոտ, հարազատ հուշեր կան հոգուս մեջ. այդ ճանապարհով էր տարիներ շարունակ անեն օր հայրիկը գնում քաղաք իր գործին և երեկոյան վերադառնում տուն: Մի քանի անգամ հայրիկիս ու մայրիկիս հետ այդ ճանապարհով գնացել են քաղաք, վերջին անգամ էլ հորեղբորս տղայի՝ Կարապետի հետ, դպրոցից⁵¹ փախնելով, քաղաքի ճամփան ենք բռնել, հասել հայրիկիս խանութը: Տարին մեկ օր քաղաքի ողջ հայությունը այս ճամփով տեղափոխվում էր Թամզարա՝ վարդավառի տոնակատարությունը⁵² այստեղի վանքի շուրջը կատարելու համար: Ահա այս ուռիները, որոնց տակ հայրիկիս ու մայրիկիս հետ նստեցինք հանգստանալու, աղբյուրից ջուր խմեցինք: Ահա այն քարը, որի վրա մայրիկը ինձ նստեցրեց հանգստանալու, ահա այն ոլորապտույտ լեռնանցքը, որտեղից հորեղբորս տղայի՝ Կարապետի հետ անցնելիս բարձր ձայներ էինք հանում լեռներից արծազանքներ լսելու համար: Այս հիշողություններով տարված՝ քայլում էի ճանապարհով. շրջապատող ամեն բան նույնությամբ մնում էր: Հիմա բազմաթիվ հայ ճամփորդներ այլևս չկային: Այդ, ինչպիսի հարազատ դեմքեր կային, որ հիմա չկան: Մոտենում ենք Թամզարային. ահա հեռվից երևում է ինձ այնքան ծանոթ շրջապատը, ճանապարհի այս բարձունքը,

որտեղ երեկոները կանգնած հայրիկի վերադարձին էի սպասել, ահա ճանապարհի բաց տարածությունը, որտեղ մեզ հաց բաշխեցին և դուրս հանեցին մեր պապենական ծննդավայրից, քչեցին դեպի անապատները՝ տառապելու, ոչնչանալու: Մենք այդ տառապանքների միջով անցանք ու տեսանք բոլորի տառապանքները, շատերի տանջալից վախճանը և մնացած շատ քչերը, որոնք դեռ ի վիճակի էին ուղի վրա կանգնելու, գնացին շարունակելու վերջ չունեցող տառապանքի ճանապարհը, քանի դեռ կար այնքան ժամանակ, մինչև մի օր մի տեղ նրանք էլ գտնեին իրենց վախճանը⁵³: Այս էր բուն նպատակը: Մեզ՝ ողջ մնացածներից երկուսիս, բախտ վիճակվեց կրկին վերադառնալու մեր ծննդավայր Թամզարան իբրև վկաներ, թե ինչ վախճան ունեցան 280 տուն հայ ընտանիքների կանայք ու երեխաները: Հետո ճանապարհը շարունակեցինք, մտանք մրգատու պարտեզների շրջանը, անցանք բարդիներով շրջապատված ծառուղին, այդ արդեն համարվում էր Թամզարան՝ նրա մուտքը՝ Թամզարայի բնության ամենագեղեցիկ շրջաններից մեկը, որի վերջավորության վրա երևաց հայկական թաղի ծայրամասը: Այդտեղ, երբեմն, երեկոները կանգնած քաղաքից հայրիկի վերադարձին էինք սպասում, հենց որ հեռվում երևում էր, վազում էինք նրան ընդառաջ, ամեն մեկս մտքով սպասում, թե քաղաքից հայրիկը մեզ ինչ է բերել: Հիմա այնտեղ ոչ ոք չկար, միայն անցյալի իմ մանկական քաղցր հիշողություններն էին, որ իմ մտքում վերհիշեցի, ու սիրտս ճնկվեց: Դանդաղ քայլերով անցանք տների կողքով և մտանք շուկա, այնտեղ նույնպես դատարկ էր, շատ քիչ մարդիկ էին երևում: Առաջինը մեր տան դիմացի Ավագենց⁵⁴ խանութը աչքիս զարկեց՝ հազար ու մի ապրանքներով լիքը, իր տեսակի այդ միակ խանութը, հիմա այն դատարկ, կիսավեր վիճակում էր, նրա դիմացը մեր թաղամասը տանող նեղ ճանապարհն էր, որտեղից երևում էր մեր հայրական երեք հարկանի տունը: Մի ակնթարթ աչքս զցեցի մեր տան վրա. հիմա այն մնացել էր առանց դռների, լուսամուտների, թալանչիները քիչ էին համարել լիքը տան եղածը, պոկել տարել էին դռներն ու լուսամուտները: Աչքերս փակեցի ու քրոջս սեղմվեցի, դանդաղ քայլերով առաջ անցանք ու եկանք կանգնեցինք մեծահարուստ Մուստաֆա էֆենդիի խանութի առաջ. մեր ուղեկիցները մեզանից բաժանվեցին ու շարունակեցին իրենց ճանապարհը: Էֆենդին խանութի առաջ մեզ կանգնած տեսնելով՝ նստած տեղից ելավ, եկավ, դեմքով մեզ ճանաչեց, զարմացած նայեց մեր արտակարգ խղճալի տեսքին, հապճեպ մի քանի հարցեր տալուց հետո, չուզեց մեզ ավելի երկար կիսաբոբիկ ուղեքրով կանգնած պահել ծյան վրա, մեզ անմիջապես տարավ իրենց տուն, մեզ ներկայացրեց իր կնոջը: Ինչ-որ բաներ մեզ պատվիրեց, ու ինքը գնաց իր գործին: Խանումն այն կինն էր, որ մեզ դուրս հանելու ժամանակ եկավ, մայրիկիս առաջարկեց երկու քույրերիս թողնել իրենց մոտ, մայրիկս չհամաձայնվեց: Հիմա մեր ընտանիքից երկուսս անցնելով բոլոր տեսակի տառապանքների

ճանապարհը, կորցրած բոլոր հարազատներին, երկուսով եկել, կանգնել էինք այդ նույն կնոջ առաջ: Նա, մեր անսպասելի, հանկարծակի հայտնվելը տեսնելով, զարմացած մեզ նայեց, ավելի շատ զարմացավ մեր խղճալի վիճակը տեսնելով, նաև իմանալով մեր ընտանիքի մյուս անդամների ճակատագրի մասին, տխրեց, շատ ցավ հայտնեց. «Վախ՛վախ, այս ինչ զուլում բերեցին մեզ հետ հաշտ ու խաղաղ ապրող այս ժողովրդի գլխին⁵⁵», -ասելով և աչքերը սրբելով: Այո, թուրք կին էր, բայց վերջապես մարդ էր, նա նույնպես մարդկային խիղճ, սիրտ ուներ, այո՛, ժողովրդի բոլոր խավերը չէ, որ չարիքի մասնակից եղան: Կինը մեզ անմիջապես կերակրեց, հետո իր ձեռքով մեզ լողացրեց, նոր շորեր հարմարեցրեց մեր վրա, հին շորերը նետեց կրակի մեջ: Մենք դարձյալ մարդկային կերպարանք ստացանք: Մի քանի օր մնացինք այդ տանը: Մի օր եկավ տեղացի Բեյուկ աղա անունով թուրք խանութպանը, որին ես լավ ճանաչեցի: Նրա խանութը գտնվում էր մեր տան դիմացի ճամփի տակը: Ինձ առավ տարավ տուն՝ իրենց հետ ապրելու, տունը, խանութը գործ անելու: Այդ, իհարկե, լավ էր ապրելու, գոյությունը պաշտպանելու համար. ուրիշ ի՞նչ էլք կար այդ ժամանակ: Բայց առաջին իսկ օրը հիասթափվեցի ու ատելությամբ լցվեցի այդ տան հանդեպ տեսնելով այնտեղ մեր տան իրերն ու կահկարասին: Պարզ էր, որ նրանք էին թալանել մեր տունը: Գոնե ես չտեսնեի. ինչ արած, լուրջությամբ ու համբերությամբ աշխատեցի հաշտվելով այդ ամենի հետ: Երբ շուկա՝ իր խանութը, տարավ, տեսա՝ այն արդեն իր նախկին խանութը չէր, հայի ընդարձակ, ճոխ խանութ էր զբաղեցրած՝ իր միջի ապրանքներով: Այստեղ կար վաճառքի դրած մեր տան՝ հայրիկիս պատկանող բամբակե կտորեղենը, այդ տեսնելով սիրտս դարձյալ լցվեց: Ամեն օրվա իմ գործն էր փայտ կոտորելը, նույն աղբյուրից ջուր բերելը, որտեղից ես միշտ մեր տան համար ջուր էի տանում՝ անցնելով Ավագենց տան առջևից: Հիմա ավելի կարճ էր այդ ճանապարհը: Մեզ մահվան քշող ու մեր տունը թալանողների՝ թուրք անարժան մարդկանց հարկադրված ծառայություն էի անում մի կտոր չոր հացի համար. գոնը պետք է մաքրեի, անասուններին կեր, ջուր տայի: Երբ առաջին անգամ դուլով լիքը ջուրը ձեռքիս մտա կիսախավար գոմը, երկու կով կար այնտեղ, դուլով ջուրը դրեցի առաջին կովի առաջ, ետևի երկրորդ կովը մթության մեջ վիզը երկարեց իմ կողմը, սկսեց մռնչալ, երբ երկրորդ անգամ դուլով ջուրը դրեցի նրա առաջ, նա փոխանակ ջուրը խնելու, սկսեց ձեռքերս լիզել. մթության մեջ նա ինձ իր նախկին կեր ու ջուր տվողին ճանաչել էր, ես էլ իրեն՝ մեր տան այնքան սիրելի կովին ճանաչեցի, այլևս սիրտս չդիմացավ, փաթաթվեցի կովի վիզը և լաց եղա: Շատ կարճ ժամանակում տան ու խանութի՝ ինձ հանձնարարված գործերին ընտելացա, պարտաճանաչ ու տեղին կարողանում էի դրանք կատարել. ինձանից գոհ էին: Արդեն խանութի առևտուրը նրանք միայն ինձ էին վստահում⁵⁶: Հաճախ նա օրերով բացակայում էր, գնում էր շրջակա գյուղերը՝

գնումներ կատարելու: Խանութը ես ինքս կարողանում էի բացել ու փակել: Օրվա ընթացքում շատ ծանրաբեռնված էի. խանութից տուն, տնից խանութ, ժամանակ չկար անգամ այցի գնալու մեր թաղը՝ տեսնելու հայրական տունը: Թամզարայում երկու հայ ընտանիքներ էին մնացել: Նրանց պահել էին իբրև անփոխարինելի մասնագետների: Դրանք կաշեգործներ և ալյուրաղաց ֆաբրիկայի ընտանիքներն էին⁵⁷: Նրանք հաճախ գալիս էին քաղաք՝ գնումներ անելու, նաև ինձ տեսնելու, ինձանից մի բան իմանալու մեր բոլորի ճակատագրի մասին: Ես էլ նրանցից էի մի բան իմանում: Նրանք գալիս էին այն ժամանակ, երբ աղան բացակայում էր: Այդպես իրենց ազատ էին զգում, ես էլ նրանց ամեն ինչ ծրի էի տալիս և որևէ բան նրանցից էի իմանում: Յայերի տները մեծամասամբ դատարկ, կիսավեր վիճակում էին, միայն մի քանի տներ զբաղեցված էին թուրքերի կողմից, այն էլ ուրիշ շրջաններից եկած ընտանիքներ էին կամ առանձին պաշտոնյաներ: Երկար ժամանակ քրոջս չէի տեսել, ինչ տեղափոխվել էի աղայի մոտ: Մի օր այդ հայերը ինձ հայտնեցին, որ քույրս գտնվում է իրենց շրջանում հայի երկհարկանի տունը գրաված թուրք ընտանիքի հետ, որը այստեղ էր տեղափոխվել Առուճոռա /Ալուջոռա/ գյուղաքաղաքից և հայի տան մեջ բնակություն հաստատել: Յենց այդ թուրք ընտանիքը իմանում է քրոջս մասին, գնում, տեսնում, հավանում են և տանում իրենց տղայի հետ ամուսնացնելու⁵⁸: Այսպիսով այն ինչից քույրս խուսափում էր ամբողջ ճանապարհին, հիմա իրականություն է դառնում: Ես նրան չեմ տեսել և նրա հետ խոսակցություն չեմ ունեցել, թե ինքը այս նոր փորձանքի մասին ինչ է մտածում, ինչ կարելի է անել այդ փորձանքից ազատվելու համար: Յաստատ գիտեի, որ նա չէր հաշտվում, որ կարող է մի օր թուրքի հետ ամուսնանալ և ապրել թուրքի հետ...

Արդեն հաջորդ տարին էինք մտել, չգիտեմ, թե որ ամիսն էր, դեռ ցուրտ էր: Աղան ու ես ոտքերս երկարած նստած էինք, հանկարծ հեռվում տեսա մեր տեր հորը՝ իր չափահաս տղայի հետ: Նրանք գալիս էին ոստիկանների ուղեկցությամբ. տանում էին ոստիկանատուն: Նրանց տեսնելով՝ ուրախացա, սիրտս ձգեց դեպի իրենց կողմը, մոտիկից տեսնելու համար խանութից դուրս ելա, քայլերս ուղղեցի դեպի ոստիկանատան կողմը: Աղան ետևիցս խիստ գայրացավ, ինձ հետ կանչեց, թե ինչ է, ուզում ես քեզ էլ նրանց հետ ուղարկեմ ուր որ նրանց պիտի տանեն: Վախեցած ետ դարձա: Նրանք ընդհանուր ձեռքակալության ժամանակ փախել և ապաստան էին գտել շրջակա հունական⁵⁹ գյուղերում, մոտ ութ ամիս մնալուց հետո, նրանց էլ հայր ու որդու, տարան այնտեղ, որտեղ տարան բոլորին, ի՞նչ հանցանքի համար, «հայ» լինելու համար...

Արդեն գարուն էր, աղան նստած էր իր տեղում, ես նստած էի կշեռքի մոտ, հենց նստած վիճակում հաճախորդին սպասարկեցի: Այդ ձևով հաճախորդին ճամփու դնելու համար աղան ինձ շատ խիստ տոնով

հանդիմանեց, անգամ հայիոյանքով ինձ գյավուրի տղա անվանեց: Փոքր էի, բայց ինքնասիրությունս վիրավորված զգացի, սիրտս չդիմացավ, աչքերս լցվեցին, լալով դուրս նետվեցի խանութից և քայլերս ուղղեցի դեպի քրոջս ապրած տան կողմը: Աղան ետևիցս մարդ ուղարկեց, համոզելով ուզեց ետ տանել, բայց արդեն ուշ էր, սիրտս կոտրված էր, հաստատ որոշում էի կայացրել այլևս չժառայել այդ անարժան թուրքի մոտ: Չորս ամսից ավելի էր անցել, ինչ մենք կրկին վերադարձել էինք մեր ծննդավայր Թամզարա: Քրոջիցս բաժանվելուց հետո նրան չէի տեսել: Ինքն, իհարկե, չէր կարող գալ ինձ տեսնել, ես էի, որ պետք է գնայի այնտեղ, ուր ինքն էր գտնվում: Այդ ես չարեցի, չգիտեմ ինչու: Յիմա, այս առիթով սիրտս լցված՝ միակ հարազատ քրոջս կարիքը զգացի, որին արդեն շատ էի կարոտել, առանց վարանելու մտա նրա գտնված տունը: Քույրս, հանկարծակի ինձ տեսնելով, մոռացավ ամեն տեսակ պատշաճ ձև, նետվեց ինձ վրա, առանց խոսելու լաց էր լինում: Ես զգացի, նրա լացի մեջ կար և իր անձնական վիշտը, այն, որ հակառակ իր կամքին /իսկ ով էր մեր կամքը հարցնողը/ իր անձնական կյանքը տնօրինված էր: Այն, որ պաշտոնապես պետք է ամուսնանար թուրքի հետ, որից ազատվելու ելք էր որոնում, մեկի օգնությամբ կարիքն էր զգում: Միակ հարազատ եղբայրը, տղամարդը ես էի, որի հետ նույնպես օգնության հույսեր էր կապում, ինչպես ասում են խեղդվող ձեռքը զգում է փրփուրներին: Ես այդ փրփուրն էի, որ կանգնած էի իր դիմաց, ինչ կարող էի անել, ոչինչ, իմ ներկայությունը միայն մխիթարություն էր իր համար: Այդ մխիթարությունն էլ այդ ժամանակ քիչ բան չէր մեր երկուսի համար: Տանեցիները ինձ ընդունեցին սիրալիք, իբրև բարեկամի. այդ ընտանիքը⁶⁰ բաղկացած էր չորս անձից, տան մեծը՝ հայրը, նախկին բարձրաստիճան զինվորական էր՝ պատկառելի տարիքով, մորուքով մարդ՝ արդեն հանգստյան կոչված: Կինը՝ անհամեմատ երիտասարդ, իսկական խանում կին, չափահաս աղջիկը և տղան՝ փեսացուն⁶¹, քրոջս հասակին՝ տասնվեց տարեկան, որը նոր էր վերադարձել Սվազից, ամուսնության համար ուսումը թողած, շտապել էր տուն: Քույրս, արդեն իբրև թուրքի հարս⁶², մտած էր թուրքական կենցաղի մեջ: Դուրս գալուց չաղրա էր հագնում, երեսը քողով ծածկում⁶³...

Սեբաստիայի որբանոցից՝
մայր Դայաստան, ավագ քրոջ
որոնումն ու հայտնաբերումը:

*Չայր չմեռնիր, վկայ մեր ներկան,
եօթ միլիոն աչքեր ահա յառած կան
Լոյս լուսաւորչի անմար կանթեղին,
Նորածագ Արեւ Մայր Դայաստանին:*

/ Ը. Քեթրախեան/

Թամզարա՝ այսպես է կոչվում այն փոքրիկ գյուղաքաղաքը, որտեղ են ծնվել և իմ ուրախ ու երջանիկ մանկությունն են ապրել: Մանկությանս տասներորդ գարնանը, երբ վարդերը նոր էին բացվել, և մեր պարտեզի նորահաս թուփը դեռ չէինք կտրել, մեզ կանանց ու երեխաներին / տղամարդիկ այլևս արդեն չկային/ դուրս հանեցին մեր հայրական տներից և ստիպեցին քայլել մեզ անհայտ ու շատ դժվարին ճանապարհներով: չգիտեմք մինչև ու՞ր և ինչու: Մեզ հետ չթողեցին վերցնել ոչինչ, այն ամենը ինչ մերն էր, թողեցինք այնտեղ: Ծննդավայրից են ինձ հետ տարա միայն մանկական հիշողություններս, որոնք միշտ հիշեցի կարոտով: Կարոտը մարդու լավագույն զգացմունքներից մեկն է, այն շատերի ողջ կյանքի ուղեկիցն է դառնում: Ես չգիտեմ կա՞ մարդ, որ ապրած ու զգացած չլինի կարոտի զգացմունքը, որ չկարոտի հարազատներին, իր ծննդավայրը, հայրական տունը, մանկությունը, դպրոցը՝ այն ամենը, ինչը հարազատ է սրտին ու հոգուն, և որքան շատ է հեռու մնում այդ ամենից, այնքան կարոտը մեծանում և այն ավելի զգալի է դառնում, ի վերջո այն դառնում է հոգեմաշ: Ահա այդպիսի հոգեմաշ կարոտը եղավ իմ ողջ կյանքի ուղեկիցը⁶⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կառավարությունը հանրությանը հանդարտեցնելու նպատակով հիմնադրում է որբանոցներ⁶⁶: Օ.Մկրտչյանը իր՝ Ք.Ղարագոյազյանին նվիրված «50 տարի ՄԲԿԿ շարքերում, Կյանքի իմաստը» հոդվածում գրում է. «Պոլսից մինչև Լենինական անցած ճանապարհին, իր նման հարյուր հազարավոր պատանիների նման, Քաջունին անամոք վիշտ ու զրկանք էր կրել գաղթի ճանապարհին: Նրանց բազմանդամ ընտանիքի

անդամների համար եփրատն էր դարձել գերեզմանատուն, իսկ ինքը հրաշքով փրկվել և հայտնվել էր Թուրքիայի ամերիկահայ որբանոցներից մեկում⁶⁷: Լ.Ղուկասյանը իր «Վերածնունդ» հոդվածում նույնպես գրում է այն մասին, թե ինչպես հրաշքով ողջ մնացած տղան անցնում է որբանոցից որբանոց և ստանում նախնական կրթություն⁶⁸: Ըստ Քաջունու երեխաների հայտնած տեղեկությունների՝ Քաջունին ամերիկացիների կողմից իրականացրած որբահավաքներից մեկի ժամանակ հայտնվել է Սեբաստիայի /Սվազ/ որբանոցում: Ահա, թե ինչպես է նկարագրում այդ որբահավաքը Քաջունու հայրենակից և մանկության ընկեր Շահնազար Քեթրախեանը. «Այս անգամ նոր Կառավարութեան հրամանով դարձեալ կը հաւաքուէին, յանձնելու համար ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ: Այս ի՞նչ բախտաւորութիւն ինձ նման որբերուն համար: Ո՞ր ինչ «ապտակ» ու «հարունած» մեր կեղեքիչներուն: Յաջի Աղան չուզեր զիս յանձնել, սակայն հրամանը խիստ է ու ստիպողական, ի վերջոյ սակայն կ'ըսէ. - Գնա, տղաս, քեզ դպրոց կը դնեն, մարդ կ'ըլլաս. մեզ մի՛ մոռնար... Ո՞ր կ'երթանք. ուր»: շիտակ Արամեան Դպրոց-Որբանոց, ու զիս կը յանձնեն Առաջնորդարան: Յոս կը սպասեն քոյրս եւ քեռայրս, նաեւ մեծ թուով /շուրջ երեք հարիւր/ ինձմէ առաջ բերուած որբ տղաք: Քրոջս ուրախութեանը չափ չկայ, կը գրկե զիս, կը համբուրէ...ալ ազատուած են Յայութեան համար, Յայ եկեղեցիին, Յայ Գիրին ու հայ Շունչին համար: Յայերէնս չեմ մոռցած. քանի մը օր չանցած՝ յստակ ու մաքուր կը խօսիմ մայրեմի լեզուս. չեմ մոռցած չորս հովերուն ցրուած հարազատներս, անոնց անունները եւ մանկութեան յիշատակները⁶⁹: Մենք ենթադրում ենք, որ Քաջունին այս հրամանի համաձայն հեռացել է ավագ քրոջ ընտանիքից և հայտնվել Սվազի որբանոցում: Լիպարիտ Ազատեանը իր «Յայ որբերը Մեծ եղեռնի» աշխատության առաջին գրքում բերում է մի ցուցակ ըստ որի. «Զինադադարի շրջանին՝ ողջ մնացած որբերուն թիւը նույնիսկ հարիւր հազարի չի հասնիր»: Մեզ հետաքրքրող Սեբաստիայի /Սեբաստիա-Մարզուանի/ տարածքներում որբերի թիվը ըստ այդ ցուցակի հասնում էր 5600-ի: Ըստ Ը. Քեթրախեանի՝ Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատուց մարմինը /Ամերկոմ Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե American Committee for Relief in the Near East, ACRNE/ «նախախնամական» դեր է կատարում վերապրող որբերի համար և իր փրկարար ձեռքը հասցնում մինչև Սեբաստիա՝ Արամյան վարժարան՝ Յողդարի բարձունքին կանգուն նախկին SIVAS TEACHERS' COLLEGE-ը փոխակերպելով նախակրթարանի աստիճանով որբանոց-դպրոցի⁷⁰: Այս մասին գրում է նաև Լիպարիտ Ազատեանը իր «Յայ որբերը Մեծ եղեռնի» աշխատության առաջին գրքում. «Արամեան որբանոց-վարժարանը կ'ընդունի հարիւրաւոր որբ երեխաներ, որոնք կը փոխադրուին նախկին Սվազի Ամերիկեան Ուսուցչական Գոլէճը: Այսպիսով, այս հաստատութիւնը կ'ընդունի 300-է

աւելի մանչեր 5-16 տարիքի: Եւնքին երրորդ յարկը երեխաներու ննջարաններն էին»⁷¹: Նշենք նաև, որ մեր ձեռքի տակ եղած լուսանկարներից բացի կա «SIVAS TEACHERS' COLLIGE TURKEY-IN-ASIA.» մակագրությամբ մի բացիկ, որբանոցի շենքի ընդհանուր պատկերով, որի կրկնօրինակը հրատարակված է Շ.Քէօթահեանի աշխատությունում⁷²: Ինքը Քաջունին, իր ինքնակենսագրությունում գրում է. «Ես ապրեցի թուրքական և հայկական որբանոցներում, որտեղ և ստացա իմ նախնական կրթությունը»⁷³: Շ.Քէօթահեանի Ք. Ղարազյոզյանին հասցեագրված «Դեկտ. 26, 1987 Լոս Անճելըս» նամակից. «...Մեր երկուսի համար, ինչպես գրում ես, մեր տարիքի մարդիկ, ծանօթ, թե անծանօթ, շատերը, այս աշխարհից հեռացել են, մեզ պահողը եղել է մեր չարքաշ կյանքը, մենք երկուսս էլ շատ ենք չարչարվել կյանքում... Սիրելի իմին հարազատ, անկեղծ ընկեր, Քաջունի ջան, ես Քեզի շատ եմ սիրեր ու հարգեր որպես հարազատ անկեղծ, մեր անկեղծ բարեկամությունը... Ես իմ հուշերը, կենսագրությունը գրել եմ, կուզեմ տպագրութեան տամ, գրել եմ նաև մեր մասին թուրքերու որբանոց, մեր գոլճի են անմոռանալի օրերը... մենք մեր անցեալը չենք կարող մոռնալ...»: Իր հուշերում Շ.Քէօթահեանը հետևյալ կերպ է բնութագրում Սվազի որբանոցի որբերին, որոնց թվում հիշում է նաև իր մանկության ընկեր Քաջունուն. «Արամեան Ազգային Որբանոցը եւ Գոլճ- Որբանոցը, զանազան վայրերէ հաւաքուած որբերուն մէջ կային մի քանի Շապին Գարահիսարցիներ, ինչպէս՝ Սուրեն Վեցիկեանը, Վահէ Սխտորճեանը, Եզնիկ Վեցիկեանը, Թվէբէլեան մը եւ ուրիշներ, որոնց անունները չեմ յիշեր. իսկ Թամզարայէն՝ մանկութեանս ընկեր Քաջունի Գարակօզեանը, որուն անակնկալ հանդիպումս մեծ ուրախութիւն պատճառեց ինծի, Գայաստանի մէջ, նախքան մեր Թուրքիա եւ ծննդավայրս այցելութիւնը: Սոյն որբանոցներուն բոլոր Գայորդիներն ալ անշուշտ հրաշքով փրկուածներն էին ահաւոր Եղեռնէն, որուն սարսափն ու անդոհը կարծէք դեռ դրոշմուած կը մնային անոնց դէմքերուն վրայ. քիչերը միայն վերապրած մայրեր կան այլ հարազատներ ունէին»⁷⁴: Ք. Ղարազյոզյանի մահից հետո նրա որդուն և հարսին ուղարկված Շ.Քէօթահեանի նամակից. «7 Մարտ, 1990, Լոս Անճելըս

.....Չինքը ես յիշեմ, երբ Մերաստիոյ Գոլճ-որբանոցի սաներէն, խտիուն, լուրջ ու ազնիվ պատանի մըն էր. ես ալ նոյն տարիներուն նոր նշանակուած ուսուցիչ մըն էի առաջին երկու դասարաններուն: Յաճախ կը հանդիպէինք ու կը խօսէինք անցեալի արիւնալի դէպքերուն մասին:

.....Իր ինձ ուղղած 4 օգոստ., 1989 թուակիր երկար նամակին մէջ կը գրէ /այդ իր վերջինն էր/. «...Գոնէ նամակով քեզ հետ կ'իյնեմ, իմ սիրելի Թամզարայի մանկական յիշողութիւններից մեկը, որ մնացիր, կաս դուն իմ սրտի մէջ, իմ սիրելի Շահնազար, և ես էլ քու սրտի մէջ»: Որբանոցում ապրած տարիների սակավ տվյալներից և ինքնակենսագրությունից

իմանում ենք, որ բժշկական հանձնաժողովի որոշմամբ Քաջունու ծննդյան թիվն է ընդունվում 1906-ը⁷⁵: «Գայրս փոքրամարմին էր, այդ պատճառով էլ նրան տվեցին 1906թ-ով ծննդյան վկայական, և վերջապես փոքր երեխա էր, լավ չէր հիշում, բայց ենթադրում էր, որ ծնվել է 1904-ին»,- ասում է ավագ դուստրը: Քաջունու չորս զավակներն էլ հիշում են այն միջադեպը, երբ նրան և որբ ընկերներից մեկին հաջողվում է մտնել կամ որբանոցի, կամ ինչ-որ մեծահարուստի մեղրի պահեստը և ուտել շատ մեղր, կերել են անհագուրդ, իսկ հետո որբան են ծարավից տանջվել.- «Արտներս այրվում էր, ջուր չկար, այնքան վատ էինք մեզ զգում»: Ամենածիծաղելի դրվակներից է այն, թե ինչպես դեռատի Քաջունին դռան բանալի անցքից հետևել է դաստիարակ-ուսուցիչների սիրային հանդիպումներին, նա հաճախ է այդ մասին հիշել ժպիտը դեմքին: Քաջունին նաև հաճախ է անդրադարձել որբանոցում իրականացվող պատժաձևերին: Ավագ դուստր պատմածներից մեր կարծիքով ուշագրավ է այն, որ մեղավոր երեխայի վրա կախել են համապատասխան բառով պիտակ, օրինակ «ստախտս», և որբերին շարք տողան, կանգնեցնելուց հետո պատեցրել շարքերի միջով, որից հետո մեղավորը ամբողջ օրը կրել է այդ պիտակը: Քաջունու հուշերում կարդում ենք, որ ավագ քրոջ ամուսինը ուսում էր ստանում Սվազում և ամուսնության համար, ուսումը թողած, շտապել էր տուն: Ըստ Ք. Ղարազյոզյանի զավակների պատմածի՝ փեսան հաճախ է այցելել Քաջունուն, հավանաբար Սվազում ուսանելու ընթացքում: Գատկապես նշում են փեսայի առաջին այցելությունը, երբ Քաջունին փախչում է չկամենալով խոսել թուրք փեսայի հետ, սակայն դաստիարակներից մեկի խորհրդով ետ է դառնում քրոջից լուրեր իմանալու.- «Քաջունի, այդպես չի կարելի, այդ մարդը քո ավագ քրոջ ամուսինն է»: Ըստ ավագ դուստր պատմածի՝ ինքը՝ Քաջունին էլ հաճախ է գնացել ավագ քրոջը այցելելու⁷⁶:

Սովորաբար նորաստեղծ պետությունները իրենց քաղաքական համակարգը ժառանգում են նախորդ վարչակարգերից: Այդ ժամանակ էլ այս պետությունները կանգնում են հետևյալ ընտրության առջև կամ ընդունել, կամ մերժել, կամ էլ արդիականացնել այդ ժառանգությունը⁷⁷: Զնայած Մուստաֆա Քեմալի կողմից Օսմանյան կայսրությունից ժառանգած ավանդույթների, քաղաքականության, հասարակարգի մերժման և թուրքական պաշտոնական պատմագրության կողմից երիտթուրքական և քեմալական ժամանակաշրջանները իրարից անջատելու փորձերին իրականությունը մնում էր անփոփոխ, որի արդյունքում էլ, ինչպես արդեն նշել ենք, Քեմալական շարժման ժամանակ հայկական որբանոցները փոխադրվում են Մերձավոր Արևելքի արաբական երկրներ եւ Գոնաստան: Ըստ «Յուզանատեան Մեծ Եղեռնի, 1915-65» աշխատությունից բերված տվյալների. «Թուրքիոյ ներքին զաւառներուն մէջ ամէն օր ջարդի ու մահուան սարսափին տակ

ապրող հայ որբերը հետզհետե կը փոխադրուին ապահու երկիրներ: Սեբաստիոյ 5600 որբերը Յունաստան, Խարբերդի 5300 որբերը Լիբանան եւ Պաղեստին: Ամերիկեան Նպաստամատոյցը եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իրենց վրայ կ'առնեն արևմտահայ որբութեան գրեթէ կեսէն աւելին հոգատարութիւնը Յունաստանի, Լիբանանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ: Կը բացուին կանոնաւոր դպրոցներ, արհեստանոցներ, կը կազմուին մարմնակրթական միութիւններ...»⁷⁸: Շ.Քէօթահեանը հիշում է. «Օգտուելով Լոզանի Դաշնագրի տրամադրութիւններէն, հաւանաբար, Անկարայի Կառավարութեան հետ եղած մասնաւոր կարգադրութեան իբրեւ հետեւանք՝ Ամերիկեան Նպաստամատոյցը կ'որոշէ Սեբաստիոյ, ինչպէս նաեւ Խարբերդի, Սուրիոյ եւ այլ վայրերու իր որբանոցները փոխադրել Պոլիս, առաւելապէս Յունաստան... Նոյեմբերի մէջ ենք / 1922/ եւ արդէն իսկ առաջին կարաւանը պատրաստ է դէպի Սամսոն ճամբայ ելլելու...»⁷⁹: Ակնհայտ է, որ Շ. Քէօթահեանի տեղեկութիւնները որբանոցների տեղափոխութեան վայրի մասին հակասում են գիտական գրականութեան մեջ ընդունված կարծիքին: Այս մեջբերումը ուշագրավ է նրանով, որ մեզ պատկերացում է տալիս Սեբաստիայի որբանոցի տեղափոխութեան տարեթիվ մասին: Լիպարիտ Ազատեանը գրում է. «Որբերու զանգուածային փոխադրութիւնը դէպի Սուրիա եւ Լիբանան տեղի կ'ունենայ 1922-1923 տարեշրջանին, Կիլիկիոյ վերջնական պարպումին հետեւանքով: Ամերիկայի Նպաստամատոյցի վարիչները մտահոգուելով յոյն-թրքական բուռն պատերազմի հետեւանքներով, կ'որոշեն Թուրքիոյ հողամասին վրայ, հաւասարապէս հոգ տանել որբան քրիստոնեայ, նոյնքան եւ թուրք որբերուն: Ամերիկեան Նպաստամատոյցը, ներքին գավառներուն մէջ գտնուող որբերը՝ Կեսարիայէն, Գոնիայէն, Մարզուանէն, Սվազէն, Սամսոնէն եւ Տրապիզոնէն, ցամաքի ճամբով կը փոխադրէ Պոլիս, ուրկէ նաւով՝ Յունաստանի Փիրո նաւահանգիստը, եւ կը տեղաւորէ զանոնք Յունաստանի 13 որբանոցներուն մէջ: Հազարաւոր որբեր Սուրիա եւ Լիբանան փոխադրելու ծանր աշխատանքն ու պատասխանատուութիւնը Ամերիկեան Նպաստամատոյցը կը յանձնէ մեծ հայասէր, զուիցերիացի միսիոնար Եակոբ Քինձլըրին...» կամ «1922-ի վերջերը Ամերիկեան Նպաստամատոյցը, քեմալական ուժերու յառաջխաղացման հետեւանքով, իր որբանոցները կը փոխադրէ Սվազէն, Խարբերդէն, Մարզուանէն եւ ուրիշ քաղաքներէ դէպի Յունաստան, մասնաւոր Պոլսոյ որբերը»⁸⁰: Սակայն Քաջունի շատ չափահաս որբերի նման նաւից իջնում և զերադասում է մնալ Կ.Պոլսում: Որբերի Հունաստան տեղափոխվելու պատճառով բավականին երկար ժամանակ կտրվում է Շահնագարի և Քաջունու կապը. «Որբերու Յունաստան փոխադրուելէն ետք, Քաջունիին հետքը կորսնցուցած էի, երբ 1969-ին կնոջս հետ Մայր Հայաստան մեր առաջին այցելութեան, զարմանքս եւ գոհունակութիւնս

մեծ եղաւ, անակնկալօրէն հանդիպելով Քաջունիին, որ իմանալով մեր ժամանումը, Երևան էր եկած հեռաւոր Լենինականէն մեզ դիմաւորելու»⁸¹: Շ. Քէօթահեանի «Յուշեր ու նիշեր» ժողովածուում կա մի խմբակար հետևյալ մակագրութեամբ՝ «Սեբաստիոյ Ամերիկեան Գոլէժ-Որբանոցի հայ որբերը, ուսուցչութիւն եւ պաշտօնէութիւն: Լուսանկարուած՝ Ընթացապատեան Եղբայրներու կողմէ, 1922-ի աշնան, Գոլէժի շէնքին առջեւը»⁸², որի կրկնօրինակը կա մեր ձեռքի տակ եղած, Ք.Ղարագոյոյանի ընտանիքի կողմից մեզ տրամադրված լուսանկարներում: Որբերի տեղափոխութեան տարեթիվ հետ կապված Շահնագարի հայտնած տվյալները մեկ անգամ ևս հաստատվում են Սվազի որբանոցում լուսանկարված Քաջունուն պատկանող երեք լուսանկարներից վերջինի ամսաթիվով /16.IX 1922/: Խմբակարի կենտրոնում Քաջունին է երկու որբ ընկերների հետ: Ի դեպ նշենք, որ որբանոցի լուսանկարներից պատկերացում ենք ստանում Սվազի արական և իգական որբանոցների սաների համազգեստների մասին: «Հայրս,-պատմում են Քաջունու երեխաները,-ասում էր, որ այդ լուսանկարում պատկերված քեչայից մաշիկները իրենք էին որբանոցում կարում և հագնում: Երբ փոքր էինք, նա մեր համար էլ այդպիսի մաշիկներ էր կարում. տաք էին և շատ հարմար»:

Շ.Քէօթահեանը իր հուշերում նշում է, որ որբանոցում դասավանդած տարիներին ձեռնամուխ է եղել «Ալիս» պարբերաթերթի հրատարակությանը. «...ուրեմն՝ «տպաքանակ»-ս էր միայն վեց. անոնցմէ մին կը դրկէի նախապէս Գոլէժ, այժմ՝ Որբանոցի վերածուած ուսուցիչներուն, ուրիշ օրինակ մը՝ Աղջկանց Որբանոց եւ մէկն ալ՝ չափահաս աղջիկներու ապաստանարան-աշխատանոցը»⁸³: Այս մեջբերումը արեցինք այն բանի համար, որ այս Աղջկանց որբանոցում էր պատսպարվել Քաջունու հորեղբոր աղջիկը՝ Համեստուհին, որի մասին Քաջունին իր հիշողութիւններում որևէ հիշատակութիւն չի անում: Մեր ձեռքի տակ եղած, Սվազի որբանոցում լուսանկարված մյուս լուսանկարում Քաջունին և Համեստուհին⁸⁴ են: Վատառողջ Համեստուհու դողացող ձեռքով Քաջունուն գրված վերջին «1983, 2 դեկտեմբեր» ամսաթիվով նամակից. «Հայրիկիս անունը Գէորգ էր, ածականով՝ Ղարակէօզ: Գէորգ, կըսէին յուններուն գիւղերը կերթար, կերպաս կը ծախսէր...»: Այս լուսանկարը մեզ համար ուշագրավ է ոչ միայն Համեստուհու կրած համազգեստով, այլև լուսանկարի հակառակ կողմում Քաջունու ձեռքով թանաքով արված մակագրութեամբ՝ 31/XII 1919, Թուրքիա Սվազ, հավանաբար մակագրութեան վերջին երկու բառերը հեղինակը ավելացրել է ավելի ուշ, սովորական գրիչով: Հետաքրքիր է այն, որ Քաջունու և Աղրիմեի ճակատագրերը վերստին խաչվելու են շնորհիվ Համեստուհու, սակայն այս մասին կխոսենք ստորև:

Կ.Պոլսում ապրած տարիներին Ք.Ղարագոյոյանը աշխատել է ինչ-որ բերթի խմբագրութիւնում, իր օրվա հացը վաստակել է⁸⁵ տպարանից

վերցված մի քանի անուն թերթեր և լրագրեր վաճառելով: Պահպանված է նաև լրագրավաճառ Քաջունու լուսանկարը հետևյալ մակագրությամբ՝ «1923-մայիսի 5, Յիշինք Անցեալը, Կ.Պոլսոյ Տպաւորութիւններ», լուսանկարի ներքևի աջ անկյունում Ք. Գարակէօզեան ստորագրությամբ: Քաջունու ինքնակենսագրությունից իմանում ենք. «1924թ. ամռանը Թուրքիայից մի խումբ հայրենադարձների հետ եկա Չայաստան ու այդ ժամանակվանից իմ բախտը ընդմիջտ կապեցի Մայր հայրենիքի հետ»: Ահա թե ինչպես է նկարագրում այդ ամենը Ք. Ղարաբաղյանը իր «Դրանք, իսկապես, հրաշքի են նման...» հոդվածում. «Մայր հայրենիքի մասին իմ հուշերի շղթայի առաջին օղակը վերաբերում է 1924-ին, երբ ես, Տեր Զորի ահավոր ճանապարհը տեսած մի խումբ հայերի հետ Պոլսից ներգաղթեցի Չայաստան և բախտս ընդմիջտ կապեցի հայրենիքիս բախտի հետ: 1924-ի գարնանը նա [խորհրդային Չայաստանի կառավարությունը-Ի.Ա.] դարձյալ կազմակերպեց Պոլսից մեծ թվով հայ գաղթականների ներգաղթը Չայաստան: Պոլսոս հայկական եկեղեցիներում երևացին հայտարարություններ, իսկ եկեղեցիներից մեկում կազմակերպվեց Չայաստան փոխադրվել ցանկացողների ցուցակագրումը: Տարբեր ուղղությունների երկու հայատառ լրագրեր տարբեր վերաբերմունք էին ցույց տալիս հայրենադարձության գաղափարին: Դաշնակցական «Ճակատամարտ» թերթը ամեն կերպ վարկաբեկում էր Չայաստանը և արգելք հանդիսանում հայերի ներգաղթին, իսկ «Ժողովրդի ծայն» թերթը մանրամասն տեղեկություններ էր տալիս Չայաստանի մասին և ըստ ամենայնի խրախուսում հայերի մեկնումը մայր հայրենիք: Այդ ժամանակ Պոլսում էր գտնվում Սովետական Չայաստանի առևտրական ներկայացուցիչ Դ.Շահվերդյանը, որը միաժամանակ զբաղվում էր հայ գաղթականների գործերով: Մի խումբ ընկերներով մենք եղանք Շահվերդյանի մոտ: Նա հայաստանը նկարագրեց այնպես, ինչպես այն կար, առանց գունագարդելու և հարկ համարեց նշել, որ առաջին հերթին հայրենիք պետք է փոխադրել աշխատավոր, արհեստավոր մարդկանց: Երբ Չայաստան մեկնելու իմ ցանկության մասին հայտնեցի Նազարեթ աղային, որի մոտ աշխատում էի մամուլի առաքման բաժնում, նա ինձ տառաջիորեն ասաց հետևյալը. «Տղաս, ինչու՞ ես գնում Չայաստան, Չայաստանը աղքատ, դու աղքատ, ի՞նչ կարող է անել աղքատ մարդը աղքատ երկրում»: Ինձ հայտնի չեղավ, թե ինչ նկատառումով նա այդպիսի կարծիք հայտնեց... Չայրենիք վերադառնալու նախօրեին այցելեցի «Ժողովրդի ծայն» թերթի աշխատակիցներին: Թերթի խմբագիրը իբրև հիշատակ ինձ նվիրեց Վահավ Տերյանի բանաստեղծությունների մի հատորյակը, որը տպագրված էր վերոհիշյալ թերթի տպարանում Շահվերդյանի նախածննությունը: Իսկ երգիցական «Գավրոշ» շաբաթաթերթի խմբագիր Երվանդ Թոլոյանը նվիրեց իր թերթի հավաքածուի մեկ օրինակ և ինձ բարի ճանապարհի մաղթելով ասաց,

որ ինքը նույնպես մտադիր է առաջիկայում մեկնել Չայաստան: Իրոք, տասնմեկ տարի հետո Թոլոյանը վերջնականապես փոխադրվեց Երևան, բայց երկար չկարողացավ օգտավետ լինել իր հայրենիքին: Նա դարձավ անհատի պաշտամունքի մռայլ ժամանակի զոհերից մեկը: 1924-ի ամռանը շուրջ 400 հայ ընտանիքներ բեռնատար շոգենավով, ապա թե բեռնատար վագոններով փոխադրվեցին Չայաստան՝ Լենինական: Կայարանում հավաքված բնակիչները մեզ դիմավորեցին սրտաբացությամբ... Ներգաղթած հայերից ոմանք մնացին Լենինականում, ոմանք մեկնեցին Երևան, իսկ ոմանք էլ բռնեցին մերձակա գյուղերի ճանապարհը: Լենինականում մնացածներս տեղավորվեցինք մասնավոր բնակարաններում... Աշխատանքի միակ վայրերն էին երկաթուղային դեպոն և նորաստեղծ տեքստիլ գործարանը, ուր առաջին հերթին տեղավորում էին որբերին...»⁸⁶: Ըստ Քաջունու որդի Չակոբ Ղարաբաղյանի պատմածի՝ Նազարեթ աղայի թերթը թուրքական էր, իսկ ըստ ավագ դստեր՝ հայկական: Իմանալով թուրքական տպագրության մեջ հայերի խաղացած մեծ դերի մասին այն հանգամանքը, որ թերթի խմբագիրը ազգությամբ հայ էր, մեր կարծիքով չի խոսում թերթի հայկական լինելու մասին: Չնայած 1915-ին երիտթուրքական կառավարության սանձազերծած Մեծ եղեռնը վերջ տվեց ավելի քան ութ տասնամյակ գոյատևած արևմտահայ մամուլին, այնուամենայնիվ, որոշ թերթեր կարողացան գոյատևել նաև այս ծանր ժամանակահատվածում⁸⁷: Այնուհայտ է, որ 1922-1924-ի ընթացքում Ք. Ղարաբաղյանը աշխատել է Կ.Պոլսում հրատարակվող թերթերից մեկի առաքման բաժնում, ցավոք, թերթի անունը մեզ համար անհայտ է մնում: Կարևորը այն է, որ այս թվականներին Քաջունին ապրել և աշխատել է Կ.Պոլսում, ինչի մասին են վկայում վերը նշված լուսանկարից բացի ևս երեքը Ք. Ղարաբաղյանի կողմից արված հետևյալ մակագրություններով՝ 1923/ մակագրությունը արված է ավելի ուշ/, 11/ V 1924 և 1924 VI Պոլիս: Ուշագրավ է Ք. Ղարաբաղյանի կողմից հետևյալ՝ 11/ V 1924 մակագրությամբ լուսանկարը, որտեղ Քաջունին և Ասատուրը են: Լուսանկարի վրա պահպանվել է նաև Ք. Ղարաբաղյանի ընկերոջ՝ Ասատուրի թողած մակագրությունը. «Ի հիշատակս ըլլայ այս Քաջունիին, որուն նվիրեցի մտերմութիւնս իր ազնիւ և անկեղծ բնավորութեանը[?] համար. և թող յիշէ զիս զոր զինքը սիրեցի անկեղծ սիրով մը: Ասատուր Ա. Խեչեան»: Լուսանկարի ներքևի ծախ անկյունում պահպանվել է Ասատուրի ստորագրությունը, նրա կողմից դրված երկրորդ անսաթիվը, որի վրա Ք. Ղարաբաղյանը ուղղում է կատարել / 924-5-18 /, կիրակի, Պապը-Ալի- Կ.Պոլիս:

1924- ի ամռանը Չայաստան գալուց հետո, Ք. Ղարաբաղյանը հաստատվում է Լենինականում /այժմ Գյումրի/ և երկար տարիներ մինչև կենսաթոշակի⁸⁸ անցնելը /1967/, աշխատում երկաթուղային դեպոյում տարբեր պաշտոններում: 1925-ին ընդունվում է երկաթուղային դեպո՝

որպես փականագործ, այնուհետև կայարանում վագոնների զննիչ-բրիգադավար նորմավորող: Աշխատում է Թուրքիա մեկնող ու ժամանող զննցքների վագոնների տեխնիկական վիճակի ստուգող հսկիչ: 1936-ին Թբիլիսիում վագոնային վարպետների 6-ամսյա կուրսերը ավարտելուց հետո գործուղվում է Ջուլֆա կայարան աշխատելու ստուգող հսկիչ, խորհրդային վագոնները պարսկական Ջուլֆայում ընդունող հանձնող: Մեկ տարի աշխատելուց հետո, տեղում իրեն փոխարինող պատրաստելով, վերադառնում է Լենինական, դարձյալ վագոնային դեպո և աշխատում արտադրամասի վարպետ, ապա՝ նոր կազմակերպված անվագույզերի արտադրամասի վարպետ: 1940-ին ուղարկվում է Թբիլիսի սովորելու, 1941-ին ավարտելուց հետո ստանում տեխնիկ-մեխանիկի վկայական: Լենինական վերադառնալով՝ շարունակում է աշխատել անվագույզերի նորոգման արտադրամասի վարպետ: 1943-ին նշանակվում է արտադրամասում նորոգման գծով ինժեներ, միևնույն ժամանակ դեպոյի պետի տեղակալ: 1944-57թթ. աշխատել է երկաթուղային ճանապարհների Մինիստրության ներկայացուցիչ, որակի հսկիչ, վագոնները նորոգումից ընդունող: Պաշտոնի լուծարումից հետո մինչև կենսաթոշակի անցնելը /1957-67/, աշխատել է արտադրամասի վարպետ: 1968-ից ձեռնամուխ է լինում հիշողությունների գրառմանը: 1951-ին պարգևատրվել է Լենինի շքանշանով, 1957-ին՝ Պատվավոր երկաթուղայինի շքանշանով: Պարգևատրվել է նաև «Կուլյասի պաշտպանության համար», 1941-45-ի Չայրենական մեծ պատերազմի, հաղթանակի 30-ամյակի, Լենինի 100-ամյակի, աշխատանքային վետերանի կրծքանշաններով⁹⁰: Ունեցել է բազմաթիվ գյուտարարական առաջարկություններ⁹¹: Ազատ ժամանակը տրամադրել է ծառ⁹² ու ծաղիկ մշակելուն, մասնակցել է Լենինականում կազմակերպվող ամենամյա «Ծաղիկի տոն»⁹³ ցուցահանդեսներին և շահել մրցանակներ:

Լենինականում ապրած տարիներին Ք. Ղարազյոզյանը անընդհատ որոնում էր Թամզարայի հայերի տեղահանությունից հետո մազապուրծ եղածներին: Ը. Քեօթահեանի Քաջունուն ուղարկած «26 ապրիլ, 1987» ամսաթվով նամակից. «...Այդտեղ Լենինական և Երևան, Թամզարայեն ուրիշ վերապրողներ կա՞ն, քանի՞ հոգի են, և ի՞նչ են անոնց անունները. եթե այո, շուտով տեղեկացուր ինձի»: «Մի քանիսին նա կարողացավ գտնել, - ասում է նրա ավագ դուստրը, - այդ թվում նաև Փերուզ /Փիրուզ/ հորաքրոջը⁹⁴»: Նա բնակվում էր Նորավանում /Ախպարաշեն՝ հայրենադարձների թաղամաս Լենինականում/»: Ը. Քեօթահեանի՝ Քաջունուն ուղարկած «Յունիս 7, 1988» ամսաթվով նամակից. «Մեր հայրենակից Տիկ. Բերուզին յայտն է մեր բարեւը և ըստ, որ զինք չեն մոռնար»: Ըստ Ք. Ղարազյոզյանի ավագ դստեր հայտնած տվյալների՝ Ը. Քեօթահեանի կրտսեր քույրը՝ Աղվիթան⁹⁵, իր ընտանիքով /ունի երկու դուստր՝ Մարի և Պայծառ/ նույնպես Մեծ հայրենադարձության⁹⁶

տարիներին /1947-1948/49թթ/ տեղափոխվել է Լենինական և բնակություն հաստատել Գնոցավան թաղամասում: Քաջունին մասնակի օգնություն է ցույց տալիս վերջինիս տան շինարարության ժամանակ, սակայն շուտով Աղվիթայի ընտանիքը արքայություն է Ալթայի երկրամաս, իսկ ետ վերադառնալով արքայից՝ կրկին Քաջունու օգնությամբ տեղափոխվում Երևան: Ապրելով Գայաստանում՝ Ք. Ղարազյոզյանը անընդհատ նամակագրական կապ էր պահպանում արդեն Ֆրանսիայի Լիոն քաղաքում ապրող Գամեստուիու հետ⁹⁷: Գամեստուիին հավանաբար Ֆրանսիա է տեղափոխվել Գունաստանից՝ ամուսնանալով Սուրեն Սահակյանի հետ, Լիոնում բնակվում էր իր ամուսնու և չորս երեխաների հետ: Մեր ձեռքի տակ է Սահակյանների ընտանեկան լուսանկարը արված Լիոնում 1950-ական թթ. և 1967-ին Սուրեն և Գամեստուիի Սահակյանների Գայաստան այցելելու ժամանակ՝ Երևանում լուսանկարված մի խմբանկար, որտեղ Քաջունին և Գամեստուիին դարձյալ կողք կողքի են: Գամեստուիու՝ Քաջունուն գրված «1961, մայիսի 5» ամսաթվով նամակից «Սիրելի եղբայրս, Քաջունի Գարակեօզեան ու ընտանիք. Այս նամակով նախ ձեր ինչպես ըլլալը կը հարցնիմ՝ յուսալով, որ լաւ և հանգիստ էք: Մեզ, որ հարցնիք, լաւ ենք, միայն ձեր կարօտը կը քաշինք, և օր է օր նոր լուրի կ'սպասինք... Միայն քեզն է կը խնդրիմ, որ ինքզինքդ չի նեղիս, որ չի հիւանդանաս, ամէն բան կըլլայ, ուշ կամ կանուխ, միայն առողջութիւն ըլլայ՝ տաղ տաղայ դաւուշմագ, կըսիմ թուրքերը, ատամ ատամա դաւուշոր⁹⁸, միայն ամենակարող տէրօջնէ առողջութիւն և համբերութիւն ուզէ...»: Այս և մյուս նամակներից երևում է, որ երկար բաժանումը՝ շուրջ հինգ տասնամյակ, ծնել է անսահման սեր, կապվածություն և կարոտ, որը տանջում է երկուսին էլ: Երկար տարիներ սպասված հանդիպումը վերջապես կայանում է 1967-ին Երևանում Սուրեն Սահակյանի եղբոր տանը: Շահնագարի՝ Քաջունուն ուղարկած «26 Յուլիս, 1986» ամսաթվով նամակից. «Նորութիւն էր ինձի համար նաև հորեղբորդ աղջկան Գամեստուիիին պարագան, չեն գիտեր ինչպես ան հասցէն գտեր է և մեկ երկու տարի է ի վեր կը թղթակցինք. դրկած էի իրեն իմ քերթողագիրքս, իր նամակներէն յայտնի կ'ըլլար, զգայուն և գորովալից հոգի մը ունենալը: Խեղճը շատ փափագած էր տեսնիլ Շամիրամը, քանի որ այնքան մոտիկ էին իրարու, սակայն, դժբախտաբար հնարաւոր չէ եղած, ափսոս... Թամզարայի յիշատակները ինչպես մեր մեջ, նոյնպէս իր մէջ վառ կ'ենայ...»:

Այս տարիներին Քաջունու գերխնդիրն էր որոնել և գտնել իր ընտանիքի ողջ մնացած միակ էակին՝ Աղրինեին, որին իր գործուն մասնակցությունը ցուցաբերեց Գամեստուիին: Գամեստուիին Ստամբուլի և Անկարայի նշանավոր թերթերի էջերին տեղավորում է հայտարարություններ, թե Սուլեյման անունով եղբայրը որոնում է Ֆարրիա անունով ավագ քրոջը և մի օր էլ մի ցնցող նամակ է ուղարկում Քաջունուն քույրդ գտած են: Ցավոք, սպասվանվել է այդ նամակի վերջին

մասը. «... Դուք էք, որ փնտրուիք իրեն և դրա պատասխանը չեկաւ, եկածին պէս անմիջապէս քեզի կողովիմ: Քու ինծի վերջին դրկած նկարդ իրեն դրկեցի: Ես ալ իրենց նկարը ուզեցի... Իրենք հիմա մէկ աղջիկ և երկու տղայ, մէկը տօքտօր Գոնեայ կը նստին, շատ հանգիստ են արդէն: Եթէ նամակը կրնաս կարդալ կամ կարդացնիս ամէն բան կհասկանաս: Նոր նամակ եկածին պէս քեզի կողովիմ: Գրեցի, որ դուն հող կզտնուիս»: Այս նամակից պարզ է դառնում, որ Զամեստուիին Ադրիմենի տեղեկացրել է եղբոր Զայաստանում բնակվելու մասին: Նամակի ամսաթիվը բացակայում է, բայց զուգահեռ Ադրիմենի որդու Ռեֆիկի ձեռքով գրված թուրքերեն նամակի ամսաթիվն է «10-12. 59 Bozkir-Konya Turkiye»: Ադրիմենի դստեր Սաբրիե Տալիի ձեռքով թուրքերեն գրված «20-7-1960 Bozkir» նամակից. «...Մի եղբայր ունեմ. և ուրախանում եմ, և լալիս: Շատ հեռու ես, շատ հեռու, եթե հնարավորություն ունենամ գալու, վազելով կգամ, շատ տարիներ չտեսած կարոտս կառնեմ... Եթե փեսադ ողջ լիներ, քեզ գտնելու համար շատ կուրախանար, լավ նամակներ քեզ կգրեր: Դառը կյանք է. մեկին կորցրեցի, մյուսին՝ գտա»: «20-IV-1961 Ankara». «Զարկարժան քեռի. Ձեր ուղարկած նամակը ստացանք ու շատ ուրախացանք, առավելապես մայրիկը, մինչև հիմա ձեզանից բաժան չգիտեմ, թե ինչպես է մնացել: Երբ նամակը ստանում է եղբայրս, եղբայրս, ասելով լալիս է... Մայրիկս միշտ մեռակ է, հայրիկի մահից հետո մի անգամից ծերացավ: Աստված նրան անպակաս պահի մեր զլխից: Դուք մի անհանգստացեք: Զնարավորության դեպքում, մայրս ցանկանում է սրտանց ձեզ տեսնել»: Նամակներից պարզ է դառնում, որ Անկարայում բնակվող այս ընտանիքը Ադրիմենի ամուսնու մահից հետո ստիպված տեղափոխվել է Բոզկիր, ապա մի քանի տարի անց կրկին վերաբնակվել Անկարայում: Ընտանիքի անդամների՝ Ֆրանսիա Զամեստուիուն այցելելու փորձերը անհաջողության են մատնվել, ինչպես նաև Քաջունունը: Զամեստուիու Քաջունուն գրած «1960, օգոստոս 2» ամսաթվով նամակից. «Միրելի եղբայրս. Կերջապէս ուրախութեամբ ստացա քրօջդ բերնով նամակը [20.7.1960 Bozkir-Ի.Ա.] և քեզի կը դրկիմ, որ դուն ալ ուրախանաս: Իրենց ալ գրեցի, որ միշտ քոյրդ իր բերնով քեզի գրէ: Այս նամակն ալ ցուցուր, որ քոյրդ քառասուն տարի է քեզ չէ տեսեր: Եթէ դուն հոս գաս, նա ալ պիտի գայ...»: Զամեստուիու Քաջունուն գրած «1961, փետր. 9» ամսաթվով նամակից. «... Ադրիմեն տես թէ ինչ նամակ գրած է [23-1-1961-Ի.Ա.], մի կարծիր, թէ անտարբեր է, անոր ալ սիրտը կը հատնի կերելի ինք գրիլ չի գիտեր, մասնատր իմ նամակիս վրայ գրեցի, որ դուն ալ կարդաս ինչ գրած ըլլալը: Միայն դուն աղկէ մի դրկիր, ինծի դրկէ, որ ես ալ անոնց դրկիմ, կարծեմ անելի լաւ կըլլայ: Տես, Անկարա չեն գացիր, բայց պիտի երթան այս ամառ: Տես, այս անգամ ինչ աղուոր գրած են: Ես գիտեմ, որ իրեն ալ սիրտը հատնի, բայց ինչ կրնայ ընիլ, եթէ ոչ հէջ կըլլայ քոյր մը, որ եղբորը հանդէպ անտարբեր գտնուի, չի սիրէ», բայց երբ արգիլք մը

կըլլայ, ինչ կրնայ ընիլ: Ես քեզի կրկին իմ կողմէս կը ըսիմ, որ երբեք չը խորհիս, օր մը պիտի յաջողուիս տեսնալ թէ ինծի, թէ Ադրիմենին: Քու նեղուիլդ քեզի պիտի մնայ: Քու սիրտդ միշտ լայն հուն է... 3.9. Մեզի գրէ, թէ որ քոնուլն է արգիլք եղողը՝ ֆրանսական, թէ՞ ռուսական»: Սաբրիե Տալիի Զամեստուիուն գրած թուրքերեն նամակից «23-1-1961. Միրելի՛ հորաքույր, ... Ձեզ տեսնելու շատ մեծ ցանկություն ունեմք: Այս տեսակցությունը կարող է ուշանալ, բայց շատ ցանկալի է: Շատ շնորհակալ կլինեմ, եթե կամենաք ինձ հետ կապ պահպանել: Ձեր պես հորաքույր ունենալու համար շատ ուրախ եմ և անծանոթ լինելով՝ սիրում եմ ձեզ...»: Սաբրիե Տալիի Քաջունուն գրած թուրքերեն նամակից «23-1-1961. Միրելի՛ քեռի, չորս-հինգ ամիս առաջ Ձեզ իմ հասցեով նամակ էի ուղարկել ու պատասխան չստացա, կարող է տեղ չի հասել: Տիկին Սահակյան հորաքրոջիցս անցած ամիս նամակ ստացանք, մեզանից դժգոհ է, որ նամակ չեք ստանում: Դուք հայտնել էք, որ ուզում եք Ֆրանսիա գալ և ուզում եք, որ մայրիկս էլ գա: Այս ցանկության համար շատ ուրախացանք, բայց, շատ ափսոս, որ դեռ անհնար է՝ որպես տուրիստ, ոչ մեկին չեն ընդառաջում... Տան ազատը և գրագետը ես եմ, դրա համար էլ ես եմ գրում նամակները»: Զրաժարվելով Թուրքիայի և Զայաստանի միջև անմիջական նամակագրությունից՝ Ք.Պարազյոզյանը մտահոգված էր Ադրիմենի և իր ընտանիքների սովետական կամ թուրքական իշխանությունների ձեռքն ընկնելուց», ապավինում է Զամեստուիուն: Բոլոր նամակները, որ Քաջունին Լենինականից Անկարա էր ուղարկում, նախ հասնում էին Լիոն Զամեստուիուն, որտեղից էլ՝ Անկարա և հակառակը՝ Ադրիմենի նամակները նախ գալիս էին Լիոն, ապա՝ Զայաստան: Պահպանված թուրքերեն նամակների մեջ կան մի քանիսը, որոնք հասցեագրված են Զամեստուիուն, սակայն ուղարկվել են Զայաստան Քաջունուն հանգստացնելու համար: Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած վեց թուրքերեն նամակներից յուրաքանչյուր զույգը ունի նույն ամսաթիվը/20-7-1960, 20-IV-1961, 23-1-1961/ երեքը հասցեագրված են Քաջունուն, երեքը՝ Զամեստուիուն: Զամեստուիու Քաջունուն գրած «1961 մայիս 5» ամսաթվով նամակից. «Այս նամակները [20-IV-1961 Ankara- Ի.Ա.], որ եկաւ քեզի կը դրկիմ, մէկը արդէն քեզի համար գրուած է, իսկ միւսը՝ ինծի, ես երկուքը միասին կը դրկիմ, որ կարդաս և ուրախանաս, թէ ինչպէս լաւ գրած են: Զիմա երթալով սերերն կաւելնայ, արդէն անկարելի է, որ քույր մը եղբոր մը հանդէպ անտարբեր գտնուի, միայն նոր ատենները կարելի է, չէր հաւատար կամ սուտին կուզար: ... Դերիք է, որ ողջ է, գտար փառք տուր Աստծոյ»: Կա ևս երկու նամակ գրված թուրքերեն ղովտոր Ռեֆիկ Տալիի ձեռքով, առաջինը, որի մասին արդեն խոսել ենք՝ «10-12.59» ամսաթվով, մյուսը «15.2.960»՝ հասցեագրված են Զամեստուիուն. «Զարկարժան տիկին Սահակյան, ստացանք երկու նամակն էլ... Քեռուս և ընտանիքին նկարով ճանաչեցինք: Միայն թե հայերեն գրված լինելու պատճառով

շատ բան չհասկացանք: Եթե քեռիս թուրքերեն չգիտի, թող նեղուքյուն կրի և թուրքերեն թարգմանի: Մեր գրածները դուք հասկանո՞ւմ եք... Շուտով քեռիս հյուր պիտի գա, գալու օրը եթե հայտնեք, մենք շատ կուրախանանք...»: Այս նամակին կից գրված Համեստուհու «1960-2-19» ամսաթվով Քաջունուն ուղարկված նամակից. «Քու առաջուան հայերեն նամակդ ալ իրենց դրկած էի, բայց չեն կրցիր կարդալ...»: Բոլոր թուրքերեն նամակների բաց մնացած հատվածներում Համեստուհու հայերեն գրված նամակներն են իրենց ամսաթվերով բացի առաջինից, որը կիսատ է պահպանվել /1960-2-19; 1960 օգոստոս 2; 1961 փետր. 9; 1961 մայիս 5/: Ցավոք 1962-1983թթ վերաբերող նամակներ չեն պահպանվել: Մեր ձեռքի տակ են նաև Համեստուհու Սահակյանի վերջին «1983.2 դեկտեմբեր» ամսաթվով նամակը՝ Թամզարայի իրենց տան նկարագրությամբ, հավանաբար այս նամակի հետ է ուղարկվել վերջին Դողան Տալիի ձեռքով գրված «16-5-1983» թուրքերեն գրությունը, որը պարունակում է Ադրիների առողջության մասին տեղեկություններ և Շ.Քեօթահեանի 16 նամակներ կից դրված հեղինակի զանազան թերթերում հրատարակված հոդվածներով հասցեագրված Քաջունուն. «15 Դեկտ. 1986, Լուս Աճճէլըս. Ամէն տարի նոյեմբերին, Սովետական Հայաստանի տարեդարձին առթիւ յօդուած մը կը գրիմ, անպայման վերջին յօդուածու օրինակ մը կը ներփակիմ»: Ադրիների որոնումների մասին տեղյակ էր նաև Շ. Քեօթահեանը. «Ի միջի այլոց [Քաջունին-Ի.Ա.] յայտնեց թէ, կրցած էր տեղեկանալ, որ բռնի կերպով առեւանգուած իր քոյրը Անկարա կը բնակի, ամուսնացած իր երկու բժիշկ զաւակներուն եւ հարսներուն հետ. կը փափաքէր, որ մեր վերադարձին ջանայինք գտնել անոնց հասցէն, անուն-մականունը կրցած էր ձեռք ձգել: Ո՛հ ստի, մեր ճամբուն վրայ յատկապէս հանդիպեցանք Թուրքիոյ Սայրաքաղաքը, գիշեր մը մնացինք հոն եւ հեռաձայնի գրքին մէջէն կրցինք գտնել անոնց հասցէն...»⁹⁹: Շահնազարի Քաջունուն ուղարկած «26 Յուլիս, 1986» ամսաթվով նամակից. «Երկրորդ քրոջ մը [Տիգրանուհու-Ի.Ա.] մասին ակնարկութիւն մը ունէիր նամակիդ մէջ, եթէ սխալ չհասկացայ, ասիկա նորութիւն էր մեզի. տեղեկութիւն տուր մեզի այդ մասին»: Եւ այն ճանապարհով ընթացող միջոցնէ քրոջ Տիգրանուհու որոնումները դրական արդյունք չունեցան:

Ըստ Ք.Ղարազոյցյանի ավագ դստեր հայտնած տեղեկությունների՝ 1974-ի սեպտեմբերին Քաջունին, Շահնազարի կրտսեր քրոջ Ալվիթայի ավագ դստեր՝ Մարիի ուղեկցությամբ, Լենինականի երկաթուղային կայարանից գնացքով մեկնում է Ստամբուլ, որտեղ նրանց դիմավորում են Շահնազարի ավագ քրոջ՝ Շամիրամի որդիները¹⁰⁰: Շ.Քեօթահեանը այս մասին հիշատակում է. «Պոլսէն մեզի ընկերակցող քեռորդիներս՝ Սկրտիչ և Սուրէն Գորգոյեանները, քանի մը տարի յետոյ, Քաջունիին համար Թուրքիա այցելելու արտօնագիր հանեցին, եւ ան ի վերջոյ կրցաւ ողջագուրել իր քոյրը, որ չէր ուզեր ու չէր ալ կրնար բաժանուիլ իր

զաւակներէն. ողբալի վիճակ մը, արդարեւ: Ո՛ր այս կացութիւնը այսպէս կը շարունակէ վշտահար պահել խեղճ Քաջունին ու անշուշտ նաեւ դժբախտ իր քոյրը»¹⁰¹: Ըստ պահպանված Ք.Ղարազոյցյանի գրած ձեռագիր մի հատվածի. «Հազար ինը հարյուր յոթանասունչորս թվականի հոգտեմբերի ութին Թուրքիա մտնելու արտոնված անցագիրը գրպանումս, երկու փոքրիկ ճամպուրակներով դուրս եկա տանից և ուղևորվեցի մեր Լենինականի երկաթուղային կայարան՝ նույն օրը գնացքով Թուրքիա մեկնելու համար: Հարկ եղած ստուգումներից և մինչև Ստամբուլ ու վերադարձի տոմսեր վերցնելուց հետո բարձրացա գնացք: Պետք է ասել, որ այդ օրը ինձ համար շատ արտակարգ օր էր. հոգիս թռիչք էր ապրում, սիրտս պատռելու չափ ուրախ էր: Վերջապես իմ շատ տարիների երազանքս իրականացավ: Այլևս ոչ մի արգելք, դժվարություն չկար: Գնում էի տեսնելու մանկությանս վկային, հայրական տան միակ հիշատակին՝ քրոջս, որին այնքան էի կարոտել: Ինձ թվում էր, որ ես նրան տեսնելով, նրա աչքերի, հոգու, ողջ էության մեջ պիտի տեսնեի իմ բոլոր հարազատներին, որոնցից այնքան շուտ, վաղուց, դեռ մանուկ հասակում զրկվեցի: Հոգեմաշ կարոտը այսօր ինձ տարավ Թուրքիա, այնտեղ հայրական տան բազմաթիվ հարազատներից ողջ մնացած միակ մեծ քրոջս տեսնելու, որին չէի տեսել հիսունվեց տարի՝ այդ, կես դարից ավել, ավելի ճիշտը՝ քսան հազար վեց հարյուր վաթսուներկու օր: Երբ գնացքը շարժվեց, ես ինձ զգացի իրական փաստի առաջ, իմ մեջ ուրախությունը վայելելու ցանկություն առաջացավ, կարոտս առնելու նախաշեմին էի, հիմա իմ ու քրոջս միջև մնում էր երեք օրվա ճանապարհ՝ միայն երեք օրվա տարածություն»¹⁰²: Հասնելով Ստամբուլ¹⁰³ Քաջունին և Մարին հյուրընկալվում են Շամիրամի տանը, որը կարողացել էր տարագրության տարիներին գաղտնի կերպով հայ քրիստոնեական ծեսով պսակվել Հարություն Գորգոյեանի հետ¹⁰⁴: Ըստ Ք.Ղարազոյցյանի ավագ դստեր հայտնած տվյալների Քաջունին Ստամբուլից Անկարա զանգահարելուց հետո պարզում է, որ քույրը դեռ չի տեղեկացրել իր այցի մասին ընտանիքի մյուս անդամներին և խնդրում է անմիջապես տուն չմտնել, այլ ևս մեկ անգամ զանգահարել իրեն: Այդ ժամանակը Ադրիներին հարկավոր էր երեխաներին նախապատրաստելու և տրամադրելու համար, որ իրենց այցելելու է իրենց հարազատ քեռին: Հարսներին տեղեկացնում են, որ եկողը հեռու ազգական է: Ըստ պատմածի՝ հորաքույր Ադրիներն շատ լարված է եղել և անընդհատ վախեցել է նրանից, թե ինչ կսպառնա իր ընտանիքին, եթե բացահայտվի Քաջունու և իր ազգությունը: Առաջին հերթին կտուժեն որդիները, որ Անկարայում բավականին բարձր պաշտոններ են զբաղեցնում, բացի այս ընտանեկան լարվածությունը Ադրիների հարսի և ամուսնալուծված դստեր՝ Սաբրիեի միջև, որն ամուսնացած է եղել հարսի եղբոր հետ: Ք. Ղարազոյցյանը քրոջ տուն մտնելուց հետո, միամտաբար նշել է, որ եկել է Արմենիայից, ի

պատասխան որի ահարեկված Ադրիանեն ցուցամատը մոտեցրել է շրթերին և խնդրել է լռել, իսկ Արմենիա բառը դարձրել Ալմանիա՝ Գերմանիա ըստ ավագ դատեր պատմածի և Ադրբեջան /Աղվանք/ ըստ կրտսեր դատեր հայտնած տեղեկությունների: Ըստ պատմածի՝ մտավախություն կար, որ հարսները կարող էին անգամ մատնել կառավարությանը: Երբ վերջապես սենյակի մի անկյունում քույր և եղբայր մենակ են մնում, Քաջունին թուրքերեն փսփսալով հարցնում է վաղուց հայերենը մոռացած ծեր քրոջը. «Իմ անունը ի՞նչ է»: «Քաջունի», - պատասխանում է քույրը: «Մայրիկի ու հայրիկի անունը հիշու՞մ ես»: «Այո, Յայկանուշ և Թորոս»: Այսպես Ք.Ղարազյոզյանը պարզում և ուրախանում է գոնե այն քչով, որ այս երկար տարիների ընթացքում, իր քույրը հիշում է իրենց կոտորված ընտանիքի բոլոր անդամների անունները և չի մոռացել մանկության հետ կապված հիշողությունները¹⁰⁵: Իսկապես ողբալի տեսարան, որին ինչպես մենք, այնպես էլ Շ. Քեօբահեանը չի կարողացել անտարբեր մնալ. «Իցի՛ւ թէ կարելի ըլլար գիտնալ, թէ մանկութեան ընկերոջս այդ միակ հարազատը, այժմ մայր կետով հայ եւ կետով թուրք իր երկու զաւակներուն»¹⁰⁶ անոնց մանկութեան շրջանին ի՞նչ չափով կրցած էր ազդել. ըսել կ'ուզեն, սոյն երկու կետերուն ո՞ր մէկը ծանր կը կշռէր արդէք... սակայն այս իմ խորհուրդը արդէն իսկ յօդս կը ցնդի, երբ զինք Յայաստան տանելու իր եղբոր առաջարկին ի պատասխան, վճռապես յայտարարել է, թէ մինչեւ հիմա ինք իր զաւակներուն իր Յայ ըլլալը չէր իմացուցած եւ չ'ուզեր բաժնուիլ անոնցմէ եւ ուստի՝ կը մնայ հոն ցվերջ: Անշուշտ Քաջունիին սոյն հանդիպումով արդէն իսկ տնեցիները տեղեակ կ'ըլլան իրողութեան, սակայն կը ցուցաբերեն հասկացողութիւն եւ սիրալիք վերաբերում իրեն և իրեն ընկերացող մեր հարազատներուն»¹⁰⁷: Ինչպես տեսնում ենք վերջին միտքը ավելի շատ Շահնազարի ցանկությունն է արտահայտում, քան համապատասխանում է իրականությանը: Եւրջ մեկ և կես ամիս Թուրքիայում մնալուց հետո Քաջունին վերադառնում է Լեւինական: Ըստ Յակոբ Ղարազյոզյանի պատմածի՝ Անկարայի երկաթուղային կայարանում Քաջունին մի կողմ է տանում Ադրիանի դատերը՝ Սաբրիեին¹⁰⁸ և հայտնում իր հայ լինելը. «Քո քեռին հայ է, քո մայրիկը հայ է»: Սաբրիեն պատասխանում է, թե ով էլ լինես, դու մեր քեռին ես: Սակայն Քաջունու ավագ դուստրը պատմում է, որ Սաբրիեն չիվարած է մնում, իսկ Քաջունին այդ պահին արագ բարձրանում է շարժվող գնացքը: Այս ամենին հակասում է այն, որ նամակներում պարունակվող տեղեկությունները, հատկապես Ռեֆիկ Տալիի ձեռքով Յամեստուիւն գրված «15.2.960» ամսաթվով նամակը, անկասկած խոսում են այն մասին, որ Ադրիանի ընտանիքը պիտի տեղյակ լիներ մոր հայ լինելու և քեռու Յայաստանում բնակվելու մասին և վերջապես Յամեստուիւն ազգանունը, որը գրված է բոլոր Թուրքիայից Ֆրանսիա ուղարկված նամակների հասցեներում: Մինչև հիմա էլ, երբ գրուցում ենք

Ք.Ղարազյոզյանի զավակների հետ, տեսնում ենք, որ նրանք հույս են փայփայում, որ միգրացն այդ ամենից հետո մայր և դուստր ևս մեկ անգամ անդրադարձած լինեն այդ թեմային և գուցե մի օր էլ ընտանիքի մյուս անդամները իմանան դառը իրողությունը: Դժբախտ հայի ճակատագիր գտնել, վերստին կորցնելու համար:

Թուրքիայից ետ վերադառնալուց հետո Քաջունին կրկին հայտնվում է հուսալքված վիճակում, իր հոգեկան ծանր վիճակի մասին են խոսում Քաջունու նամակներին ի պատասխան ուղարկված Շահնազարի նամակները. «10 Ապրիլի, 1986, Լոս Անճելըս. Սիրելի՛ Քաջունի, ... Ազատուիին ու ես կը բաժնինք զգացուցմաներդ ու խորհուրդներդ. շատ կցաւինք, որ այսպէս տառապէր ես երկար ատենին. կ'ըսիս, անտրամադիր վիճակ մը ունիս և շուրջ բոլորդ հին, սիրելի դէմքեր չ'տեսնելով, տեսակ մը անմխիթար կ'զգաս... Ասկէ քանի մը ամիս առաջ ալ կորսնցուցինք մեր սիրեցեալ, հրեշտակաման Շամիրամը... Քաջ եղիր, գօտիդ ամրացուր... Ասկէ քանի մը շաբաթ առաջ ալ իր աչքերը յաւիտենապէս փակեց Արամ Յայկազը...»: «26 Յուլիս 1986. Սիրելի՛ Քաջունի, ... Ղոգեկան տագնապը և զգացումներդ լիովին կ'ըմբռնինք ու կը բաժնինք ցաւդ ու վիշտդ... այդ վիշտդ միայն քուկդ չէ, այլ՝ խորքին մէջ, համայն հայութեան վիշտն է... պարտաւոր ենք համակերպիլ. ամէն ոք ունի իր ցաւն ու դառն փորձառութիւնը, կը խորհիմ, որ քուկինդ իւրայատուկ է: Այս է կեանքը, որ մեր ուզած ձեւով չ'ընթանար, դժբախտաբար...»: Յամեստուիւն մահից հետո կտրվում է կապը Քաջունու և Ադրիանի միջև: 1986-ին երրորդ անգամ Յայաստան այցելելուց հետո այդ դերը իր վրա է ստանձնում Շահնազարը. «Յուլիս. 23, 1987. ... Սուրենենց ծեր բարևը տուի ու նաև խօսեցայ քրոջդ մասին. ըսաւ, որ ղրկիս Անկարայի իրենց հեռաձայնին թիւը, զոր դուն ունիս եղեր, որպէսզի իր թուրք բարեկամը հեռաձայնով տեղեկութիւն բաղէ քրոջդ մասին»: «14 Մարտ, 1988. Լոս Անճելըս. Սիրելի՛ Քաջունի, ... Կը ցաւիմ, որ ինչ-ինչ պատճառներով պատասխանը ուշացաւ. պատճառներէն մին այն էր, որ կուզէի լուր մը ստանալ Անգարայէն. արդարև Սուրենը, փափագիդ համաձայն, գրեց Անգարա և պատասխանը դեռ նոր ստացաւ. մարդը խօսեր է հեռաձայնով Դողանի հետ և ըսեր է, թէ մայրը առողջ և հանգիստ է և բարեւ է ուղարկեր: Գոհունակութեամբ կարդացինք երկու գրութիւններն ալ, առաջինը հայ լեզուի անաղարտութեան մասին¹⁰⁹... Լեւնա Ղուկասեանի «Վերածնունդ»¹¹⁰ վերնագրով գրոյցը շատ յաջող և բովանդակալից դուրս է եկած. դուն ամէն կերպով արժանի ես նման գնահատական վերլուծումի մը. իմ կողմէ շնորհակալութիւն յայտնէ Լեւնային. եթէ ողջ մնանք և անգամ մը ևս Մայր հայրենիք այցելելու բաղտն ունենանք, ուրախ պիտի ըլլամ զինք ճանչնալու: Այդ գրութիւնները գուրգուրանքով պիտի պահեն»: Այս տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ Քաջունին էլ իր հերթին ուշագրավ հոգվածներ է ուղարկել սփյուռքում բնակվող իր ընկերոջը:

Անբարենպաստ միջավայրը, կարոտը, երկարատև բաժանումը մեր հերոսներին, կարծես թե, ստիպում է համախմբվել հայրենասիրական գաղափարների ներքո: Շահնազարի «26 Ապրիլ, 1987» ամսաթվով նամակից. «Սիրելի Քաջունի, ...Ապրիլեան եղեռնի 72-րդ տարելիցը յուշածուեցաւ ժողովրդային մեծ զանգուածներու և երեք կուսակցութեանց միացեալ ղեկավարութեամբը: Ապրիլի 24-ին Մոնթպէլլիոյի նահատակաց Յուշարձանին շուրջ 25000 է աւելի հայորդիներ էին համախմբուած, և ուր օրուան զխաւոր բանախօսն էր Քալիֆորնիոյ շատ սիրուած ու յարգուած նահանգապետ ճորճ Տօքմէճեան... Վստահ եմ Ծիծեռնակաբերդի կատարին ևս նոյնն էր պատկերը...»: Շահնազարի «Յուլիս 23, 1988» ամսաթվով նամակից. «Սիրելի Քաջունի, ... Ներսիս կ'ուղարկեմ Մայր Հայաստան վերջին այցելութեան տպաւորութիւնները պարունակող թերթերը. յուսամ պիտի սիրես... յայտնած գաղափարներու, վստահ եմ, դուն ալ և շատեր համաձայն պիտի գտնուիք»: Այս նամակները բացահայտում են եղեռն վերապրած մեր հերոսների հոգեկան ապրումները, որոնք փրկվելով XX դարի սկզբի ոճրագործությունից, դատապարտված էին ամբողջ կյանքի ընթացքում այդ զարհուրելի դեպքերը վերապրելուն: Լ. Ղուկասյանը գրում է. «... Ապրված է մի ամբողջ կյանք, ավելի քան ութսուն տարի: Դարի հասակակիցը դարի հետ հասակ է առել: «Ժամանակի իմաստով ես [Ք. Ղարաբաղյանը-Ի.Ա.] հազվագյուտ մարդ եմ,- ասում է նա,- որ անցել եմ Տեր-Չորի անապատը, եղեռնի կենդանի վկան ու ակնմատենը եղել: Ամեն տարի ես գնում եմ Ծիծեռնակաբերդ՝ եղեռնի զոհերի հուշարձանին, և աչքերիս առջև հառնում եմ այլևայլ կենդանի պատկերներ Թամզարայից, Գարահիսարից: Տեսնում եմ նաև մորս՝ Եփրատի ափին: Ահա կռանում է նա և ուժասպառ մանկանը հանձնում է զետի ալիքներին: Փակում եմ աչքերս ու տեսնում հորաքրոջս, որ Եփրատին է հանձնում եղբորս՝ Նորայրին¹¹¹...»: Ք. Ղարաբաղյանը գրում է. «Կորցրինք ամեն ինչ: Կորցրի անուսն ու լեզուս, բայց չկորցրի հավատը ազգիս հանդէպ: Որքի ահավոր անուճը կրած՝ քայլեցի հեղում, որտեղ ծնվել էինք: Նորաստեղծ հայրենիքիս ծայրը լսեցի, եկա խառնեցի ուժս նրա ուժերին, կարելին արի նրա բարգավաճման գործին»¹¹²: Խեղճ հայի բախտ. կորցնել հայրենիք, հայրական տուն, ընտանիք, մազապուրծ լինել վերստին կարոտը սրտում տառապելու համար: Ստեղծել նոր ընտանիք, ունենալ զավակներ, որոնց անվանել նահատակվածների անուններով, նրանց հիշատակը վառ պահելու նպատակով /Քաջունին իր երկու որդիներին անվանեց իր նահատակված եղբայրների անունով՝ Նորայր և Հակոբ, Շահնազարը իր նահատակված հոր անունով կոչեց իր միակ որդուն Ավագին/:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Քաջունի Թորոսի Ղարաբաղյանը մահացել է Լեւինականում 1989-ի նոյեմբերի

5-ին ականատես լինելով հայ ժողովրդի նոր ողբերգական էջերին Սումգայիթի դեպքերին, 1988-ի աղետալի երկրաշարժ և ազգային ոգու զարթոնքին՝ Ղարաբաղյան ազատագրական շարժմանը: Լինելով հայ և մեծ հայրենասեր՝ Ք. Ղարաբաղյանը արտասահմանում բնակվող բարեկամներին և ընկերներին ուղարկած իր նամակներում պարբերաբար անդրադարձել է այս թեմաներին: Ասվածի ապացույցն է այժմ մեր տրամադրության տակ եղած Քաջունուն ուղարկված Շահնազարի նամակները: Նամակները խիստ անձնական բնույթի են, սակայն դրանց բովանդակությունը վկայակոչում է այն, որ Քաջունին և Շահնազարը բաժանված լինելով հազարավոր կիլոմետրերով, միասին են վերապրել թե՛ Ղարաբաղյան շարժումը, թե՛ աղետի բողած հետևանքները: Ք. Ղարաբաղյանին հասցեագրված Շ. Քէօթահեանի «Յունիս 28, 1989» ամսաթվով նամակից. «Սրտի ճնլումով կարդացինք աղետին մասին գրած նկարագրութիւնը. իսկապէս որ անսպասելի ու դժուարին կացութիւն մըն է ստեղծուած. լաւ է, որ ես և Աւագը¹¹³ կրցինք ձեզ հանդիպել ձեր իսկ ընտանեկան յարկին տակ և տեսնիլ նաև Լեւինականը իր շքեղութեանը մէջ: Մաղթինք, որ բարձրեալ Տէրը խնայէ մեզի նոր փորձանքները, որ շնորհէ մեզի կեանք և առողջութիւն, որպէսզի կարողանանք դարձեալ իրարու հանդիպել ու տեսնիլ Լեւինականը, իր վերաշինուած վիճակով: ...Չեմ գիտեր՝ գրած էի մեր մանկութեան ընկերներէն Սկրտիչ Գազանճեանի մաիը, որ տեղի ունեցաւ ասկէ քանի մը ամիս առաջ: Թամզարայի մեզի ծանօթ ընկերներէն Դուն ու ես մնացինք վերապրած. ուրիշներ ալ չկան, գէթ ես չեմ գիտեր»: Շահնազարի գրած «10 հոկտ. 1989» ամսաթվով նամակից. «Սիրելի Քաջունի, ...միանգամայն խոր ցաւով կարդացինք տեղույդ կացութեան մասին տուած տեղեկութիւնները. այստեղ, մեր մամուլէն ալ կ'ստանանք լուրերը, սակայն դուն տեղույն վրայ ես և աւելի լայն կերպով արտահայտուելու ի վիճակի ես, իրօք, որ վտանգաւոր կացութեան մը մէջ է այժմ մեր սիրելի Հայաստանը և հոն բնակող մեր հարազատները... Գիրքս մամուլին յանձնած եմք... Անշուշտ որ անկէ քեզ ալ պիտի դրկին...»: «Սիրելի Քաջունուն... Շահնազար Քէօթահեանից, դեկտ. 24, 1989» ամսաթվով նամակից. «Ասկէ շուրջ երկու ամիս առաջ գրած էի

երկար նամակ մը՝ որուն ցարդ պատասխան չեն ստացած. յուսանք ընտանեօք կը մնաք քաջառողջ: Թէև ազգովին վշտով համակուած, սակայն կը շնորհաւորինք ձիր Նոր տարին և Աք. Ծնունդը, մաղթիլով, որ այս տագնապին ալ բարիարար լուծում մը պիտի գտնուի և Հայաստանի ժողովուրդը պիտի շարունակէ իր յաղթական վիրիւքը: Գիրքս մասնովին յանձնած են, սակայն տպագրուած փորձաձեւերը սրբագրութեան ենտել, և բաւական ժամանակի կը կարօտի. թրեւս քանի մը ամիսէն կարինամք գլուխ հանիլ. դեռ կայ նկարներու գտումը և անոնց տեղերը որոշելու հարցը: Ջերմապէս կը մաղթինք, որ Ղարաբաղի ցաւոտ հարցը իր քաղաքական լուծումը գտնէ և ժողովուրդն ալ՝ իր հանգիստը. Նոր տարին ալ աշխարհի խաղաղութիւն բերէ: Սրտագին բարեւներ ամենուր. Աւագը միշտ կը յիշէ ձիգի. իր քաշած նկարներէն երկու հատ կը նիրփակին: Սիրով՝ Շահնազար Քեօբախեան»:

Ցավոք, նամակը ստանալու պահին Ք. Ղարաբաղցյանը արդեն մահացած էր:

Այս նամակներից հստակ երևում է, որ Ք. Ղարաբաղցյանին անչափ հուզել է հայ ազգի ճակատագիրը: Ինչպես տեսնում ենք, ոչ հեռավորությունը, ոչ էլ ժամանակը՝ շուրջ յոթ տասնամյակ, չկարողացան բաժանել Թամզարայուն ծնված և դաժան իրողության արդյունքում աշխարհի տարբեր ծայրերում հայտնված մանկության երկու ընկերներին: Անգամ Ք. Ղարաբաղցյանի մահից հետո Շ. Քեօբախեանը Լենինական ուղարկեց իր «Յուշեր ու նիշեր» ժողովածուն, որն այդքան փափագում էր տեսնել և կարդալ իր մանկության ընկերը: Ցավոք, մահը իսկեք Քաջունու կյանքը՝ թույլ չտալով տեսնել այս աշխատությունը և ընթերցել իր մասին պատումը: Շահնազարի Հակոբ Ղարաբաղցյանին հասցեագրած նամակից. «7 Մարտ, 1990 Լոս Անճելես. Դեռ այսօր միգի հասած Մարիին 20 փետրուարի նամակէն էր, որ տեղեկացանք բօթաբեր լուրը, որ պարզապես ցնցեց մեր էութիւնը և խոցեց մեր սիրտերը. անակնկալ մըն էր այդ, մենք դեռ յոյսն ունէինք կրկին իրար հանդիպելու... Ափսո՛ւ, մեր սիրելի Քաջունին այդպէս լռիկ, մնջիկ հրաժեշտ է տուիր այս ցաւատանց աշխարհին: Ես ինքս մեծապէս յուզուած եմ. Մեր Թամզարայէն վերապրած երեք ընկերներէն Մկրտիչ Գազանճեանը մահացաւ անցեալ տարի, Քաջունին ալ մեկնեցաւ, մնացի մենակ, կարծես որբացած... Գրքիս տպագրութեանը, որուն հանգուցեալը անհամբեր կ'սպասէր, ափսոս, որ չտեսած ու չկարդացած անցաւ ու գնաց. երբ լոյս տեսնի ձեզի ալ օրինակ մը անպայման կը դրկին: Քաջունին տեղ դուք պիտի կարդաք, այդ կերպով թրեւս անոր հոգին հանգիստ գտնէ»: Ավաղ, անավարտ մնացին «Ծննդավայրիցս դեպի Տեր Ձոր» վերնագրով հիշողությունները: Ակնհայտ է այն, որ մինչև կյանքի վերջը Ք. Ղարաբաղցյանը հույսեր է փայփայել ողբերգական ճակատագիրը կրող հայ ժողովրդի լավ ապագայի համար: Նա ցանկացել է մինչև վերջ

օգտակար լինել իր ժողովրդին, գրելով հիշողություններ՝ ցանկացել է կապ ստեղծել անցյալի և ապագայի միջև և մի անգամ ևս պատգամել՝ չմոռանալ մեր ժողովրդի անցած պատմական դաժան ուղին. «Հիսուններեք տարի է անցել այն օրից, շատ բան է փոխվել աշխարհում, բայց մենք չենք մոռացել Դեր-Ձորն ու Եփրատը, չենք մոռացել մարդկության պատմության մեջ անօրինակ եղեռնը. թշնամին մեզ ուզեց բնաջնջել երկրի երեսից, բայց մենք կանք ու կմնանք ամուր կանգնած հայրենի հողի մի բեկորին, ու այդ բեկորի վրա ստեղծել ենք մի նոր կյանք, որն իրեն է ձգում դեռ աշխարհով մեկ ցրված հայությանը: Եփրատի ափին Տեր Ձորի ճանապարհին մեռնողների, ողջ մնացած բեկորիս պարտքն է այցի գնալ հավիտյան նրանց հիշեցնող կորոշիւր՝ կանգնեցված հայրենի հողում, հայ մարդու ծեռքով»¹¹⁴

Резюме

Многочисленные научные исследования, посвященные геноциду армян в Западной Армении в 1915 г., в основном представляли масштабы этой страшной трагедии и основывались на официальных документах. Публикация воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида — дополнение к этой картине. Прошло уже девяносто лет и многих из чудом уцелевших свидетелей нет в живых. Их воспоминания — письменные и устные, являются бесценными источниками, освещающими трагедию западных армян. Подготавливаемая нами к изданию серия воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида 1915 г. открывается воспоминаниями К.Т. Карагеяна. Книга состоит из двух частей: собственно воспоминания, которые, к сожалению, неокончены, и возможностью дополнить их на основе сохранившихся рукописных отрывках автора, многочисленных писем и статей. Читая эти строки представляешь, каким ужасом и страхом были обьяты чудом спасшиеся и какой незаживающей раной остались эти воспоминания в невинных душах свидетелей самого большого злодеяния, начала 20-ого века сотворенного против всего человечества.

Summary

Numerous scientific researches devoted to the genocide of Armenians in Western Armenia in 1915, mainly presented the scope of that terrible tragedy and were based on official documents. Publication of memoirs of the direct

witnesses and victims of the genocide is an addition to this picture. Ninety years have already passed and most of the miraculously survived witnesses are no longer alive. Their memoirs both written and oral, are invaluable sources that illuminate the tragedy of Western Armenians.

This edition that we have prepared is a series of memoirs of the direct witnesses and victims of genocide of 1915 is opened by memoirs of K.T.Karageozyan. The book consists of two parts: recollections themselves that are, unfortunately, incomplete, and an opportunity to supplement them on the basis of extant hand-written extracts of the author, numerous letters and articles. While reading those lines one can feel the horror and fear of miraculously survived victims. Those recollections remained as an unhealed wound in the innocent souls of witnesses of XX century most outrageous crime against humankind.:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ֆիշողությունների երկրորդ կարճ օրինակում, Ք.Ղարազյոզյանի նշած ամսաթիվը /1915-ի, ապրիլի 24-ը/ չի համապատասխանում իրականությանը, այդ պատճառով էլ այստեղ ճշտված և ուղղված է հենց հեղինակի կողմից: Ք.Ղարազյոզյան, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին /հուլիսի 1-ին եղեմի օրերից/, 1968, էջ 2, Նյութերը պահվում են «Կուժայրի» արգելոց-թանգարանում /ԿԱԹ/, ֆոնդ թիվ 509:

2 Ք.Ղարազյոզյանի մայրիկի անունը ըստ նրա ավագ դստեր հայտնած տվյալների, Չայկանուշ էր: Ըստ Քաջունու երեխաների վկայության Չայկանուշը զորավար Անդրանիկի Օգանյանների տոհմից է և նախքան անուանությունը կրել է այս ազգանունը: Մեր ձեռքի տակ է Ք.Ղարազյոզյանի հուշերից «Շապին Գարահիսարը և Ջորավար Անդրանիկը» վերնագրով ձեռագիր մի փոքրիկ անավարտ հատված, որտեղ Քաջունին նկարագրում է Շապին Գարահիսարը՝ այն անվանելով իր և զորավար Անդրանիկի ծննդավայր: Նա գրում է. «Չայերի մեծամասնությունը բնակվում էր բերդի տակի թեք տարածքում, որը կոչվում էր Բերնի թաղ: Քաղաքի այլ վայրերում կային զուտ հայկական թաղեր, բայց Բերնի թաղը համարվում էր ազգային բոլոր տեսակի ազատ գործունեության վայր, կենտրոնատեղի: Բերդ բարձրանալու միակ ճանապարհը այս թաղով էր անցնում: Ես բերդ երբեք չեմ բարձրացած, հակառակ դրան, մայրական մամիս տունը, բերդի տակի անենավերջին տունն էր»: Ք.Ղարազյոզյանի Չայաստան բերած լուսանկարների մեջ պահպանվել է մի ընտանեկան խմբանկար Չայկանուշի, Քաջունու, նրա ավագ և միջնեկ քույրերի պատկերներով, ցավոք, լուսանկարը բավականին խուճապած է: Չակառակ կողմում դժվարությամբ նշարվում է տարեթիվը, հավանաբար Քաջունին լավ չի հիշել այն, գրված է 1911թ., քիչ ներքև 10:

3 Այս հատվածում Ք.Ղարազյոզյանը նկարագրում է իր ծննդավայր թամգարայից դեպի քաղաք Շապին Գարահիսար տանող ճանապարհը: Այս մասին է գրում նաև Արամ Չայկազը. «Քաղաքն մոտ երեք մղոն /մեկ ժամ/ հեռավորության վրայ, զոյգ մը գմբեթածե բլուրներու կողին, ծառաշատ ու ջրառատ թանգարան էր պատկած տաք արևուն տակ... Գառառական շատ փոքր բայց շատ սիրուն գիւղաքաղաք մըն էր ան: Ո՛րնէր մօտաւորապէս 250 տուն հայ եւ 100 տունի չափ ալ թուրք բնակչութիւն: Աւանդութեան մը համաձայն, հայերու նախահայրերը գաղթած էին Բագրատունիներու մայրաքաղաք Անիէն: ...Այդ աւանդութեան ուժ կուտար անոնց եկեղեցիներուն

քիւը...250 տուն հայ բնակչութիւն ունեցող թամգարան ալ ունէր եօթ կրօնական հաստատութիւն...»: Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը. Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ, 1957, էջ 22: Քաջունու հասցեագրված Շահնագար Քեօթահեանի «26 Յուլիս, 1986» ամսաթիվով նամակից. «Ես կը շարունակեմ տեղական թերթերում իմ աշխատակցութիւնս, այդ ինծի հոգեկան բաւարարութիւն կուտայ: Այս վերջերս ալ ձեռնարկեցի ինքնակենսագրութիւնս «Յուշեր ու նիշեր» վերնագրով. կսկսի թամգարայի մեր տան ամակութեան շրջանէն մինչև ներկայ օրերս. Չեր տունը կարծեմ Ս.Խաչ բաղին մեջ կը գտնուէր, քանի որ ըսած էիր, շատ անգամ հօրս խանութին առջեւէն կ'անցնէիր. այս մասին հստակ տեղեկութիւն տուր ինծի...»: «Քաջունին, գրում է իր հուշերում Շահնագար Քեօթահեանը, - որ մեր խանութին դիմաց Ս.Խաչին թաղը կը բնակէր, կու տայ հետեւեալ տեղեկութիւնը համաձայն եկեղեցի- մատուռի մասին. «Մեր տան կողքին էր գտնուում Ս.Խաչ մատուռը. աւանդութեան համաձայն, երկնից մի մեծ քար է ընկնում. զայն համարելով սրբութիւն, շուրջը կառուցում են մատուռը, մեծ քարը ուղիղ կեդրոնը. ներս մտնողը այն համբուրում, խաչ հանում եւ աղօթքի էր անցնում. ես այդ մատուռը շատ լաւ եմ յիշում»: Յուշեր ու նիշեր, Անձեր ու անցքեր նախադեռնէն մինչեւ ներկայս, Լոս Անձելէս, 1990, էջ 14-16: Ըստ Ս.Խ.Տովվէթեանի. «Թամգարա ժամանակին ունեցած է 600-700 տունի մօտ հայութիւն, իսկ մեծ եղեմի օրերուն 400 տուն բնակիչ, որոնց 350 տունը Չայ: Ասոնք եկած էին Անիէն եւ մաս մըն ալ Խոնշոնէն»: Սարգիս Խ.Տովվէթեան, Յուշեր Շապին Գարահիսարին, IMPRIMERIE «LE SOLEIL» 4, RUE GIT-LE-COEUR, PARIS-VI, Փարիզ, 1954, էջ 27:

4 «1915 Յունիսի 2-ին, երկուշաբթի, կէսօրէն վերջ, /թուրքերը/ շրջապատեցին ինձ ու նոր թաշխանները եւ ձեռք ինկող բոլոր Չայերը ձեռքակալելով, սուրճներու սպառնալիքին տակ, բանտ առաջնորդեցին անխնայ»: Սարգիս Խ. Տովվէթեան, Յուշեր Շապին Գարահիսարին, էջ 136: ...Այս հարուածը լաւ կազմակերպւած էր: Ոչ ներսէն դիմադրութիւն փորձուցաւ, ոչ ալ դուրսէն օգնութեան հասնելու եւ զանոց փրկելու հաւանականութիւն կամ հնարատրութիւն կար: Արամ Չայկազ, նույնը էջ 15-152: Տես Յուշանտեան Մեծ եղեմի, 1915-65, հրատարակութիւն «Ձարթօն» օրաթերթի, /Ղարազյոզյանի Մատրոնեան/, Բեյրութ, «Առլաս», 1965, էջ 776: «Քաղաքը զրկվում է 300 զինվորից», - գրում է Լ.Ղուկասյանը, «Վերածնունդ», Բանվոր, # 270 / 17554/, շաբաթ, 21 նոյեմբերի, 1987, Լենինական, էջ 3:

5 Ք. Ղարազյոզյանը գրում է. «Շուկայից անմիջապէս Բերնի թաղի մուտքի երկու կողմերում ղեմ դիմաց քարե խշոշր երկու ազգապատկան կառույցներ կային, որոնք կոչվում էին տաշխաներ /քարե խաներ/ նրանք առևտրական տներ էին... հայրս երբորդ հարկում ուներ կտորեղենի խանութ, որտեղ ես շատ անգամներ եղել եմ... Այս շենքերի կողքին վեր էին խոյանում հայրը հոյակապ եկեղեցին, տղաների դպրոցը, վարդապետի աշխատատեղին, որտեղ ինձ մի անգամ բախտ փնտակվեց այցելել մորաքրոջ տղայի՝ Շավարշ Օգանյանի հետ, որը վարդապետի մօտ քարտուղար էր աշխատում»: «Շապին Գարահիսարը և Ջորավար Անդրանիկը» ձեռագիր հատվածից: 6 Գիտե՞նալով հայ բնակչության ահի մասին թուրքերը ասում էին. «Գյուն բատուը, գյաուր յատուը /Արևը չմտած, հայը քնած, պատկած/» ըստ Քաջունու բանավոր հաղորդման:

7 Չայ մտավորականության հանդեպ թուրքական կառավարության իրականացրած հալածանքները իրենց արմատներով շատ խորն են գնում: Դեռևս

1894-ի հունիսից Ե.Գ-ում սկսվել են բռնությունները հայերի նկատմամբ. թուրք. իշխանությունները ձեռքակալել և բանտում գնդակահարել են վեց հայ ազգ. գործիչներ: Ի պատասխան տեղի հայերի եվրոպ. հյուպատոսներից օգնություն ստանալու խնդրանքների, ձեռքակալվել են ևս 80 մտավորականներ, փակվել դպրոցներ, արգելվել տնտեսական գործունեությունը, հրահրվել հայ-մահաձեղ. ընդհարումներ: 1915-ի ապրիլի վերջին և մայիսի սկզբին ձեռքակալվել են ևս 50 հայ

մտավորականներ: Դայկական հարց, հանրագիտարան, Դայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996, էջ 363, 364: Ա. Գ. Փափազյան, Դայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, ԴՍՄԳ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, ԴՍՄԳ ԳԱ հրատ., Երևան, 1989, էջ 5-20:

8 Արամ Դայկազը իր վերջ նշված աշխատությունում գրում է. «Իրիկուն մըն ալ, խորհրդակցութեան համար» Առաջնորդ Վաղինակ Ծայրագոյն Վարդապետը իրաւորեցին կառավարութեան շնքը ու վար դրին հոն: Գոյժը կայծակի արագութեամբ տարածուեցաւ քաղաքին մէջ: Կային մարդիկ, որոնք կ'ուզէին առանց սպասելու անցնիլ կռուի, վերջ տալ անորոշութեան և յարծակելով կառավարական շնքին վրայ, որուն գետնայարկը բանտն էր, ազատել Առաջնորդը: Այս կամ այն ձեւով, անոնք այս անգամ ալ զսպուեցան: Առաջնորդը կանչեր էր Տէր Սկրտիչը ու զայն առաջնորդական տեղապահ նշանակել է վերջ, պատուիրեր էր. «Ըսէ՛ տղոց, որ ինծի համար ինքնութիւններ չընեն»: Ան գիտակցօրէն զացեր էր դէպի մահ, յուսալով, որ թերեւս իր ու իրեն այն բանի մը հատի զոհաբերումով հօտը փրկուի: Յաջողօր օրն իսկ, Առաջնորդը ճամբայ հանեցին անորոշ ուղղութեամբ: Անոր կ'ընկերանային քսանեւեհինգ զինուած ծիւղորներ ու իր մահուան հրամանագիրը: Թուրքերը զայն սպանեցին Սու Շեհիրի մօտ /Անդրտա/, գիւղէն քիչ հեռու, աւազուտ տեղ մը: Դոն անոր դիակը մնաց անթաղ, մինչեւ որ բարկ արեւուն տակ տարրալուծուեցաւ: Այդ եղերական թուականէն մէկ տարի վերջ անոր սպաննիչը, Գուճուր Չառլ Բեազըմ Բէկ, անձնապէս պատմեց ինծի. «Կոնակին զնդակ մը քաշածիս պէս ինկաւ ձիւն վար. կարծես բերանը բացաւ բան մը ըսելու համար, բայց բերնէն ձայն մը իսկ չելաւ: Ատեն մը վերջ, երբ այն տեղէն կ'անցնէի, նկատեցի որ անոր պատկած տեղին աւազը, բաւական ընդարձակ տարածութեան մը վրայ, սեցած էր, իւղոտած: Զէի գիտեր, թէ մարդկային մարմինը այդքան իւղ կը պարունակէ իր մէջ...», էջ 150-151: Տես Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 774: Տես Ավետիս Փափազյան, 1915թ. Մեծ Եղեռնի նախաշնչին հայ պատրիարքարանի կողմից բարձրագույն դասնը հոված պաշտօնական գրութեան մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVII, ԳՂԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, ԳՂԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1998, էջ 201-209: Տես Լ. Դուկասյան, նշված աշխ., էջ 3:

9 1894-96 հայերի գանձվածային կոտորածներ են տեղի ունենում Արմ. Գ-ի և Օսմ. կայսրության հայաբնակ վայրերում: Արդուլ Դամիդ II-ի կառավարությունը նպատակ է ունեցել ճնշել հայ. ազգ. - ազատագր. շարժումը և վերացնել Դայկ. հարցը: 1895-ի սեպտ. 18-ին հնչականները Կ. Պոլսի Բաբը Ալի /Բարձր դուռ/ հրապարակում կազմակերպել են խաղաղ ցույց «Մայիսյան բարենորոգումները» կենսազործել տալու նպատակով: Թուրք ոստիկանությունը, զորքը և խուժանը հարձակվել են ցուցարարների վրա: Կ. Պոլսում կոտորվել է 2000 հայ, ինչը ազդանշան էլ գավառներում գանձվածային կոտորածների՝ 1895-ի սեպտ. 26-ին Տրապիզոնում, 30-ին Բաբերդում, հոկտ. 7-ին Գերթանում, 9-ին Երզնկայում, 10-ին Չարսանձակում և Բողիում, 13-ին Բաղեշում և Գյումուշխանեում, 16-ին Եղեխայում /Որֆա/ և Շապին Գարահիսարում, 18-ին Կարինում, 26-ին Խարբերդում, 27-ին Ակնում, նոյեմբերի 1-ին Դիարբեքիում, 3-ին Մարզվանում, 12-ին Սեբաստիայում, 28-ին Զիլեում... 1896-ի օգոստ. 14-ին տեղի ունեցավ «Բանկ Օտոմանի» միջաբեալը, այդ պատճառով Կ. Պոլսում կոտորվեց շուրջ 10000 հայ: 1894-96-ի կոտորածների հետևանքով 300000 սպանվել է, 100000-ը բռնի մահմեղականացվել, 100000-ը տարագրվել է տարբեր երկրներ: Դայկական Դարց, էջ 77, 229-230, 232-238, 295-296: Տես Գ. Ա. Գալոյան, Պատմության քառուղիներում, Ազատագրված ժողովրդի վերածնունդը, «Դայաստան», Երևան, 1982, էջ 177: Ավետիս Փափազյան, Ժամանակագրություն, Դայկական հարցը և Մեծ եղեռնը 1876-2000, ԳՂԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Ձանգակ-97», Երևան, 2000, էջ 7-8 և Թուրքական վավերագրերը Դայաստանի և հայերի մասին /16-19-րդ դարեր/ ԳՂԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «ԵԳԵԱ».

Երևան 1999, էջ 72-73: Արամ Դայկազ, նույնը, էջ 100-103: Դայկական եղեռնը Դուկարական ամսագրի մեկնարանությամբ, Սովետական Դայաստան, հուլիս, # 7/484/, Երևան, 1986, էջ 21: Տես Магда Нейман, Армяне, Краткий очерк их истории и современного положения, "Литературная Армения", Ереван, 1990, см сноску с. 213; Герман Голцъ/ФРГ/, Рипсиге Корхмазиян, Немецкая общность и армянские погромы в Османской империи /1896 – 1897гг./, Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, НАН РА, Институт Востоковедения, Ереван, 2001, с. 63 – 81.

10 Ըստ բանավոր ասվածի զենքի զաղտնարանը դարպասի մեջ էր:

11 ...Կռուի երկրորդ օրը լուսցաւ առանց հրացանածգութեան: Թուրքերը որեւէ յարձակման նշան ցոյց չէին տար: Սակայն իրենց զազանութիւնը ի գործ դրած էին անզէն բանտարկեալներուն վրայ: Գիշերանց թուրքերը հրացանի գնդակի տակ եւ կացնով կոտորել էին բանտարկեալներուն մէկ մասը: Իսկ միւս մասն ալ դռները բանալով դուրս, բակը հանուած ատեն, զնդակներու տարաքիւն տակ, իրարու վրայ կը լեցուին դիտապասա: Կը պատմուի հերոսական դէպք մը բանտարկեալներէն Գառնիկ Պէլեքեանի մասին: Իբր թէ՛ անիկա մտնելէ առջեւ կը յարձակի ոստիկաններու հարիրապետին վրայ եւ ան որ պրաունիկն ատրճանակը խելով կը սպաննէ զայն, եւ այլ ու ձախ կրակելով կը յաջողի հասնիլ մինչեւ բակին մեծ դուռը, ու այնտեղ անշունջ կ'իյնայ դիակներու կոյտին վրայ: Ս. Խ. Տովվէթեան, նույնը, էջ 138: Տես Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 776:

12 Թանձարա դժբախտ եղած է միշտ: Պարբերական կոտորածներու առթիւ ամէն անգամ որ թուրք խուժանը հանդիպած է քաղաքի /Շապին Գարահիսարի/ դիմադրութեան, վազած է իր վրէժը եւ պարտութեան ցաւը Թանձարացիներէն լուծելու քարոզած, աւերած ու քանդած է այդ դրախտավայրը՝ բազմաթիւ անգամներ... Բայց Թանձարացիք վերաշինած են զայն ու կրկին լծուած շինարար աշխատանքի... 1915ին, Շ. Գարահիսարցիներու բերդ բարձրացած օրն իսկ, պատմութիւնը կրկնուած է: Թուրքերը Թանձարա վազած ու քարոզած են հայ ազգաբնակչութիւնը: Արամ Դայկազ, նույնը, էջ 22, 23: Տես Армянский вопрос, Энциклопедия, Главная редакция армянской энциклопедии, Ереван, 1991, с. 340-341 կամ Դայկական հարց, էջ 363-364:

13 Առաջին համաշխ. պատերազմի նախօրէին շուրջ 300 շապինգարահիսարցի երիտասարդներ զորակոչվել են թուրք. բանակ, իսկ մյուսները, վճարելով պահանջվող հարկը, ժամանակավորապէս ազատվել: Շուտով նրանց էլ են զորակոչել, և ճանապարհաշինության ու շինարարական ծանր աշխատանքներում օգտագործելուց հետո կոտորել: 1914-ի նոյեմբ. բանակ զորակոչված բազմաթիւ շապինգարահիսարցիների թուրք զինվորականները զինաթափել են և գնդակահարել: 1915-ի փետրվարին Ենվերի հրամանով կոտորվեց 60000 հայ զորակոչիկ: Մինչ այդ կառավարությունը կեղծ լուրեր էր տարածում հայ զինվորների դասալքության և ապստամբությունների մասին, որոնք սպառնում էին թուրքական բանակի փկուրեցին: Դայկական հարց, էջ 232-238, 303-309, 364:

14 Դիշողությունների երկրորդ օրինակից տեղեկանում ենք. «Քիչ հետո մունետիկները սկսեցին շրջել հայկական քաղամասում ու հայտարարել, որ բոլոր հայերը, 15 տարեկանից բարձր, հավաքվեն ոստիկանատանը՝ ժողովի: Եվ բոլոր նրանք, որոնք միամտաբար հն ազանդվեցին այդ կոչին, կարճ ժամանակ անց չորս-չորս իրար կապված տարվեցին քաղաքից դուրս... Երանց հետ կապված ու զլխահակ քայլում էր դպրոցի պետեր տեսուչը՝ Վահուճին, նրան նույն պարանով կապված էր որդին՝ Դրանտը, բվաբանության ուսուցիչը կողքին կապված պարթև հասակով, քաջ ու կրողով մսագործ Կարապետը, որի արհեստն էր անասունների մորթելը, այժմ ինքն է գնում մորթվելու՝ անձայն ու առանց դիմադրելու: Մենք չտեսանք, թե նրանք ինչ գործիքով ընդունեցին մահը, բայց տեսանք նրանց՝ դահիճների վերադարձը՝ իրենց

կատարած ոճրագործության նկատմամբ հանգիստ ու հպարտ, գրպաններն ու ծոցերը ուռած...»: Բ. Ղարաբաջյան, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 1-2:

15 Ինչպես տեսնում ենք Քաջունու աշխատության և մեր օգտագործած գրականության մեջ թանկարայի հայ ընտանիքների թիվը տատանվում է 250-500-ի սահմաններում, հեղինակի մոտ այն տատանվում է 250-300-ի սահմաններում: Շապին-Գարահիսար, Շաբին Կարահիսար, քաղաք և գավառ Արմ. 7-ի Սեբաստիայի նահանգում, պատմական Փոքր Հայքի Նիկոպոլիս գավառում, համանուն գավառի վարչ. կենտրոն: XIXդ. սկզբից գավառը տրոհված էր 14 կազաների, ուր կար 2 քաղաք, 34 հայաբնակ գյուղ 16,300 բնակչությամբ: Ե.Գ. քերականագրություն կար 2400, իսկ մյուս գյուղաքաղաք թանգարայում 500 ծովի հայ բնակիչ: Ըստ պաշտոնական տվյալների Սվազի վիլայեթում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին բնակվում էին 235000-418000 հայ, իսկ Շապին Գարահիսար գավառում 25000 հայ: Հայկական հարց, էջ 363: Ըստ «Յուշամատեն Մեծ Եղեռնի, 1915-65» աշխատության տվյալների Սվազի վիլայեթի Ե.Գարահիսարում պատերազմից առաջ բնակվել է 40000 հայ, որոնք էլ փոխադրվել են, պատերազմից հետո մոտ 1000 հայեր են փոխադրվել, էջ 215: Ե.Գարահիսար սանջակում բնակվել է 35300 հայ, Ե.Գարահիսար քաղաքում 950 /7800/ հայ, թանգարայում 450 /3800/ հայ, էջ 367: Գեորգ Մեբրուպը իր «Հայաստան, Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով» աշխատությունում գրում է. «Թուրք կառավարութիւնը 1880-ական թուականներէն սկսեալ Հայաբնակ նահանգներուն համար աշխատած է իբր թէ կանոնաւոր վիճակագրութիւններ պատրաստել եւ ջանացել է ցոյց տալ թէ, Հայերը անհամեմատ փոքրամասնութիւն մը կը կազմեն իրենց բնակած վայրերուն մէջ: Հայոց Պատրիարքարանը մէկն է այնպիսի հաստատութիւններէն, որ ունին իրենց սեփական միջոցները թիչ շատ կանոնաւոր վիճակագրութիւններ կազմելու համար: Հայոց Պատրիարքարանը առաջին անգամ կանոնաւոր վիճակագրութիւն մը կազմած է 1882-ին»: Կ.Պոլիս, 1919, էջ 51-68: Ըստ Գեորգ Մեբրուպի Հայոց պատրիարքարանի հայտնած տվյալների հայոց թիվը Սվազի վիլայեթում մոտ 280000 էր: Նույնը էջ 64: Տե՛ս Ա.Խ.Տօվլէթեան, Մուլնը, էջ 13: Ազատ Հանքարյան, Սուլթանական կառավարության ազգային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի մահմեդական բնակչության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, 77 ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Չանգակ- 97», Երևան, 2002, էջ 50-61:

16 Տե՛ս տողատակ 3: «...Սբ.Գեորգի վանքը, Սբ.Թագաւոր եկեղեցին, մաւռուներ եւ ուխտատեղիներ Սբ. Աստուածածին, Գիւտ Խաչ...»: Արամ Հայկազ, նշված աշխ., էջ 22: 17 Հիշողությունների երկրորդ օրինակից տեղեկանում ենք. «Թուրք պաշտոնյաները այդ իմանալով նրանց առանձնագրին ու մի հայկական հացատան մեջ ողջ-ողջ այրեցին»: Բ. Ղարաբաջյան, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 2: 18 Քաջունի Թուրոսի Ղարաբաջյանը իր ինքնակենսագրությունում նշում է, որ ծնվել է 1906թ. Թուրքիայի Շապին Գարահիսար քաղաքում, տնայնագործ ջուլիակի ընտանիքում: Տե՛ս Լ.Սուլթանյան, նշված աշխ., էջ 3: Ա.Խ.Տօվլէթեանը այդ մասին նշում է. «...Ազնի ժողովուրդը էր, վարպետ ջուլիակագործ. այս արհեստը Բագրատունեաց մայրաքաղաքէն բերած էին իրենց հետ»: էջ 27: Թամգարացիք առաւելապէս ոստայանակ-ջուլիակ էին. ունէին իրենց յատուկ կազմածը-հորը / տեղեկեա՛հ!, տան մէջ մենք ալ մերիմը ունէինք.կային նաեւ չորս-հինգ մանր առեւտրականներ, ուսմբ իրենց սեփական վաճառատունը հաստատած էին Ե.Գարահիսարի մէջ. առտու կ'երթային եւ իրիկունը կը վերադառնային... Ե.Գեորգիան, էջ 15, Արամ Հայկազ, էջ 22: Ըստ Քաջունու դատեր պատմածի Քաջունու հայրը ծովափնյա Կիրասոն քաղաքից ջորիներով բելեր է բերել Թամգարա, իր արհեստանոցում ներկել տարբեր գույների և դազգահի վրա գործված կտորեղենի հետ դարձյալ նույն ճանապարհով ուղարկել Անգլիա: Դազգահի վրա իբրև

բանվորուհի աշխատել է հարևանի կինը Փերուզը, որը Լենինական տեղափոխվելուց հետո հաճախ է հյուրընկալվել իրենց տանը, իսկ երեխաները Փերուզի խնդրանքով իրեն կոչել են հորաքույր: Ըստ Ե.Քեօբահեանի Թամգարան ունէր միակ փուռ մը, տեղը Հայ... մէկ թիթեղագործ Հայ, որ էր նաեւ եկեղեցույ Աւագ Սարկաւազը, մէկ կօշկակար-հնակարկատ Հայ, մէկ դեղագործ-մանրավաճար հայրս, մէկ առաղծագործ Հայ, մէկ սափրիչ Հայ: Թուրքերէն կային քանի մը նպարավաճառներ, իշապաններ եւ հովիւներ... վաճառորդ մը որ գիւղաքաղաքին Միտիւրն /կառավարիչ/ էր...բժիշկ մը որ կու գար քաղաքէն Տօքթ. Վահան Հիւստիսեանն էր... էջ 17: 19 Ըստ Քաջունու դատեր պատմածի վերջին պահին հարստությունը թաղել էին թոնիրի կողքը, ծեփել թրիքով: Արդիների հետ Թամգարա վերադառնալուց հետո նրանք նկատում են, որ հատակի այդ հատվածը քանդված է. թալանչիների աչքից այդ էլ չէր վրիպել: 20 Այդ գիշեր Ե.Գարահիսար բերդի ինքնապաշտպանները ճեղքեցին թուրքական պաշարողական օղակը. «Որոշուած էր լուսնի բարձրանալէն առաջ յարձակիլ Գլխվար Սառնիճին առջեւէն, Տէվ Գարուստէն վար իջնել ու հաւաքուիլ Թամգարայի Վանքին պարտէզը: Հոն հասնելու քախտու ունեցողներուն պիտի պարզուէր ծրագրին շարունակութիւնը: Բայց, ցերեկին յայտնուեցաւ, որ թշնամին մեծ խնամքով ամրացուցեր էր այդ ճակատը: Թուրքերը ձեւով մը տեղեկացած էին մեր ծրագրին...Մշակուած նոր ծրագիրը, «գիշերուան անուևը», եւ ուրիշ մանրա-մասնութիւններ կանուխէն յայտնուեցան այս անգամ: Առաջին խումբը արդէն կէս մասնութիւններ կանուխէն յայտնուեցան միակ արծակելու: Երկրորդը կը հետեւի ճամբան հասած է: Կ'իջնէ վար առանց գնդակ մ'իսկ արծակելու: Երկրորդը կը հետեւի անոր. երրորդը կրնկակոխ պատրաստ է: Յանկարծ մարդոց ու հրացանաձուլութեան բուռն աղմուկ մը կը պատռէ գիշերը- ռումբ մը կը պայթի վար ինկող աստղի մը պէս ու կռիւը կը սկսի Բերդի փշերուն տակ: Ռումբեր կը պայթին, հրամաններ կը տրուին,անձօքի ու ցափ աղաղակներ իրար կը խաչածեն ու գնդակներու տարափ մը կը թափի Բերդի Դրան, ճամբուն ու ամբողջ արեւմտեան ճակատին վրայ:գիտենք, որ թշնամին, քաղաքի փլատակներուն ետեւ ապաստանած, անխոց էլ է. մերոնք են, որ քաջը կռուելով պիտի յառաջանան:Աւելի շատ մարդիկ պիտի գային մեզ հետ [ետ վերադառնալիս բերդ], եթ թուրք սպայ մը /-Ռ'վ կը կարծես թէ էր մեզ [թուրքերին] խաբողը, կրակը դադարեցնելու հրաման չտար ու մերոնք առիթն օգտուելով չանցնէին պաշարման գիծը... Այդ օրը Յունիս 29-ն էր /հին թուական/ եւ կռուի 27-րդ օրը: Հոս պէտք է դնեն վերջակէտը. չէ՛ որ սեւ վարագոյրը իջաւ արիւրեամբ, անման խնթութեամբ բռնուած ափ մը ժողովուրդի ճակատագրին վրայ... Արամ Հայկազ, էջ 256-258, 401-403: Տե՛ս Յուշամատեն Մեծ Եղեռնի, 1915-65, 774-776:

21 Ինքնապաշտպանությունը տևեց 27 օր: Դրանից հետո միայն մեզ դուրս հանեցին եկեղեցու քակից և ստիպեցին, որ քսորի ճանապարհը բռնենք, քայլենք մահվան քարավանի հետ: Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 2: Ըստ «Յուշամատեն Մեծ Եղեռնի, 1915-65» աշխատության «Տարագրութիւններ Հայկական Նահանգներու մէջ» սանդղակի Սեբաստիա նահանգի հայության տեղահանությունը իրականացվել է «25 Յունիս 1915», էջ 195: 22 Այս մասին գրում է նաև Ե.Քեօբահեանը իր «Յուշեր ու Միշեր» գրքի Քաջունու նվիրված պատումում.-«Ըսի Քաջունիին.- Սօրս ալ նման առաջարկ մը օրած էր մեզի դրացի Մուհարրեմ էֆենդին, որուն մայրս նույն ձեւով էր պատասխանած», էջ 341: 23 Դեյր էզ Ջոր /արաբ. դեյր վանք, զոր անտառ, աղավաղված Դեյր էլ Ջոր, Դեյր էզ Ջոր, Դեյր Ջոր, Տեր Ջոր/, քաղաք Սիրիայում, Եփրատի աջ ափին: Առաջին համաշխարհային ժամանակ քաղաքը և նրա շրջակա անապատը դարձավ հայ գաղթականների համակենտրոնացման վայր: 1915-ի սեպտ. 9-ին Հայեափ նահանգապետին հրաման տրվեց Տեր Ջորից անապատները քշել հայերին, կարգադրված էր բռնագրավել սննդամթերքը ստեղծելով արհեստական սով, փորձ

եր արվել հայերի դեմ հանել արաբներին, բայց արաբները օգնել են, պատասպարել հայերին հատկապես երեխաներին: Այստեղ 1915-16-ի ընթացքում գոհվել է շուրջ 200000 հայ զարթական: Հայկական հարց, էջ 112: Տես Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-65, էջ 929-930:

24 Աղուանիս. - Ոռոգուած եւ բերրի դաշտի մը վրայ շինուած էր: Միւտիր /կառավարի/ կը նստէր: Հայերը ունէին ներկայաճառի դպրոց եւ եկեղեցի: Այս գիւղն ալ, Այծպտերի պէս, տարազրուող կարաւաններու իբրեւ կայարան ծառայած է: Հովին էր Տեր եւ օգնէր: Արամ Հայկազ, էջ 19: Աղուանիս լաւ մշակուած դաշտի մը մէջ է, ոռոգուած ջրանցքներով: Հայ տնտեսներուն համարանքն էր հարիւր, իսկ թուրքերունը յիսուն: Ս. Կ. Տօպահեան էջ 30: Տես Լ. Դուկասյան, նշված աշխ., էջ 3:

25 Ե. Քեօբահեանը իր աշխատության մէջ մի ենթավերնագիր ունի «Քաջունի Գարակեօզեանի պատմութիւն», որտեղ տողատակում նա նշում է. « Ինծի համար իբրեւ նորութիւն հետեւեալ տեղեկութիւնը տուաւ Քաջունիին. - Թամազարայի Ս. Գեորգ Վանքը համախմբուած ընտանիքներն են, որ /անոնց մէջ նաեւ մեղիներ/ կազմած են առաջին կարաւանը. ուստի Ս. Թագաւորիները աւելի վերջը, երկուքն ալ Յունիսի ընթացքին», էջ 342:

26 -Մայրիկ, ալ քալել չեմ կրնար, ուղքերս կցաւին, ջուր կուզեմ, հաց կուզեմ:

-Տղաս, քիչն ալ քալէ, տուր ձեռքդ ինձ, քույրիկդ շալակս է, քիչ հանգստանանք, քեզի կտոնեն շալակս, հիմա ջուր կըլլա, հալբաթ գետի կիսադիպեցնք...: Զ. Ղարազոյցյան, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 3:

27 Աղանա, Ատանա, Սեյիան, ք. Կիլիկյան Հայաստանում՝ Սեյիան գետի ափին, Աղանայի նահանգի վարչական կենտրոն թուրքիայում: XII-XIV դդ. մտել է Կիլիկիայի հայկական թագաւան կազմի մէջ: XVI դ. սկզբին ընկել է թուրքիայի տիրապետության տակ: XX դ. սկզբին Ա-ի բնակչությունը շուրջ 45000 էր, 12600-ը՝ հայ: Հայերը օսմ. տիրապետության 300 տարիների ընթացքում դարձել էին թրքախոս, հայկական դպրոցների բացումը վերականգնացրեց հայոց լեզուն: Հայերը զբաղվել են արհեստներով, առևտրով, գյուղատնտես-մր, ունեին եկեղեցիներ, հայ. տպագրություն: 1909-ին կազմակերպվեցին հայկական կոտորածներ: Աղանայի և Հայեպի նահանգներում, ապրիլի 1-4-ին և 12-14-ին: XIX դ. վերջի հայկական կոտորածների ժամանակ Կիլիկիայի վիճակը ինքնապաշտպան. շնորհիվ XX դ. սկզբին բարվոք էր, նրանց անբաստանում էին թուրքերին դուրս մղելու և թագավորությունը վերականգնելու ձգտման մէջ: 1909-ին կազմակերպվեցին զանգվածային հայկական կոտորածներ, որոնց արդյունքում Աղանայի և Հայեպի նահանգներում գոհվեց 30000 հայ, 20000-ը Աղանայի նահանգում: 1915-ի եղեռնի ժամանակ Ա-ում հայ չմնաց, առաջին համաշխ. հետո, երբ Կիլիկիան հանձնվեց բնակավայրի թուրքիային, հայերի մեծ մասը գաղթեց Սիրիա, Լիբանան, Հունաստան: Հայկական հարց, էջ 8-9, կամ Армянская вопр., с. 11-12; Գ. Ա. Գալոյան, նույնը, էջ 178:

28 Այնտեղ ինչ-որ մութ քարայրի մուտքի մոտ, մենք տեսանք դահիճների յարակցումները ձեռներին: Քարայրից արյան շիբեր էին հոսում... Սուկայի տեսարանի միակ վկան երկնային աստվածն էր, որից գթություն էինք աղերսում՝ ձեռքերս վերև բարձրացրած, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 3-4:

29 Մեր ժամկոչի կինը իր աչքերով տեսել էր անուսնու մահը արհավիրքի երկրորդ օրը, եկեղեցու բակում: Նա կերպարանափոխվել էր, դարձել էր անահ: Քարավանի առջևից էր գնում, առևանգման ենթակա աղջիկներին ու երեխաներին պաշտպան կանգնում: Այժմ էլ նա առաջինը վճռեց, թե մահվան ո՞ր տեսակն է նախընտրելի: Փոխանակ ատելի թշնամուց ընդունելու նետվել գետի ալիքների մէջ, մահ գտնել նրա զով գրկում, ու նա, կոչ անելով հետևել իրեն, ժայռի բարձունքից նետվեց գետի հորձանքի մէջ ու կուլ գնաց հորդառատ ջրերին: Նրան հետևեցին շատերը, աղջիկներ ու հարսներ իրենց պատիվը փրկելու համար, իրար գրկած կամ մեկ-մեկ, ամենքի շրթերին մրմունց կար լուռ, անկարեկից երկնքի ու քարսիրտ մարդկանց հանդէպ:

Նրանք խելացնոր մի մղունով բռնված նետվում էին գետի ալիքների մէջ՝ ազատվելու իրական դժոխքից, որը կյանք էր դարձել... Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 4:

30 Բնակիչները կը յատկանշուէին մասնայատուկ գեղեցկութեամբ. զուր տեղը չեն «Թամազարա» պարին հետևալ տողերը. «Թամազարայի թոնիրները, Գեղեցիկ են իր կիները»: Ե. Գարահիսարցի Սուրեն Վեցիկեան հետեւեալ վկայութիւնը կու տայ. «Թամազարացի բնաւորութեամբ ու ֆիզիկական յատկանիշներով ալ կը տարբերէին Գարահիսարցիներէն. բարեմե էին, մաքուր մորթու ու նուրբ դիմագծերով. ու մինչ քաղաքացիք դիւրաբորբ, ջղային եւ շատ եռուն էին, Թամազարացիք, ընդհակառակն, համբերող, հանդարտ, խաղաղ ժողովուրդ էին»: Ե. Քեօբահեան, էջ 15, Արամ Հայկազ, էջ 23: 31 Գալիս էին այլ վայրերից նորանոր խմբեր, միանում մեզ, քայլում մեզ հետ և բաժանում մեր ծանր վիճակը: Մենք համակերպվել էինք մեր նոր կյանքին, կյանք, որ այլևս մեր չէր, ոչ ոք չէր մտածում ապրելու, կյանքի մասին: Մենք քայլ առ քայլ գնում էինք դեպի ոչնչացում, որի համար էլ հանել էին մեզ մեր պապեանական հողից և խաղաղ տներից: Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 6:

32 Ակն, Էզին, այժմ Բենալիե, քաղաք, համանուն կազայի կենտրոնը Արմ. Դ-ի հարբերդի նահանգում, հարբերդից մոտ 90 կմ հս-արմ., Եփրատի աջ ափին: Ըստ վաղանդաբայան հիմնվել է Վասպուրականից տեղափոխված հայերի կողմից 1021-22-ին: Քաղաքի երկու մասերը /Վերի և Վարի/ բաժանված էին թաղամասերի / Արեզի, Խնձածոր, Գոչան/: Ըստ Ակնի հայոց առաջնորդարանի տվյալների 1880-ին քաղաքի 9728 բնակիչներից հայեր էին 5442-ը /1910-ին՝ 10000-ը/, կար 2 եկեղեցի Ս. Աստվածածին Վերի թաղում և Ս. Գեորգ Վարի թաղում, վարժարաններ /Ներսիսյան, Նարեկյան երկսեռ, Շահիսիմյանց/: 1872-78-ին գործել են Ազգասիրական, Ռուսամասիրական, Շահաբեր մշ. ընկեր-ը, հրատարակվել «Եփրատ», «Ծաղիկ», «Մտրակ» թերթերը: Գավառակի 22 հայաբնակ գյուղերում 1880 թթ. ապրում էր մոտ 6700 հայ: 1894-96-ի կոտորածների ժամանակ Ակնում և շրջակա գյուղերում կոտորվել է 3000-4000 հայ, ամբողջովին ավերվել է քաղաքի Վերի թաղը և եկեղեցին: 1915-ին Ակնի հայերը բռնությամբ տեղահանվել և բնաջնջվել են: 1925-ի տվյալներով 300-400 ողջ մնացած հայեր աստիճանաբար լքել են բնօրրանը: Հայկական հարց, էջ 25-26, 167-169: Տես Լ. Դուկասյան, նշված աշխ., էջ 4:

33 Սիամանթո /Ատոմ Յարճանյան/, /1878, Ակն-1915 Մեծ եղեռնի գոհ/: Ս. պաղատանքի, լաց ու կոծի բանաստեղծ չէ. «Գթությունը մենք չենք ճանչնար, միայն վրեժն է ճշմարիտ»: Հայկական Հարց, էջ 414-415 կամ Армянская вопр., с. 301. Ե. Քեօբահեանը գրում է. «Տարաբախտ Սիամանթո, միայն դու՞ն ես Հայրենի Տան անմար կրակովը տոչորոզը. ահա ես, ահա նման քիւրաւոր կարօտակէզ հոգիներ, որոնք նոյն ողբն ու աղերսն ունին իրենց շրթերում: Թող Հայոց Մեծագոր Արքային հետ, ես ալ այս առաւօտ գոչեմ ու աղապակեմ. «Ո՛ տայր ինձ գծուխն ծխանի, եւ գառաւօտն Նաւասարդի...»: Նույնը, էջ 69:

34 Ըստ Քաջունու դստեր պատմածի՝ թուրք ճգնել և քածել են, շիրան լցրել են տափակ ամանների մէջ և դրել արևի տակ, ապա պահեստավորել կաճե կճուճներում ողջ տարվա ընթացքում շաքարի փոխարեն օգտագործելու համար: Այս շիրայով են եփել բոլոր մուրաբաները /նաև թուրք/: Թուրք իբրև կեր տվել են անասուններին: Ե. Քեօբահեանը նշում է. «Թուրք կը չորցնէին, իբրեւ չամիչ ծմրան մէջ սպառելու համար. անով կը շինէին «պաստեղ», ալիւրով խառնուած, օգո-կարմիր քաղցրեղն մը, թերեւ շարոցներ: Ո՛ր ինչ ալ համով կ'ըլլար պաստեղը եւ ընկոյզը պլորուած վիճակի մէջ: Թուրքն կը շինէին նաեւ օղի. խաղողը քիչ էր ու թերեւս այս էր պատճառը, որ իբրեւ ոգելից ըմպելի՝ տոյն խմիչքը միայն կը գործածուէր: 1969-ի ամբան ծննդավայրս այցելութեան, տեղացի թուրք կիներ մեզի հրամցուցին անմահակներ այդ թուրքն գոր եւ ճաշակեցի անհուն կարօտով. միշտ համեղ ու քաղցր էր մնացած ան», էջ 16-17:

35 Թուրք. բանակի համար երզնկայից երգրում ուղտերով գնեց փոխադրող մի պարսիկ վկայում է. « Մի անգամ 1915-ի հունիսի մեջ, երբ եկա Խորհուրի կամուրջի մոտ, մի առեղի տեսարան ներկայացավ իմ աչքերուս: Անթիվ-անհամար մարդու դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջեն անդեն կվազեր... Կամուրջեն մինչև ճինիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով. ծերեր, կիներ, երեխաներ...»: Հայկական հարց, էջ 306: Генрих Фирбюхер пишет: "Депортированных армян Трапезундского и Эрзрумского вилайетов погнали по долине Евфрата до ущелья Кемах. Это глубокий, крутой каньон в горах, где река превращается в быстрину. То, что разыгралось здесь со многими тысячами армян, представляет картину такой невообразимой жестокости и зверства, что, кажется, еще раз сконцентрировалось все безумие тысячелетий и возвысилось на этом клочке проклятой земли, чтобы в образе огромного чудовища торжествующе выкрикнуть пылающему июньскому солнцу, что вся цивилизация все го лишь вуаль, которая каждый день может быть разорвана жестокостью двуногого изверга": Г.Фирбюхер, Что скрывало кайзеровское правительство от немецких подданных, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, Ереван, 1991, с.51 – 53. Տե՛ս Յուշամատեան Մեծ եղեռնի, հրատարակութիւն «Ձարթօնք» օրաթերթի, /Պատր Գերսամ Սհարոնեան/, Բեյրութ, «Ատլաս», 1965:

36 1895-ի աշնանը կոտորածներ են տեղի ունենում Շ.Գ. և Թամազարա քաղաքներում ու Ազարովա գավառակում: Մինչև 1896-ի վերջը զոհվել են 5000 հայեր: Դանիել Չաուչի գլխ. ջուկատը գավառի տարբեր տեղերում կազմ. է ինքնապաշտպանություն: Հայկական հարց, էջ 363: 1895ի դեպքերուն, գիւղացիք լեռները քաշուած ու Դանիել Չաւիւչի ընկերակցութեամբ կոտած են Թուրքերուն դէմ եւ այդպիսով քիչ վնասով դուրս եկած: Ս.Խ. Տօվլէթեան, էջ 31-32: 95-ի դեպքերուն գաւառը ենթադրաբար 8000-9000 զոհ տուած է: Սեբաստիոյ Առաջնորդին իմաստուն քաղաքաճարին ալ մեծապէս օգնած է, որ վնասը քիչ ըլլայ: Հակահայ կառավարիչին յաջողեց նոր մե, որ սկսաւ հաշտարու պնդաքակնութիւն վարել: Թուրքերը չհամղութեցին եւ պաշտօնանկ ընել տուին... Անոր յաջողեց արաբ կառավարիչ մը, որ նոյնպէս հայերուն հանդէպ լաւ քաղաքակնութիւն վարեց: Հայերը կամաց-կամաց սկսան գտնել իրենք զիրենք: Բայց, կառավարութիւնը սկսաւ խստիւ հետապնդել Դ.Չաւիւչի խումբը, որուն համբաւը մինչեւ ելլողզի Պալատը հասած էր: Դ.Չաւիւչը ողջ կամ մեռած գտնողին 1000 ոսկի պարգեւ խոստացուեցաւ: Լրտեսները ամէն տեղ սկսան գործել: Դ.Չաւիւչի խումբին ընկերները եղած են Դուկաս Տօվլէթեան, Գրիգոր Պարոնեան, Գրիգոր Պաշպետիւքեան, ընդամենը 7 անվեհեր քաջեր: 96 ծմրան, Դ.Չ. Գարապօղա՛ս ապաստանած էր: Խումբը, զգալով որ վտանգուած է, լեռները կը քաշուի: Գիւղը կը պաշարուի թուրքերու կողմէ: Կը սկսին խոշտանգումները: Հայ հովիւ մը այնքան զարհուրելի տանջանքներու կենթարկուի, որ ալ չդիմանալով, կուտայ անուռը լեռան եւ քաքստոցին, ուր ապաստանած էր խումբը: Չիւնի հետքերէն, թուրքերը կը գտնեն խումբին տեղը եւ կը պաշարեն քաքստոցը: Խումբն ալ կ'ուզեր ճիշդ այդ ատեն Անդրեասի ուղղութեամբ երթալ՝ հոն ապաստանելու համար: Չիւնը, մէկ մէքր թանձրութեամբ, ծածկած էր ամէն տեղ: Խումբը հազիւ Ձառայի եւ Անդրեասի միջոց գտնուող Դարապալիքը հասած, այլեւս անկարող կըլլայ ծամբան շարունակելու: Տեղի կ'ունենայ յուսահատական կոթի: Կոտորներուն ոտքերը և մատները սառած էին: Թուրքերը կը բռնեն Դ.Չաւիւչը եւ կը կտրեն անոր գլուխը: Այսպիսի տխուր ու եղերական վախճան մը կ'ունենայ Դ.Չաւիւչի ռազմիկներու խումբը: Արամ Հայկազ, էջ 104-106: Տե՛ս Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-65, էջ 927-952, էջ 773:

37 Ցանցառ թուով բարեկեցիկ ընտանիքներու կողքին կային հազիւ ծայրը ծայրին բերողներ ու նաեւ ջբատարներ, որոնք սակայն ունեւորներու կողմէ կը հոգացուէին. որքան որ որ կը յիշեն, մուրացիկներ չունէինք: Շ.Քեօթահեան, էջ 15:

38 Շուրջ 1200 անծ: Հայոց թիւը աւելի բարձր պիտի ըլլար, եթէ 1895-ի Համիտեան ջարդերուն հարիւր յիսունէ աւելի այրեր զոհ գացած չըլլային: Մեծ եղեռնին նահատակուած հօրս /Ավագ Քեօթահեան/ հրաշքով ինձ հասած Աստուածաշունչ Մատենահին առաջին էջին վրայ նկարագրուած է. «1895թ. Քրիստոսի, Հոկտեմբեր ամսոյ 15-ին, Թամազարայի բոլոր տունները, եկեղեցիները եւ խանութները թալանեցին. 500 անծիներով եկան եւ չորս օր վերջը նոյն մարդիկները եւս եկան տեղս, 150-ի չափ մարդ սպանեցին. Տերը ինք դատաստան ընէ. ամէն»: Շ.Քեօթահեան, էջ 14-15: 39 Շապին Գարահիսար գավառում 1914-ի հոկտ. Անդրեաս, Բուրգ, Աղվանիս, Կրդանոց, Վերին, Վարին Այծպտերներում տեղադրված 15000 թուրք. բանակը իրագործ. է սպանություններ, բռնագրավումներ: Թուրքերով, չերեզներով ու քրդերով շրջապատված քաղաքի հայության վիճակը ծանրանում էր: Թուրք սուլթաններն ու ասկարները 1915-ի հունիսի 2-ին շրջապատել են քաղաքի հայկական թաղամասը, ոչնչացրել են 400 հայի: Իմանալով տեղահանության մասին հայերը անցել են տարերային, ապա և կազմակերպված ինքնապաշտպանության: Ամրացվել է թաղամասը, կառուցվել են պատնեշներ: Պաշտպան-ը գլխ. է Դուկաս Դեվլեթյանը, աչքի են ընկել Ավագ Տյուրիկյանը, Գարեգին Կարմիրյանը, Շապուհ Օզանյանը, Իսրայել Օզանը, Գասպար Դուկասյանը, Հմայակ Կարազոյզյանը: Թուրքերը քննադատեցին ռմբակոծել և հրդեհել են հյակ. թաղ-ը /3000 տուն/: Շուրջ 5000 բնակիչ մարտերով նահանջել են Շ.Գ. հինավուրց բերրոջ տանելով պարեն, անասուններ, եղած զինամթերքը: Ստեղծվել է բերդի պաշտ-ը ղեկավարող գնվ. խորհուրդ Դ. Դեվլի-ի գլխ.: Կարևոր կետերը պաշտպանում էին 5-25 հոգանոց մարտական խմբերը: Ամրացվել է բերդի շրջապարիսպը, որը պաշտպանության առաջին գիծն էր: Ռազմիկները քիչ էին, շուրջ 500 հոգի, գեներլ անբավարար: Թուրքերը, Սեբաստիայից համալրում և բնդանոթներ ստանալով գեներ. սպաների ուղեկց-մը գնդակոծել են բերդը Սեբաստիայի վալի Մուսամմարը երկու անգամ բանազնացի միջոցով առաջարկում է հանձնվել: Մերժումից հետո ձեռնարկվում է կատարել /20000 հոգով/ հարձակում: Թուրք. մի ջոկատի մոտ 70 հոգու, հաջողվել է ժայռը մագլցելով հասնել բերդ և խուճապ առաջացնել: Հունիսի 25-ի գիշերային հարձակումով, զոհերի գնով, հայ. մարտիկները ճեղքել են թուրքերի պաշտպանական օղակը և դուրս եկել բերդում եղածներին փրկելու համար հարևան շրջաններից հնարավոր օգնություն ստանալու: Բերդում մնացող ռազմիկները թույն են ընդունել: Չնայած լուրջանը թուրքերը չհամարձակվեցին մոտենալ, իսկ երբ հունիսի 29-ին պաշտպան-ն 27-րդ օրը, ներխուժեցին բերդ, այստեղ հանդիպեցին երեխաների, կանանց, ծերերի, որոնց կոտորեցին: Բերդից հեռացածները քեւ չկարողացան օգնություն կազմակերպել, բայց շարունակեցին պայքարը: Գյուղ. բնակչ. մի մասին հաջողվել է Սև ծովով հասնել Արլ. Գ-ն: Նշեցեք Բուրգ գյուղի ինքնապաշտ., անհավասար կռվում թուրքերը բնաջնջեցին Բուրգի հայ բնակչությանը: Հայկական հարց, էջ 363-365:

40 Մայրոս, որ դիմացել էր ճանապարհի տանջանքներին, անչափ տառապել էր, անհամար զրկանքների ենթարկվել, քաղցած մնացել ու ձեռն ընկած ուտելիքի մի կտորը և մի բաժակ ջուրը մեր վրա բաժանել, գերմարդկային ճիգերով չափահաս քույրերիս հեռու պահել թշնամու խուզարկու աչքերից, երեխաներից մեկիս կրծքին սեղմած, մյուսը շալակած, քայլել էր դժոխային ճանապարհներով, այժմ հյուսիսում, հոգնած, ընկել էր չոր գետնին վեր էլնելու անկարող: Մեծը չէինք կարող օգնել նրան: Ք.Պարազոյզյան, Եփրատի ափերով Տեր Ջորի ճանապարհին, էջ 5:

41 Առաջին որբանոցներ հիմնվել են XIXդ. վերջին հատկապես 1894-96-ի կոտորածներից հետո, Արմ Գ-ում, Կիլ-ում, Կ.Պոլսում, Իզմիրում, Ադաբազարում, Կեսարիայում, Ուրբաթյում, Դիարբեքիրում, Մարդինում: Գործել են 20 որբանոցներ հայ և օտար բարեխնամ ու միսիոներական հաստատությունների հսկող. մերքո: Որբերի թիվը ավելացավ 1915-23-ի ընթացքում շուրջ 200000: Պատերազմի ժամանակ հանրությանը հանդարտեցնելու համար կառավարությունը 3500 որբերի

համար որբանոցներ բացեց Մարդին, ՈՒրֆա, Դիարբեքիր, Կեսարիա, Հալեպ և Ադանա բաղաճներում, Լիբանանի Այնթուր

ա գյուղում: Պատերազմի տարիներին 5000 որբեր փրկվեցին Խարբերդի, Սեբաստիայի, Մալաթիայի ներքին գավառների Ռ-ում, որոնք տնօրինում էին շվեյցարացի միսիոներներ Յակոբ Կյունցերը և Նրա տիկինը, դանիացի միսիոներներ Մարիա Յակոբսենը, Կարեն Փիթերսոնը և Կարեն Եփփեն: Թուրքիայի պարտությունից հետո որբերը հանձնվեցին Հայկական բարեգործական ընդհանուր միության /ԲԲԸՄ, Մեծավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի /Ամերկոմ/ և այլ ղրբախանա մարմինների հոգածությանը: Պատերազմի հայ որբերին ապաստան տվող առաջին որբանոցները բացվել է 1918-ի սեպտ., Եգիպտոսում, որը պատասպարել է Մուսա լեռից Պորտ Սաիդ տեղափոխվածներին: Թուրքիայում 1918-21-ին հաշվվում էր շուրջ 70000 որբ, դրանցից 5000-ը Կ.Պոլսի 23 որբանոցներում: Մեծ Ռ. կային Սեբաստիայում, Խարբերդում... Քեմալական շարժման պատճառով Ռ. փոխադրվեցին Մեծ. Արև-ի արաբ. երկրներ և Հունաստան: Հայկական հարց, էջ 369-370: Տես Լիպարիտ Ազատեան, Հայ որբերը Մեծ եղեռնի, գիրք առաջին Լուս Անճելը, 1995, գիրք երկրորդ, Լուս Անճելը, 1999, գիրք երրորդ, Լուս Անճելը, 2002: Տես Տես Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-65, էջ 927-952; Герман Гольд, Репсимъ Корхмазаян, назв. работа, с. 70. 42 Երեկոյան զգալով մոտավոր մահը, հայացքը չափափա քույրերիս դեմքին հառած մի խոր հառաչ արձակեց, հագիվ լսելի ծայրով շշմջաց. «Թուրքերի... ձեռքը... չընկնեք...»,- ու նրա աչքերում արցունք երևաց: Մա քարտի ճանապարհին, Եփրատի ափին մեռնող հայ կնոջ վերջին պատվերն ու բաղձանքն էր: Պետրոս Դուրյանը մեռնելիս երկու բան է ցանկացել «Նախ կյանք, հետո լացող մը հետևից»:

Այստեղ Դեր-Չորի ճանապարհին մեռնող հայերը կյանք չէին ցանկանում, իսկ մնացողները նրանց հետևելու միայն երանի էին տալիս: Մորս վերջին ցանկությունը չկատարվեց: Երկու քույրերս անկարող էին պաշտպանվել թուրքերի խուզարկու աչքերից: Արցունքներն աչքերում նրանց վիճակվեց ապրել դավանափոխ կյանքով, «Փրկարար» Եփրատը նրանցից հեռու էր: Եփրատի ափերով Տեր Չորի ճանապարհին, էջ 6: Տես Լ. Դուկասյան, նշված աշխ., էջ 4:

43 Որբանոցներում երիտրուրքերը անուղղակիորեն շարունակում էին բնաջնջման ծրագիրը մանկահասակ որբերին բռնի թրջացնելով կամ սովամահ անելով: Այնթուրայում պատասպարված 2000 որբերից 1350-ը մահացան մինչև պատերազմի ավարտը չդիմանալով անտանելի կենսապայմաններին: Պատերազմի ավարտից հետո սկսվում է որբահավաք: Որբերը ապաստան էին գտել արաբ, բուրջ, թուրք ընտանիքներում: Որբահավաքի աշխատանքը կատարեցին Ամերկոմը /60000/, ԲԲԸՄ-ը /15000/, Կ.Պոլսում հիմնադրված «Ազգային խնամատարություն» մարմինը /40000/ և 5000-ը հայ և օտար բարեխնամ հաստ-ի հոգատարության ներքո: Արշավախմբեր ուղարկվեցին Անատոլիա, Սիրիա, Միջագետքի անապատների խորքերը օտար տներում ապրող հայ փոքրիկներին հաճախ վերագնում էին փողով: Աջքի ընկան բժ. ենիթան, «որբերի հայր» Ռուբեն Հեռյանը, Առաքել Չաքրյանը, Մուշեղ արք. Խերոբյանը: Հնարավոր եղավ հավաքել շուրջ 150000 հայ որբեր: Հայկական հարց, էջ 369: Տես Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-65, էջ 927-952:

44 Բելա թուրքերեն փորձանք:
45 Գարահիսարի շրջակայքը շատ մը հայկական գիւղեր կային 1700-ին, բայց դարերու ընթացքին իսլամացած են դեպքերու բերումով: Ժամանակին Աշխարհադաշտի 70 առ հարիւրը Հայ էր, իսկ այս դարուն սկիզբը 25 առ հարիւրը կը մնար: Կարճ խօսքով, Աշխարհադաշտի,- Շուշարն ալ /Սուշէիիի/ միասին,- 130 գիւղերն հագիւ 35-ը իր հայկական ղիմագծութիւնը պահած էր: Կարգակաճօրն երկու համայնքներ են Սուշէիիին եւ Աշխարհադաշտը /Աշխարի Օվա/: Այս դաշտագետիկը կը յանգի Օրթա գիւղին եւ անկէ ծայր կուտայ Սուշէիիին, որ փակած է Կարնոյ սահանգին

Կերճանիսով: Այս վերջին համայնքը բարեբեր չէ ինչպէս, Աշխարհադաշտը: Ս.Խ.Տովլեթեան, էջ 29,30:

46 Տես Շ.Քոթախեան, էջ 99:
47 Ըստ Զ. Դարագոյանի պատմածի այս քրոջ անունը Տիգրանուհի էր:

48 Ետևից մի կին բռնեց ինձ և ափից հեռացրեց: Եփրատի ափերով Տեր Չորի ճանապարհին, էջ 6:

49 Կիրասունի, Օրտուկի և Տրապիզոնի խնուղիները կ'անցնէին Թամզարայէն եւ Սեւ Շովի ափերուն թառած այդ քաղաքներու ընտրանիէն խոշոր մաս մը կուգար Թամզարա կազդուրուելու անցնելու իր արձակուրդի օրերը: Արամ Հայկազ, էջ 22, Շ.Քոթախեան, էջ 14: Գարահիսարէն 5-6 քիլոմէթր դէպի հիւսիս- արեւելք գոյութիւն ունի խոշոր ժայռ մը, զոր տեղացիք «Խաչին քարը» կ'անուանեն: Այս ալ երկուհարիւր մէթր բարձրութիւն ունի: Կիրասունի հին ճամբան այս ժայռին արեւելեան կողմէն կ'անցնէր: Ս.Խ.Տովլեթեան, էջ 28:

50 1903-1921թթ. Սան Պաւլոյում հրատարակվող «Ալ Աֆքար» հայտնի թերթի 1219-րդ համարում /25.03.1918/ «Հայաստանում թուրքերի վայրագությունները» վերնագրով հոդվածում բաղդադցի մի արաբ ականատես պատմում է.«Թուրքերը Գարահիսարից քշել են հարյուր հայ ընտանիքներ, որոնց կեսին խեղդել են Եփրատ գետում նավակները շրջելով, ուրիշները Դեր Չոր հասնելուց հետո էլ քայլել են քաղաքից հեռու»: Նորա Արիսյան, Հայոց ցեղասպանությունը և սիրիական սփյուռքի մասնուլը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000, էջ 17-18: Ուշագրավ է նաև «Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915-65» աշխատությունից վերցված հետևյալ տեղեկությունը. «...Սեբաստիայ գանգուածը, երբ Ռաքքա հասաւ եւ ապա զինադադարի փողը հնչեց, Սեբաստիոյ [նահանգի-Ի.Ա.] կարաւաններն մնացած էր շուրջ 450 անձ, որոնցմէ 60-ը միայն լրիկ մարդեր էին»: էջ 372:

51 Իրենց միջոցներով կը պահէին Արամեան երկսեռ Վարժարանը՝ 150 աշակերտով: 1915-ին այդ Վարժարանը Գրիգոր Գասպարեանի /Գր.Վահանցի/ եւ իր տիկնոջ երանուհիի օգտաշատ ղեկավարութեան տակ էր: Արամ Հայկազ, նշված աշխ., էջ 22, Շ.Քոթախեան, էջ 22-31:

52 Շուրջապար, Աւետիս Գ. Մեսուսենց

Վարդավառի կիրակին	Այս տարի աշնան
ճոյնան ուխտի զընացի,	Երթանք Սուրբ Էհան,
Անցաւ ֆիտան մը անգին	Ոսկի մատանին
Սիրուն ապշած մնացի:	Տամ քեզի նըշան: /կրկ./

Տես Արամ Հայկազ, էջ 85, Ս.Խ. Տովլեթեան, էջ 214:

Հոն [Թամզարայում-Ի.Ա.] կը գտնուի Ս.Գեորգի վանքը: Քաղաքին Ս. Թազաւոր եկեղեցին շրջապատուած էր դպրոցով ու պարիսպով: Ս.Էհան եւ Ս.Աստուածածին եկեղեցիներուն աւերակները ցրուած են մօտակայքը: Ս.Գեորգի վանքին տակէն կը բխի լայնածիր ճօնայ ալը, ուր Գարահիսարից քը Լը տօնեն Վարդավառի տօնը: Ս.Խ.Տովլեթեան, էջ 27: Տես Արամ Հայկազ, էջ 22, Շ.Քոթախեան էջ16:

53 Երիտրուրքերը Արմ. Գ-ի Օսմ. կայսրության մյուս մասերում ապրող հայերին ոչնչացնելու և այդ ձևով հայկական հարցը լուծելու նպատակով, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, մերձակատային շրջաններից հայերին տեղափոխելու անվան տակ կազմակերպեցին և իրականացրին ավելի քան 1,5 մլն հայերի տեղահանությունն ու կոտորած: 1915-ի մայիս-հունիս ամիսներին Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիի, Մահանգների, Կիլիկի, Արմ. Անատոլիայի հայությունը գանգավածաբար տեղահանվեց և կոտորվեց: 1915-ի հուլիսին Սամսունի գերմ. փոխյուլպատոսը հայտնում էր, որ Անատոլիայի հայերի տեղահանությունը նպատակ ունի կամ ոչնչացնել կամ բռնի մասնաշարժանացնել: Տրապիզոնի գերմանական հյուպատոսը հայտնում էր, որ այսպես վերջ է դրվում

հայկական հարցին: Գերմ. դեսպանը հայտնում էր, որ եթե սկզբում տեղահանվում էին Կովկասյան ճակատին հարող նահանգների բնակիչները, ապա այդ տարածվեց նաև այն մասերի վրա, ուր Ներխուժում չէր սպասվում: Այդ գործողությունները, իրականացման եղանակը վկայում են հայերի ոչնչացման մասին թուրքիայի ներսում: Բացի շուրջ 1,5 մլն զոհերից, 600000 հայ դարձավ գաղթական, վերը նշված տարածքները հայաթափ եղան: Հայերի կոտորածները շարունակվեցին նաև հետագա տարիներին: Երիտթուրքերը ձգտում էին կոտորել նաև Արլ. Գ-ի հայությանը /1918-ի, 1920-ի արշավանքները/: Հայկական հարց, էջ 232-238, 303-309: Տե՛ս Արամ Անտոնեան, Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները եւ Թալեղ փաշա, տպարան «ՊԱՅԱԿ», Պոսթըն, 1921, Նիկողայոս Ադոնց, Երկեր չորս հատորով, Հատոր Ա, Հայկական հարց, ԳՊԱՀ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, Հայագիտական բարեգործական ընկերություն, Երևանի Պետական համալսարանի հայոց պատմության ամբիոն, «Հայագիտակ», 1996: Գաբրիէ Լազեան, Հայաստան եւ հայ դատը, Հայկուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Աղանա», 1991: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, Հայկական հարցի եվ հայոց ցեղասպանության պատմություն, Հատոր Երկրորդ, Գիրք առաջին, Հայկական հարցը 1908-14 թվերին, Երևան, «Հայաստան», 2001: Գ.Ա.Գալոյան, նշված աշխ., էջ 183-184: Ավետիս Փափազյան, Ժամանակագրություն, էջ 10-15 և Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Հայկական եղեռնը Հունգարական անսագրի մեկնաբանությամբ, էջ 21, 23-24: С.Вранян, Армения между большевистским молотом и турецкой наковальной, Ереван, 1992, с.21 – 32; Генрих Фирюхоер, Армения 1915, с. 44 – 51, Рем Казанджян, К вопросу об оценке Московского русско – турецкого договора 1921г., Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, Ереван, 2001, с. 106 – 108 и Советско – Кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов Московских архивов, назв. сборник, XXI, Ереван, 2002, с. 109 – 110.

54 Ե.Քեօբահեանը Բ.Ղարազոյզյանին ուղարկած «15 դեկտ. 1986 Լոս Անճելըս» ամսաթվով նամակում գրում է. «Սիրելի՛ Քաջունի, ... Գոհ մնացի գրուած տեղեկութիւններէր, մանաւանդ Ս.Խաչ թաղի մատուօին մասին: Ես այդ մատուղ լաւ կը, յիշեմ սակայն հրաշապատում քարի պարագան չեմ գիտեր: Գորս [Աւագ Էթօբահեանի-Ի.Ա.]մասին տուած տեղեկութիւններդ ալ յատկանշական էր: Հետաքրքրական, միեւնոյն ատին սրտանճլիկ ձեր ընտանիքի անդամներու անցած փշալից ճանապարհի մանրամասնութիւնները... ախտ-ս, հազար ախտս, ցվերց կենդանի պիտի մնան այդ օրերու դառն յիշատակները...»: Ե.Քեօբահեանը Բ. Ղարազոյզյանին ուղարկած «26 ապրիլ 1987» ամսաթվով նամակից. «... Ինչպէս գրած էի, կը պատրաստիմ կենսագրականս որ թէև անձնական, սակայն ընդհանրական բնոյթ պիտի կրէ. արդէն մեծամասամբ լրացած է ու մեքենագրուած: Բեզ քանիցս յիշած եմ զքքիս մէջ, ըսելով, որ Ս.Խաչ թաղը կը բնակէիր և յաճախ կ'անցնէիր հորս խանութին առջևէն և թէ միայն պտոյտներու ալ զգացած եմք»: «... Այս ալ Քաջունին միշտ խտիուն, ծանրաբարոյ եւ բարեհամբոյր... Սիւս վերեւ յիշածներս էին իմ անմիջական ընկերներս, դպրոցէն ներս եւ թէ ալ ամէնօրեայ մեր խաղերուն եւ հանդիպումներուն ընթացքին: Ներկայիս անոնցմէ միայն երկուքը՝ Սկրտիչն [Գազանճեան- Ի.Ա.] ու Քաջունին կ'ապրին, առաջինը Բարիզ, երկրորդը Հայաստան...»: Ե.Քեօբահեան նշված աշխ., էջ 12, էջ 16-ի տողատակը, էջ 32: Տե՛ս Լիպարիտ Ազատեան, նշված աշխ., գիրք երկրորդ, էջ 37:

55 Ըստ Բ.Ղարազոյզյանի պատմածի Թամզարայից տեղահանելու ժամանակ, հարևան թուրք կանայք լաց էին լինում հայ երեխաների համար գոչելով Կախ, յավրում...

56 Ըստ Բ. Ղարազոյզյանի պատմածի Բեյուկին վնասելու համար, նա մանրադրամը /ն. դուրուշները/ զցել է զուգարանը:

57 Գարահիսարցիներու եւ շրջակայ կարգ մը գիւղերու ալիւրը կ'աղացւոր Թամզարայի գետափին շարուած ջրաղացներու մէջ: Վերջին տարիները հոն շինուած էր նաեւ ալիւրի արդիական գործարան մը: Արամ Հայկազ, էջ 22: Ս.Խ.Տովլեթեանի աշխատությունից տեղեկություն ենք քաղում ջրաղացների բանակի մասին. «Շրջակա չորս ջրաղացներ կ'աղային տեղույն ցորենը», էջ 27:

58 1974-ին Անկարա՝ ավագ քրոջը Ադրիենին, այցելելուց հետո Քաջունին պատմել է, որ այդ թուրքական ընտանիքում քրոջը պահել են իսկական խանութի պես: 1915-ի թուրքիայի պարկեշտ և անբիծ դուրս գալու համար մեծ հարսանիք սարքել, նշենք, որ թուրք մի քանի տարով էլ մեծ է եղել ամուսնուց: Այս ամենը հարուցել է թուրք տեղրակնոց նախանձը, թե ինչու եք այդ գյավուրին այդքան մեծարում:

59 Չդիմանալով Սուլթանական կառավարության քրիստոնեահալած քաղաքականությանը՝ մոտ 15000 հույներ դավանափոխ են լինում: Թուրքիայում ապրող 1,5 միլիոն հույներից 42000-ը, ըստ պատրիարքարանի տվյալների, բնակվում էին հայկական վիլայեթներում՝ գերազանցապես Էրզրումի և Ավազի: Ազատ Համբարյան, նշված աշխ., էջ 56: Ե.Քեօբահեանը գրում է. «Կը յիշեմ նաեւ, որ Մեծ Եղեռնի ճգնաժամային օրերուն, ի Թամզարա, հաւանաբար ուրիշ տեղեր ալ, շատ մը յոյն գիւղացիներ, հակառակ կառավարութեան խիստ հրահանգներուն եւ սպառնալիքներուն, ապաստան տուին հայ փախստական իլեակներուն եւ ատեն մը զանոնք պահեցին, մինչեւ որ անոնցմէ ոմանք յաջողեցան զանազան միջոցներով ազատ շունչ քաշել»: ... Հայ ժողովուրդը յաւէտ երախտապարտ կը մնայ ասպնջական Հելլադային, էջ 168-169: Հայերի ցեղասպանության վերջին արարը՝ հույն-թուրքական պատերազմի /1919-22/ ընթացքում հայերի կոտորածն էր Թուրքիայի արմ. շրջաններում: 1922-ի սեպտ. 9-ին թուրքերը մտան Իզմիր և տեղի հայերի ու հույների ջարդ կազմակերպեցին, խորտակեցին նավահանգստում կանգնած փախստականներով բեռնված նավերը: Հայկական հարց, էջ 131, 149, 308: Տե՛ս Յուշամատեան Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 891-893, 947:

60 Ընտանիքը կրում էր Տալի /Թալի/ ազգանունը՝ ըստ Հակոբ Ղարազոյզյանի տրամադրած թուրքերեն նամակների և լուսանկարներից մեկի հակառակ կողմում արած թուրքերեն մակագրության: Մեր ձեռքի տակ են Տալի ընտանիքի շուրջ երկու տասնյակի հասնող խմբանկարներ, որոնցից երկուսը լուսանկարվել են 1951-ին և 1954-ին և նախապես ուղարկվել են Ֆրանսիա՝ Քաջունու հորեղբոր աղջկան, ապա նոր Հայաստան:

61 Սուտաֆա Սաբրի Տալի

62 Ամուսնությունից հետո Ադրիենն կրել է Ֆաբրիե Տալի անունը: Ամուսնության արդյունքում ծնվել են չորս զավակներ՝ Ռեֆիկ, Իսմետ, Դողան անուններով տղաները և Սաբրիե անունով աղջիկը:

63 Այս նախադասությամբ էլ Քաջունին անվարտ է թողնում իր հիշողությունները՝ միզուցե հույս ունենալով, մեկ ուրիշ վերնագրի տակ շարունակել դրանք: Այդ իսկ պատճառով մենք ցանկանում ենք ավարտել Քաջունու հիշողությունները մեր ձեռքի տակ եղած բանավոր և գրավոր /մեքենագիր և ձեռագիր/ նյութերի, նամակների ու լուսանկարների օգնությամբ, որոնք պահվում են ԿԱԹ-ում: Շահնազարի Քաջունուն հասցեագրված նամակներից. «Հոկտ. 23, 1987. «Ճճնդավայրիցս դեպի Տեր Ջոր» հասցեագրված նամակներից. «Հոկտ. 23, 1987. «Ճճնդավայրիցս դեպի Տեր Ջոր» պատուով սկսայ կարդալ, շատ հետաքրքրական է և ներկայանալի հայերնո՞վ է գրի առնուած. եթէ համաձայնիս, կը խորհիմ զայն յանձնիլ Ջօրեան հիմնարկին, որպէս վաւերական զօրեղ վկայութիւն մը Եղեռնէն վերապրողի մը կողմէ գրի առնուած...», «14 մարտ, 1988. Լոս Անճելըս. Կենսագրականիդ այն մասը, որ ինձի տուած էիր. դեռ կը պահիմ, Ազատուհին [Շահնազարի կինը- Ի.Ա.] կ'ըսէ, որչ անկէ, որոշ մաս մը իմ զրքիս մէջ ներմուծեմ, իսկ Ջօրեան հիմնարկին տանք գիրքդ ամբողջութեամբ, երբ պատրաստ ըլլայ: Անշուշտ պետք է նկատի առնեմ զրքիս տարողութիւնը...», «Յունիս 7, 1988. ... Գալով կենսագրականիդ, ջանա, սրբագրութիւններէ ետք տպագրութեան

տաս. աշխատանքը գնահատելի և ներկայանալի է, նաև իբրև եղեռնի վկայություն կարելու է: Հող ալ, ինչպես դրկած թերթիկէր կը տեղեկանամ Գրողներու միութեան վարչութիւնը որոշում կայացրած է քեզ նմաններուն վկայութիւնները գրի առնիլ: Լա առիթ մըն է, թերեւս գիրքդ ալ տպագրին: Ճիշտ իրենց ուզածը: ...Դուն մեր աննման թամազարային օդն ես շնչած ու անմահական ջուրն ես խմած, ի՞նչ ըսիլ է տկարութիւն, քաջ եղիր, ուժեղդ հաւաքէ և գրքիդ գործն ալ յաջողցուր: Շահնագարի Հակոբ Ղարաբաղյանին հասցեագրված «7 Մարտ, 1990 Լոս Անճելոս» ամսաթվով նամակից. «...Քաջունին ևս կը ծրագրէր իր յուշերը տպագրութեան յանձնիլ, անոնց մէջ մաս մը էջեր ինծի դրկած էր. շատ լաւ ու շահեկան էին անոնք. ի՞նչ եղաւ, կրցա՞ւ գլուխ հանիլ»:

64 Քաջունու մահական լուրն ստանալուց հետո Շ. Քէօթահեանի «7մարտ,1990» ամսաթվով Հակոբ Ղարաբաղյանին ուղարկած նամակից:

65 Ք. Ղարաբաղյանի ձեռագիր նյութերի մեջ պահպանված այս հատվածը հեղինակը վերնագրել է «Յառաջաբանի փոխարեն», այդ իսկ պատճառով մենք նախընտրեցինք մեր միտքը սկսել այս տողերով: Պահպանված ձեռագիր հատվածները պահվում են ԿԱԹ-ում:

66 Տես տողատակ 41,43:

67 Օ.Սկրտչյան, 50 տարի ՍՍԿԿ շարքերում, Կյանքի իմաստը, «Բանվոր», Լենինական, 25 դեկտեմբերի 1982, էջ 2:

68 Լ.Ղուկասյան, նույնը, էջ 3:

69 Շ. Քէօթահեան, էջ 124:

70 Նույնը, էջ 131: Շ.Քէօթահեանը գրում է. «Մինչ այդ Near East Relief-ը իր գործունեությունը դադարեցուցած ըլլալով զայն փոխանցեց Near East Foundation-ին, որուն եւս որոշ ատեն մը ծառայել է ետք վերջ տրուեցաւ պաշտօնին. այդ 1932-ին էր...»: Նույնը, էջ 199: Տես Յուշամատենան Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 933-952: Տես Չարմինէ Պօղոսեան, Մերձավոր Արեւելքի Օգնութեան Հաստատութիւնը Near East Relief Foundation-NEF-NEF ցեղասպանութենէն վերապրողները փրկելու համար ԼԻՖ-ի-Ամերիկեան Մարդասիրական Ֆոնտին ծնունդը, հարցազրոյց «Հայեր Արմենիա», Բուրգաս, Բուլղարիա, Օգոստոս 25, 2003, էջ 3-4: Տես Армянский вопрос, с. 24 – 25.

71 Լիպարիտ Ազատեան, նշված աշխ, գիրք առաջին, էջ 32:

72 Շ. Քէօթահեան նույնը, էջ 139:

73 Ինքնակենսագրություն, էջ 1:

74 Շ. Քէօթահեան, էջ 341:

75 Տես տողատակ 18: Ինչպես տեսնում ենք, որպես ծննդավայր նշված է ոչ թե թամազարան, այլ Շապին Գարահիսարը:

76 Մեր կարծիքով, բավականին ուշագրավ են նաև Ք. Ղարաբաղյանի հաղորդած ազգագրական տեղեկությունները, որոնք մեր կողմից ամփոփված են տողատակներում «Սվազ տեղափոխվելուց հետո, - ասում է ավազ դուստրը, - հայրս տեսել է բաժված կարտոֆիլի կլեճներ և խիստ զարմացել, թամազարայում ապրած տարիներին, ընդունված չի եղել կարտոֆիլը կլալել, այն նախապես խաշել են, ապա մաքրել և լցրել ճաշի մեջ: Չէին օգտագործում նաև հում լուլիկ: Հայրս հիշում էր, որ հարևանութիւններից մեկը աղմուկ և լաց ու կոծ էր բարձրացրել, երբ տեսել էր իր մանկահասակ երեխային լուլիկ ուտելիս»:

77 Սուրեն Բաղդասարյան, Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 14-15:

78 Յուշամատենան Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 948:

79 Շ.Քէօթահեան, էջ 154: Լոգանի կոնֆերանսը կայացել է 1922-ի նոյեմբերի 20-ից 1923-ի հուլիսի 24-ը /ընդմիջումով 4.II-22.IV/ ընկած ժամանակահատվածում Հվեյցարիայի Լոգան քաղաքում, Армянский вопрос, с.216 – 217; Տես Յուշամատենան

Մեծ Եղեռնի, 1915-65, էջ 1007-1012: Ավետիս Փափագյան, ժամանակագրություն, էջ 17: Վահան Բայրուրդյան, XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, «Չանգակ-97», Երևան 2002, էջ 5: С. Вратян, назв. Работа, с.132; Генрих Фирсбахер, Армения 1915, с. 70 – 71.

80 Լիպարիտ Ազատեան, նշված աշխ, գիրք առաջին, էջ 36-37; 39: Ինչպես տեսնում ենք Ա.Ազատեանի տեղեկությունները հարաբերողի որբերի տեղափոխության վայրի մասին հակասում են «Յուշամատենան Մեծ Եղեռնի, 1915-65» աշխատությունից բերված տեղեկություններին:

81 Շ.Քէօթահեան նույնը, էջ 342: Տես Լ. Ազատեան, նշված աշխ, գիրք երկրորդ, էջ 38:

82 Շ.Քէօթահեան, նույնը, էջ 138: Տես Լիպարիտ Ազատեան, նշված աշխ, գիրք առաջին լուսանկարները:

83 Շ.Քէօթահեան, նույնը, էջ 126-129: Լիպարիտ Ազատեանը գրում է. «Այս գոլճ-որբանոցին դիմացը կար մեծ աշխատանոց մը, ուր մեծ որբերը, դպրոցէն ետք, կ'ուսանէին ատաղձագործութիւն, կօշկակարութիւն եւ դերձակութիւն: Առանձին աղջկանց նախակրթարան վարժարան-որբանոց մըն ալ կար նախկին Հայկական Ազգային հիւանդանոցին տեղը: Ո՞րիչ մը, չափահասներու տունը՝ երիտասարդ կիներ գորգ գործել, կարել, հիւսել եւ տնային տնտեսութիւն կը սորվէին: Ամերիկեան Միսիոնարական հիւանդանոցը, որ մօտիկ էր որբանոցին, կը հասներ որբերուն եւ հայերուն՝ նոյնիսկ երբեմն թուրքերու կարիքներուն: Մանչ ու աղջիկներուն որբանոցները Սվազի մէջ կը փակուին 1922-ի վերջերը»: Նշված աշխ, գիրք առաջին, էջ 32-33:

84 Սվազի որբանոցի երկու խմբանկարներ հրատարակված են Արամ Հայկազի ժողովածուում, էջ 325, 331: Այս չափնզարահիսարցի որբերի մեջ են Քաջունին /էջ 325/ և Համեստուհին /էջ 331/:

85 Ըստ ավազ դուստր պատմածի հայրը այնքան ամաչկոտ է եղել, որ ի տարբերություն մյուս շրջիկ լրագրավճառների, որոնք վազում էին մեքենաներին և մարդկանց ընդառաջ, շատ քիչ թերթեր և լրագրեր էր կարողացել վաճառել:

86 Ք. Ղարաբաղյան, Դրանք, իսկապես, հրաշքի են նման..., «Բանվոր», Լենինական, 25 նոյեմբերի 1970, էջ 3:

87 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 452-453: Կ.Պոլսում 1915-ից հետո հրատարակվել են «Մանգուն-ի էֆլյար» /Կարծիքների շարք/ մինչև 1917-ը, ամենօրյա «Բյուզանդիոն» մինչև 1918-ը, 1908-ից պարբերաբար ընդհատումներով «ժամանակ» հայկական թերթերը, «Առավոտ» մանկապատանեկան ամսագիրը և այլն: Армянский вопрос, с. 88,175,222. ՀԱՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 273: Տես Маржа Нейман, Армяне, с.86:

Սահակյան Տիգրան /ԳՅԹԻ/, Մամուլի գրաքննություն Օսմանյան թուրքիայում Մեծ եղեռնի տարիներին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երիտասարդ արևելագետների հանրապետական XXII գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, Երևան, 2001, էջ 44-45: Շ.Քէօթահեանը գրում է, թե «Մոմի մը համար...» վերնագրով «Առաջին գրութիւնս դրկած էի Պոլիս, «Առաւօտ» անունով մանկապատանեկան ամսագրին ուր հրատարակուէր էր արդէն, շուտով խնամալ այդ թիւը 1920-ի մէջ եւ ձեռքէ ձեռք անցաւ: Ափսոս, որ այդ թիւը կորուսեցաւ, չեն գիտեր ինչպէս: էջ 130: Արամ Հայկազը գրում է. «Այս նկարի բնագիրը գտանք Պոլիս, Զինադադարէն վերջ հրատարակուած հայերէն թերթի մը մէկ կտրոնին վրայ»: ժամոթ., էջ 402: Ներկայումս Կ.Պոլսում Ստամբուլ հրատարակվում է 16 ամիս պարբերական «Շողակաթ» տարեգիրքը, «Պայքար», «Փոքածնք» շաբաթաթերթերը, «Պարտեզ» մանկական ամսագիրը, «Քուլիս» կիսամյա հանդեսը, «Մարմարա» /1940-ից/, «ժամանակ» լրագրերը և այլն: Դրանցից մի քանիսն ունեն սեփական տպարաններ,

ուր տպագրվում են տեղի գրողների՝ Գ. Մճուրու, Զահրատի, Ս. Թճկրյանի գրվածքները: ԴՄԻ, հ. 5, Երևան, 1979, էջ 619, ԴՄԻ, հ. 7, Երևան, 1981, էջ 328:

88 Գ. Գյոնջյան, Աշխատանքի վեներանը գնաց թոշակի, «Բանվոր», Լենինական, 26 հոկտեմբերի, 1967, էջ 3; Լ. Ղուկասյան, նշված աշխ., էջ 3-4:

89 Օ. Մկրտչյան, նշված աշխ., էջ 2:

90 Տես Ինքնակենսագրություն, էջ 1-2:

91 Բ. Ղարազյոզյան, Գարնանային հոգսեր, Այգուև տեր է պետք, «Բանվոր», Լենինական, 1 ապրիլի, 1969, էջ 3:

92 Օ. Մկրտչյան, նշված աշխ., էջ 2; Գր. Իկիլիկյան, Բնության սիրով Գրաշագեղ պարտեզը, «Բանվոր», Լենինական, 15 նոյեմբերի, 1985, էջ 3:

93 Տես տողատակ 18: Քաջունու դուստրերը պատմեցին, որ իրենց հայրիկի խնդրանքով Փերուզ հորաքույրը հաճախ «Երկրի» զանազան ուտեստներ էր պատրաստում: Քույրերի հիշողության մեջ առանձնահատուկ տպավորվել են խմորեղեններից սառը բուրման և ղադախիքը, ճաշատեսակներից՝ ճճճղաշաքրով պատրաստված ջրալի ճաշը, որին խառնում էր նախապես յուղի մեջ տապակված տավարի միս կամ երշիկ և եփում մինչև զանգվածը ստանա շիրայոտ տեսք: Խմորեղենների մեջ, ըստ պատմածի, գերիշխում էր յուղը, մեղրը և պոպուկ: Փերուզ հորաքույրը պատմում էր, որ Թամզարայի հայ բնակչությունը շատ էր օգտագործում բանջարեղեն:

94 Շ. Քեօրահեան, էջ 121:

95 Армянский вопрос, с. 274.

96 1975-84-ին ASALA-ի /ԴՄԳԲ/ ահաբեկչությունը ցնցեց աշխարհը, որի պատճառով հանրության ուշադրությունը սեռեցվեց հայկական հարցի և հայ դատի վրա: Ըստ Բ. Ղարազյոզյանի երեխաների հաղորդած տվյալների՝ Զամեստուիին արդեն մահամերձ զանված էր անկողնում, երբ հարցազրույց տվեց ֆրանսիական ռադիոյին: Նա ֆրանսիական հանրությանը տված իր վկայության մեջ պատմեց XX դարի սկզբին երիտթուրքերի իրականացրած խոշորագույն ոճրագորության մասին, որի ակնատեսն էր դարձել վաղ հասակում, անցնելով հայկական կոտորածների միջով, մազապուրծ եղել՝ կորցնելով ամեն ինչ... Մեր կարծիքով, այս հարցազրույցը տեղի է ունեցել 1981-ին, երբ Ֆրանսիան ցնցվեց Փարիզի թուրքական հյուպատոսարանի գրավումից /1981-ի հոկտեմբերի 24-25/, որը պատմության մեջ մտավ «Վան» գործողություն անվամբ: Армянский вопрос, с. 35: Սեդա Գրպանյան-Մելքոնյան, Մոնթե Սելբոնյան, Իրականություն, ԱՍԱԼԱ-հեղափոխական շարժում, 1992, էջ 24-25, 93; Վարդգես Գասպարեան, Բացառիկ հանդիպում, «Վան»-ից մինչև Վան, Գարգազոյց Վազգեն Մալեանի հետ, «Ժողովրդային պայքար», Աթենք, յուլ.-օգոստ.-սեպտ., 1990, էջ 10-11:

97 Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

98 Ըստ Քաջունու ավագ դստեր հայտնած տեղեկությունների՝ Քաջունին Ֆրանսիայի հետ ունեցած նամակագրական կապի պատճառով մի անգամ կանչվել է ՊԼԿ-ի գրասենյակ:

99 Շ. Քեօրահեան, էջ 342: Տես Լիպարիտ Ազատեան, նշված աշխ., գիրք երկրորդ, էջ 38:

100 Շ. Քեօրահեան, նույնը, էջ 120-121, 137, 172-173:

101 Նույնը, էջ 342:

102 Բ. Ղարազյոզյանի «Կարոտ /ճանապարհորդության մտորումներ/» ձեռագիր հատվածից:

103 Այժմ Կ. Պոլսում Ստամբուլ, բնակվում է մոտ 55000 հայ: Գայ համայնքը կառավարվում է հայ պատրիարքի կողմից, գործում է համայնքի ժողովը: Կան հայկական դպրոցներ, մշակութային, սպորտային կազմակերպություններ: Армянский вопрос, с. 209. Այս տվյալներին ճիշտ հակառակ, Զ. Ա. Կիրակոսյանը բերում է Մոսկվայում 1975-ին իրատարակված տեղեկատուի տվյալները:

В справочнике "Турецкая республика", подготовленном советскими учеными, сказано: "Из двух млн. армян, живших в Турции до первой мировой войны, в 1965г. осталось, по официальным данным 33000. Многие армяне, как и другие национальные меньшинства скрывают свою национальную принадлежность". Дж. С. Киракосян, Младотурки перед судом истории, "Айастан", 1989, с. 10.

104 Շ. Քեօրահեան, նույնը, էջ 120-121, 137, 172-173:

105 Շ. Քեօրահեան, էջ 124:

106 Տես տողատակ 62:

107 Շ. Քեօրահեան, էջ 342:

108 Սարդին աշխատանքի ուսուցման ուսուցչուհի էր և քեռու հետ Գայաստան էր ուղարկել իր ձեռքի աշխատանքները: Այդ գեղեցիկ թոնիչները մինչև հիմա էլ մեծ փայլալայանքով օգտագործում են խոհանոցում անընդհատ հիշելով այս պատմությունը:

109 Գավառաբար այստեղ խոսք է զեռում Բ. Ղարազյոզյանի կողմից «Բանվոր» թերթի խմբագրությանը ուղղված «Ուշադրությանը արժանի հարցեր» վերնագրով նամակի մասին, տես Բ. Ղարազյոզյան, Նամակ խմբագրությանը, Ուշադրությանը արժանի հարցեր, «Բանվոր» Լենինական, 3 սեպտեմբերի 1968, էջ 2:

110 Լ. Ղուկասյան, նշված աշխ., էջ 3-4:

111 Նույնը, էջ 4:

112 Եփրատի ափերով՝ Տեր Զորի ճանապարհին /հուշեր մեծ եղեռնի օրերից/, էջ 6:

113 Ավագը Շահնագարի որդին է:

113 Այս մտքով Բ. Ղարազյոզյանը ավարտում է 1968-ին գրված «Եփրատի ափերով Տեր-Զորի ճանապարհին /հուշեր մեծ եղեռնի օրերից/» աշխատությունը, էջ 6-7:

«Գայկական հարց» հանրագիտարանից արված մեջբերումների համառոտագրու-

թյունները տես համանուն հանրագիտարանում: Քարտեզ, Գայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին /1914-1916թթ./, Բ. Գ. Գարությունյան, Երևան, 1980:



1910-11թթ., Թամգարա կամ
Շ.Պարահիսար: Չախից աջ՝ Ադրինե,
Հայկանուշ, Տիգրանուհի, կենտրոնում
Քաջունին:




Որբանոց, կենտրոնում՝ Քաջունին,
16.IX.1922




1924, VI Պոլիս



Ավագի որբանոց, ձախից Քաջունին,
աջից՝ Քաջունու հորեղբոր աղջիկը
Համեստուհին



Ավագի որբանոցի շենքը (փոստային բացիկ)



Ավագի որբանոց, 1922-ի աշուն



Ավազի որբանոց, վերևից ներկրորդ շարք, աջից երրորդը՝ Յամեստուհին:




Ավազի որբանոց, վերևից առաջին շարք, չորրորդը՝ Բաջունին:




Կ.Պոլիս, Լրագրավաճառ Բաջունին
1923թ. Մայիսի 5



Կ.Պոլիս, 1923թ.



Չախից՝ Բաջունին, աջից Ասատուրը
11.V.1924թ.



Ասատուրի մակագրություն



1940-ական թթ.:



Չախից Աղրինեն, աջից Շ. Բեթահեանի ջույր Աղվիթան, Անկարա, 1970թ.:



Աջից առաջինը՝ Շահնազար Բեթահեան, ձախից առաջինը՝ Փերուզ հորաքույր, երկրորդը՝ Քաջունին՝ իր ընտանիքի հետ, Լենինական, 1986թ.:



Նստած՝ Աղրինեն՝ Ֆաբրիե Տալի և անուսինը՝ Մուստաֆա Սաբրի Տալի: Կանգնած՝ Իսմետ, Ուեֆիկ, Սաբրիե, Դողան զավակները, 12.12.1954թ.:



Չախից աջ՝ Քաջունին, Համեստուհի և Սուրեն Սահակյանները, Երևան, 1967թ.:



Քաջունին ավագ որդի՝ Լորայրի հետ:



Քաջունին զավակների հետ, Լեւինական, 1970-ականների կես:




Չախից Քաջունին, 1928-ի, օգոստոս:



Չախից Ե. Բէօթահեանի քույր՝
Շամիրամը, աջից՝ Քաջունին, Ստամբուլ,
1974թ.:



Քաջունին Ադրիենի ընտանիքի հետ, Անկարա, 1974թ.:



Արևմտահայության բռնաճարձն ու կոտորածները 1915-1916 թթ.



Քաջունու թոնուտի Գոհարը (Կրակով 2004 սեպտեմբեր)



Աղրինեն, Անկարա, 1970-ականների սկիզբ:



Համեստուտի (ձախից առաջինը՝ նստած) և Սուրեն (կենտրոնում՝ կանգնած) Սահակյանների ընտանիքը, Լիոն, 1950-ական թթ.:

Բովանդակություն

Երկու խոսք..... 3
Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր..... 5
Սեբաստիայի որբանոցից Սայր-Ղայաստան,
ավագ քրոջորոնումն ու հայտնաբերումը.....36
Վերջարանի փոխարեն..... 53
Ծանոթագրություններ..... 56
Լուսանկարներ
Քարտեզ..... 74

Հարգելի ընթերցող Ձեր առաջարկությունները ու
ցանկությունները կարող եք ուղարկել՝ artakh@web.am

Авагян Инга Эдуардовна
Из отчего дома - в Тер Зор

Ավագյան Ինգա Էդուարդի
Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր

Գլխավոր խմբագիր՝

Լավրենտի Բարսեղյան

Խմբագիրներ՝

Պարույր Ջաքարյան

Ստեփան Տեր-Սարգսյան

Թարգմանությունը թուրքերենից՝

Անահիտ Մարդոյանի


Սրբագրիչներ՝

(արևելահայերեն) Կարինե Գևորգյան

(արևմտահայերեն) Ռոզա Հովհաննիսյան

ՀՀԾ .դր՝ Եղևնուհատիկի Գրականությունի Կենտրոն

Գրականության Կենտրոնի Կենտրոնի Կենտրոն



9(47.925)
2h-77

h2